

ԳՈՒՐԳԵՆ ԷՆՏՈՆՑԷՆ

Ն Ի Զ Ա Մ Ի Ն

ԵՎ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խ Ջ Ն Ր Ն Ն Ե Ր

894.362

10219

[Library]

U-62

Անդրանիկ Գ.


Արկարի և Զոհ օրհնական


հոգեհոգ.

102.

14/81

137





ԳՈՒՐԳԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ

894.362.092 [Զեկարտ]

12

ՄԱՐԿԱԿԱՆ Է 1961 թ.

10219
Ն Ի Զ Ա Մ Ի Ն

ԵՎ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

A II
32054



Ա. Զ. Ե. Դ. Ն. Ե. Դ.

ԲԱՐՈՒ — 1947.

Редактору: Н. Амирханян

Чапа имзаланмыш 13/VIII-47. Чап листи 7,75. Нәшрийят листи 6,75. Бир
чап. листиндәки нәрфләрин сайы 34840. ФГ 07087. [Сифариш № 804.
Тираж 3.000

Азәрнәшр мәтбәәси, 26-лар адына „Китаб Сарайы“, Баки, Әли Байрамов
күчәси № 1.

Азәрбайҗан ССР НС янында Полиграфия вә Нәшрийят ишләри идарәси.

ԵՐԿՈՒ ԽՈՄԲ

Անդրկովկասի ժողովուրդները՝ ադրբեջանցիները, հայերը և վրացիները անհիշատակ ժամանակներից եղել են բախտակից ժողովուրդներ, ենթակա միևնույն պատմական հանգամանքների ազդեցությանը: Հասարակական գոյավիճակի հարազատության շնորհիվ այդ ժողովուրդների ստեղծած կուլտուրայի և գրականության մեջ առաջացել են ընդհանուր, հարազատ շատ գծեր, որոնք սերտ առնչվում են իրար հետ:

Դեռ անցյալ դարի 60-ական թվականներին Միքայել Նալբանդյանը նշելով այդ հարևան ժողովուրդների հոգեւոր կուլտուրայի և գրականության հարազատությունը գրել է. «Երկուքն էլ ասիացիք, երկուքն էլ արևելքիք և խորհելու, խոսելու ձևերով բնականապես մոտ. պատճառ, ինչպես ասացինք, անխտիր միևնույն պայմանների տակ են ապրում: Ով որ միայն ազգը ազգից բաժանում է անունով և կրոնով, այնպիսին չէ կարող պատասխանել կամ մեկնել, թե ինչ է այն երևույթի բնական և հոգեբանական պատճառը, որ թուրքը համ է առնում հայ վհատ և աղիոզորմ խաղերից, տաղերից, ինչպես և հայը թուրքի խաղերից, բայց երկուքն էլ անզգա Բեդհովենի սիմֆոնիաներին, երկուքի համար էլ Մոցարտի Դոն-Շուանը «Ջայն բարբառոյ յանապատի»: Երկուքն էլ հազար փառքով նախընտիր են համարում երգել. «Ափսոս քեզ հայոց խեղճիկ ժողովուրդ», կամ «Կուռնկ ուստի կուգաս» և Գեոզլուի «Այվազն գյումիշ բչաղը», Գյարամի և Աշըղ-Կարիբի խաղերը»:

Քաղաքների և առևտրի զարգացումը, դեմոկրատիայի ուժեղացումը Անդրկովկասում մեծապես նպաստել է այն բանին,

որ սկսած 10-րդ դարի վերջերից Անդրկովկասի ժողովուրդները ապրեցին գրականության բուռն զարգացման շրջանը:

Միջնադարյան սխոլաստիկայի, կրոնական միստիցիզմի հաղթահարումը, հումանիզմի և աշխարհիկ մտածողության վերականգնումն ու հաղթանակը գեղարվեստական գրականության մեջ, ինչպես նաև անտիկ Հունաստանի արվեստի և փիլիսոփայության ուսումնասիրումը ավելի վաղ սկսել է կովկասյան ժողովրդների, քան Արևմտա-եվրոպական գրականության մեջ:

10-րդ դարի 2-րդ կեսին հայ ժողովրդի առաջին մեծ բանաստեղծը՝ Գրիգոր Նարեկացին արդեն անցում է կատարում կրոնական-միստիկական պոեզիայից դեպի աշխարհիկ պոեզիան: Նրա լիրիկայի մեջ արտահայտված են իրական կյանքի պառկերները: Նա երգում է բնությունը, փառաբանում կնոջ գեղեցկությունը, իր ստեղծագործությունների մեջ վերաբրտադրելով մարդկային հույզեր ու զգացմունքներ: Գրիգոր Նարեկացու գրական ժառանգությունը իրավունք է տալիս մեզ ասելու, որ նա ամփոփեց մեր հին շրջանի գրականությունը և վաղ վերածնությունից առաջին մեծ բանաստեղծը եղավ:

12—13-րդ դարերում կովկասյան իրականության մեջ հաղթանակում է աշխարհիկ գրականությունը: Նիզամիի սիրավեպերը, Ռուսթավելու պոեմը, Վարդան Այգեկցու առակները, Ֆրիկի և Կոստանդին Երզնկացու լիրիկան բացում են գրականության նոր արշալույսը: Կրոնական գրականությունը մեզ մոտ՝ Անդրկովկասում զիջում է իր դիրքերը աշխարհիկ, հումանիստական գրականությանը այն ժամանակ, երբ ամբողջ Նվառոսյան խարխափում էր միջնադարյան խալիֆի և կրոնական-միստիցիզմի մեջ:

12-րդ դարը նաև վրացական ու ադրբեջանական գրականության բուռն վերելքի ժամանակաշրջանն էր: Այդ էպոխայում հանդես եկան համաշխարհային գրականության մեծագույն տիտանները՝ Ադրբեջանում Նիզամի Գյանջևին, իսկ Վրաստանում Շոթա Ռուսթավելին:

Համաշխարհային գրականության մեջ Նիզամին ուժանտիկական պոեզիայի ամենամեծ ներկայացուցիչներից մեկն է,

հանճարեղ էպիկ և լիրիկ բանաստեղծ: Նիզամիի պոեզիայի հիմ-
քում ընկած են համամարդկային առաջավոր գաղափարներ՝
ջերմ հայրենասիրություն, հումանիզմ, անկաշառ, անբիծ սեր,
անհատի զգացմունքների ազատագրումը ֆեոդալական և կրո-
նական կաշկանդումներից, ժողովուրդների խաղաղ կենակցու-
թյան գաղափար, սեր դեպի մարդը՝ առանց ցեղային և կրոնա-
կան տարբերության: Նիզամին զարգացնում է այն միտքը, որ
սիրո զգացմունքը ավելի հզոր է, քան կրոնական հավատը, որ
մարդկային սերը խորտակում է կրոնական արգելակները: Դրանք
այնպիսի մոտիվներ են, որոնք եվրոպական գրականության մեջ
երևան եկան միայն հետագայում, Նիզամուց շատ ավելի ուշ՝
Դանտեի, Պետրարքայի, Բոկաչիոյի, Շեքսպիրի և այլոց մոտ:

Միջնադարյան հայ, վրացական, ադրբեջանական գրականու-
թյունը եղել է միանգամայն ինքնուրույն գրականություն՝,
որը ոչ մի կախում չի ունեցել եվրոպական պրականությունից,
և շատ քիչ բան է վերցրել Արևելյան (իրանական և արաբա-
կան) պոեզիայից: Վերջիններից եթե վերցրել է, ապա տվել էլ է:

Միջնադարյան հայ, ադրբեջանական, վրացական պոեզիան՝
Նաբեկացու, Ֆրիկի, Խազանու, Նիզամու, Ռուսթավելու լիրիկան
Վալերի Բրյուսովի արտահայտությունը Կովկասյան եղբայրական
ժողովուրդների «բզու հաղթանակն էր» համաշխարհային գրա-
կանության մեջ:

Նիզամին հսկայական հետք է թողել համաշխարհային գրա-
կանության մեջ. Գյոթեն իր «Արևմտա-եվրոպական դիվանի»-ի
մեջ դարմանալիորեն ջերմ սողեր է նվիրում Նիզամիին...

Այդ հիանալի տողերով մենք կարող ենք դատել, թե ինչպի-
սի հսկայական ազդեցություն է ունեցել Նիզամին Գյոթեի
վրա...» — գրում է Մարիետա Շահինյանը (տես «Խորհրդային
գրականություն» 1940 թ. № 4—5, էջ 204):

Ավելի մեծ ազդեցություն Նիզամին թողել է Արևելյան ժո-
ղովրդների գրականության վրա:

Նիզամիի ստեղծագործության հետքերը բացորոշ նկատելի
են նաև հայ գրականության մեջ: 13-րդ դարից սկսած բազ-

մաթիվ հայ գրողներ օգտվել են Նիզամիի թեմաներից, ոգևորվել են մեծ ազդեցւանցու կերտած փայլուն գեղարվեստական կերպարներով:

Մեր ներկա գրքուկը մի փորձ է ցույց տալու, թե ինչպիսի հետք է թողել Նիզամին հայ գրականության մեջ, ինչպես են մշակել հայ գրողները նրա ստեղծագործության թեմաները, ինչպիսի փոխազդեցութիւններ կան երկու եղբայրական ժողովուրդների գրականության մեջ այդ ժամանակաշրջանում:

ԳԼՈՒԽ I

Արաբական Խալիֆատի երկարամյա տիրապետությունից և սելջուկ-թաթարների ավերիչ արշավանքներից հետո, Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը ոչ միայն ազատագրվում են օտարերկրյա զավթիչների տիրապետությունից, այլև 12-րդ դարում այնքան ուժեղանում են, որ մասնակիորեն վերականգնում են իրենց պետական անկախությունը:

12-րդ դարի 2-րդ կեսին, մանավանդ Թամարա թագուհու (1184 – 1213 թ. թ.) գահակալության ժամանակ Վրաստանը, աննախընթաց կերպով հղորանալով, դառնում է Արևելքի ազդեցիկ պետություններից մեկը: Վրաց ժողովրդի քաղաքական և տնտեսական անկախությունը մեծապես նպաստում է գրականության, արվեստի և կուլտուրայի զարգացմանը: Եվ ահա, Թամարա թագուհու ժամանակն էր, որ հանդես եկավ վրաց ժողովրդի ամենամեծ բանաստեղծը՝ հանճարեղ Շոթա Ռուսթավելին, որի «Վաղբենավորը» իր բովանդակությամբ և գեղարվեստական արժանիքներով դասվում է Հոմերոսի «Իլիականի» ու «Վոդիսականի», Ֆիրդուսու «Շահ-Նամեի», և համաշխարհային էպիկական գրականության այլ դասական ստեղծագործությունների շարքը:

Վրաստանի հղորացումը և կուլտուրական վերելքը անսլացման բախտորոշ դեր խաղաց նաև հարևան երկրների՝ Ադրբեջանի և Հայաստանի պետական անկախության վերականգնման և տնտեսության ու կուլտուրայի զարգացման համար:

Վրացական եղբայրական ժողովրդի օգնությամբ Հայաստանում ստեղծվում է հայկական իշխանություն՝ Զաքարյանների

դինաստիայի գլխավորութեամբ, որոնք եկեւ էին վրաստանից:

Քաղաքական բարենպաստ պայմանների շնորհիւ Հայաստանի հյուսիսային շրջաններում առաջանում են մի շարք կուլտուրական օջախներ՝ Սանահինի և Հաղպատի վանքերում և Սյունյաց երկրում:

5-րդ դարի փառավոր մատենագրութեանից հետո 12-րդ դարում սկսվեց հայ գրականութեան վերելքի մի նոր շրջան:

Նախասովետական շրջանի գրականագիտութեանը 5-րդ դարը համարելով հայ գրականութեան «Ոսկե դարը», «արծաթե դար» է անվանել 12-րդ դարը: Այդ էպոխայում նորից ծաղկում է հայկական ճարտարապետութեանը, դարգանում է մանրանկարչութեանը, հանդես են գալիս բազմաթիւ գրողներ՝ բանաստեղծ Ներսես Շնորհալին, Նիզամիի համաքաղաքացի, նշանավոր առակախոս և իրավաբան Մխիթար Գոշը, իսկ 13-րդ դարում՝ Վարդան Այգեկցին, Ֆրիկը, Կոստանդին Ներչևադցին և մատենագիր Կիրակոս Գանձակեցին:

12-րդ դարի առաջին կեսին Աղբրեջանի հարավում իշխում էին աղբրեջանական աթաբեկները, որոնց մայրաքաղաքն էր Թավրիզը, ֆեոդալական միջնադարի նշանավոր կուլտուրական և անտեսական կենտրոնը Արևելքում: Թավրիզից բացի, աթաբեկները իշխում էին Նախիջևանում, Բարդայում և Գյանջայում, որոնք նույնպես այն ժամանակի նշանավոր կուլտուրական կենտրոններն էին հանդիսանում:

Աղբրեջանի հյուսիսային մասում հղորանում են Շիրվանշահերը: Շիրվանի պետութեանը՝ Շամախի մայրաքաղաքով 12-րդ դարի 2-րդ կեսին այնքան է ուժեղանում, որ կարողանում է իր տիրապետութեանը տարածել նաև աղբրեջանական մյուս ֆեոդալական իշխանութեանների վրա: Աղբրեջանի նշանավոր քաղաքները՝ Թավրիզը, Գյանջան, Բարդան, Շամախին, Դերբենդը գտնվելով տրանզիտային առևտրական ճանապարհների հանգույցակետում, դառնում են արհեստների և առևտրի խոշոր կենտրոններ:

Արհեստների, առևտրի և ընդհանրապես քաղաքային կուլտու-

բայի բարդացումը վճռական ազդեցութեամբ ունեցաւ ազրբեջանական գրականութեան զարգացման վրա ընդհանրապէս, բացի այդ, մեծ նախնական նպաստեց նրա աշխարհականացմանը:

Այդ քաղաքներէից հատկապէս Շամախին՝ հյուսիսում և մասնավանդ Գյանջան՝ հարավում դառնում են խոշոր գրական-կուլտուրական կենտրոններ: Նիդամիի ժամանակի Գյանջան ունեցել է հարյուր հազարից ավելի բնակիչ: Արևելագետ Ե. Բերտելսը գրում է. «... Կովկասում Գյանջան դուրս եկավ առաջին տեղը: Թեպետ և վրացական սահմանում գտնվելը հարձակումների սպառնալիքի տակ էր դնում նրան և ստիպում էր նրա բնակիչներին շարունակ պատրաստ լինել պաշտպանութեան, բայց այդ նույն դրութեանը շերամապահութեան զգալի զարգացման կապակցութեամբ զգալի օգուտներ էլ էր տալիս: Որ այդ քաղաքը խիստ աճել և այն ժամանակվա մասշտաբով բացառիկ խոշոր կենտրոն էր դարձել, ցույց է տալիս թեկուզ հենց պատմաբանների մոտ պահպանված հիշատակումը 1138—39 թ.թ. տեղի ունեցած երկրաշարժների մասին: Ժամանակագիրները պնդում են, որ այդ աղետի ժամանակ կոտորվել են երեք հարյուր հազար, կամ 230 հազար հոգի»:

Ննթադրենք, որ այդ թիվը խիստ նախադանցված է, բայց եթե նույնիսկ մի քանի տնգամ կրճատելու լինենք այն, ապա, նկատի ունենալով, որ երկրաշարժից ամբողջ ազդաբնակչութեանը չի կոտորվել, այսուամենայնիվ հարկ կլինի խոստովանել, որ դա նախադանց խոշոր քաղաք է եղել»։ («Սորհրդային գրող» ամսագիր, Բազու, 1939 թ., № 4, էջ 56):

12-րդ դարի ազրբեջանական գրողների մեծ մասը ծնվել կամ աղրել և ստեղծագործել են Գյանջա և Շամախի քաղաքներում: 12-րդ դարումն են ստեղծագործել ազրբեջանական ժողովրդի նշանավոր բանաստեղծներ Մեհսեթի խանումը, Ֆեւքի Շիրվանին, Իզգեդին Շիրվանին, Աթուլ-Ալա Գյանջին, Թումանյանի սիրելի պոետը՝ Խազանի Շիրվանին և ազրբեջանական պոեզիայի ամենամեծ ներկայացուցիչը՝ Նիդամի Գյանջիվին:

Ամբողջ Արևելքում հռչակված բանաստեղծ Նիդամի Գյանջիվի մասին կենսագրական սուղ տեղեկութեաններ կան, մասնա-

Վանդ գրավոր աղբյուրների մեջ: Այդ թերին մասամբ կարելի է լրացնել Նիզամիի մասին պահպանված ժողովրդական բաղմամբ թիվ, ավանդություններով:

Մի լեզենդայից երևում է, որ Նիզամին շատ համեստ, աղքատ կյանք է վարել: Ըստ այդ ավանդության, նա ապրում էր քարայրում և նրա ամբողջ կայքն ու կարողությունը կաղմում էին խսրից անկողինը, գրքերը և եղեգնյա գրիչը:

Նիզամին մեծ հռչակ և հարգանք էր վայելում ոչ միայն ժողովրդի մեջ, այլև նրան պատկառանքով էին վերաբերում մինչև իսկ երկրի տերերը: Մարիետտա Շահինյանը, հնագույն աղբյուրներից օգտվելով, պատմում է այսպիսի մի գրույց. 1187 թ. Աղբրեջանում իշխող աթաբեկ Կըղըլ-Արսլանը ուզում է տեսնել նշանավոր բանաստեղծին և կանչում է նրան իր մոտ: Բայց Նիզամին, որ արդեն հեռացել էր մարդկանցից ու խոր մենակության մեջ էր ապրում, չի ցանկանում գնալ աթաբեկի ապարանքը: Այդ ժամանակ աթաբեկը որոշում է անձամբ գնալ նրան այցելության: Կենսագիրները պատմում են, որ երբ նա մոտեցավ բանաստեղծի կացարանին, Նիզամին, որ մարդկանց տեսիլ առաքելու շնորհք ուներ, հետևյալ պատկերը ներշնչեց աթաբեկին.—նրա առաջ հանկարծ երևաց ճոխ ապարանք՝ լի հարյուր հազարանոց պորքով, արքայական գահով, որի վրա թաղմած էր բանաստեղծը: Այս տեսիլքի շուրջ ու պերճանքն այնպես են շքմեցնում Կըղըլ-Արսլանին, որ նա ընկնում է Նիզամիի ոտները, բայց այդ միջոցին տեսիլքը չքանում է և աթաբեկը իր առջև տեսնում է մի քարայր, որի մուտքի մոտ, խոռի վրա, նստել է մի հյուսված ու նիհար ծերունի, իսկ նրա առջև մի գիրք, թանաքաման, եղեգնյա գրիչ ու ցուպ:

Դրանից հետո,—պատմում են կենսագիրները,—աթաբեկը մեծ հարգանք սկսեց տածել դեպի բանաստեղծը: (Տես «Խորհրդային գրականություն», Երևան, 1940 թ. № 4—5):

Մի այլ գրույցի մեջ պատմվում է, թե Կըղըլ-Արսլանը, ցանկանալով տեսնել հռչակված բանաստեղծին, հրավիրում է նրան իր ռազմակայանը: Նիզամին գալիս է տեսության այն ժամանակ, երբ երկրի տիրակալը շքեղ խնճույք էր կատարում: Լսելով, որ եկել է Նիզամին, Կըղըլ-Արսլանը հրամայում է խոնույն

դադարեցնել խրախճանքը, համարելով այդ իմաստուն բանաստեղծի համար անվայելուչ և կազմել մի այնպիսի հանդես, որ հարմար և հաճելի լինի նրան:

Հիացած լինելով Նիզամիի «Խոսրով և Շիրին» պոեմայով և բանաստեղծին ֆեոդալ-արխատոկրատների շահերին ծառայեցնելու նպատակով, թագավորը խնդրում է նրան մնալ իր մոտ, խոստանում է բազմաթիվ թանկագին նվերներ և կալվածքներ պարգևել: Սակայն Նիզամին չի համաձայնվում մնալ պալատում և ապրել վայելքի մեջ: Ժողովրդի բանաստեղծը գերադասում է ապրել աղքատության մեջ, իր խուցում, քան ծախելով իր գրիչը, ծառայել իշխողներին և հարուստների պանակները լիղեր:

Նիզամիի անկաշառ ընավորությունը, հաստատակամությունը համոզմունքների մեջ ցայտուն կերպով երևում է նրա ստեղծագործություններից: Նիզամին զարչանքով է խոսում այն բանաստեղծների մասին, որոնք սիրաշահում են երկրի տերերին և վաճառելով իրենց գրիչը՝ պոեզիան դարձնում են «գինե-տուն», իմաստության խոսքը՝ «անհամ ջուր» (բանաստեղծի արտահայտություններն են):

Նիզամեզդին Իլյաս Յուսուֆ օղլին գրականության մեջ հայտնի է Նիզամի անունով: Ծնվել և իր ամբողջ կյանքը անց է կացրել Դյանշա քաղաքում: Դրա համար էլ կոչվում է Նիզամի Դյանշևի, իսկ ժողովրդի մեջ նրան ուղղակի անվանում են իմաստուն շեյխ Նիզամի: Հին աղբյուրները և նորագույն ուսումնասիրությունները հաստատում են, որ Նիզամի Դյանշևի-վին ծնվել է 1141 թվին:

Ըստ մեզ հասած տեղեկությունների, Նիզամին քաղաքային ոչ ունևոր ընտանիքի զավակ էր: Նա զեռ պատանի էր, երբ գրկվեց հորից: Վաղ հասակից ուշիմ և խելոք պատանին տարվում է գիտություն և գրականությամբ: Հասունության տարիներին Նիզամին ուսումնասիրում է փիլիսոփայությունը, իրավաբանական գիտությունները, աշխարհագրությունը, ֆիզիկան, մաթեմատիկան, բժշկությունը, աստղաբաշխությունը և պոետական արվեստը: Այդպիսով, նա հանդես եկավ որպես իր զարի ամենազարգացած մարդկանցից մեկը: «Իսկենդեր-Նամե»-ի մեջ

նա խոսում է Պլատոնի, Սոկրատեսի, Արիստոտելի և մյուս
խմաստասերների մասին, մի քանի, որ ցույց է տալիս, թե նա
հին հունական փիլիսոփայությանը քաջատեղյակ անձնավորու-
թյուն էր։ Կատարելությամբ գիտեր ֆարսերեն և արաբերեն
լեզուները։

Նիզամին, որպես քաղաքացի, արվեստագետ և մտածող, օր-
գանապես կապված է եղել հարազատ ժողովրդի հետ և ուրեմն
իր ստեղծագործության համար սնուցող հյութեր է առել ազը-
բեշանական ու մյուս ժողովուրդների բանավոր ստեղծագործու-
թյունից։ «Մոսրուվ և Շիրին», «Լեյլի և Մեջնուն», «Յոթ դեղեց-
կուհի» և «Խսկենդեր-Նամե» պոեմները ֆոլկլորային ծագում
ունեն։ Սակայն իր երկերի թեմատիկան, կամ կերպարները
վերցնելով ֆոլկլորից, նա արվեստագետի հանճարեղ վրձինով
մշակել, կոկիկ, հզիկ է, դարձրել միանգամայն ինքնուրույն
ստեղծագործություններ, արվեստի փայլուն կոթողներ։

Նիզամին գրականությամբ սկսել է զբաղվել վաղ հասակից,
քայց իր նշանավոր պոեմները գրել է հասուն տարիներին, երբ
ունեի միանգամայն կազմակերպված աշխարհայացք և կյանքի
հսկայական փորձ։ Առաջին նշանավոր երկը՝ «Գադանիքների
գանձարանը» ավարտել է 1179 թվին, երբ 37—38 տարեկան էր։

Համաշխարհային գրականության մեջ բանաստեղծը հայտնի է
«Մամսե» («Հնգամասյան») ժողովածուով, որի մեջ ամփոփված
են «Գադանիքների գանձարան» պատմվածաշարը, «Մոսրուվ և
Շիրին» (1180 թ.), «Լեյլի և Մեջնուն» (1183 թ.), «Յոթ դեղեց-
կուհի» (1197 թ.), և «Խսկենդեր-Նամե» ռոմանտիկական պոեմ-
ները։ Բացի այս գործերից, Նիզամիի անունով առայժմ հայտնի
են նաև մի քանի տասնյակ գաղելներ։

Նիզամի Գյանջևին վախճանվել է ծեր հասակում՝ 1203—
1211 թվերի արանքում։ Նրա զերեզմանը գտնվում է Գյանջա
(այժմյան Կիրովաբադ) քաղաքից հինգ կիլոմետր հեռավորու-
թյան վրա։ Հարյուրավոր տարիներ մեծ բանաստեղծի դամբա-
րանը հանդիսացել է ուխտատեղի «Եթե Նիզամիի փառքը,—
գրում է Ե. Բերտեյսը,— տաբածվեց ամբողջ պարսկական Սրե-
վերքում և բոլոր գրականագետները միանամունց կերպով աշխարհի
մեծագույն բանաստեղծներից մեկը ճանաչեցին նրան, ապա նրա

հայրենակիցների մեջ, որոնք մոռնիկից գիտեին նրա հայացքները կյանքի նկատմամբ և նրա բացասական վերաբերմունքը դեպի ֆեոդալական շրջանները, նրա հիշատակը միացել է այն պատկերացման հետ, որ նա սուրբ է և տարիներ շարունակ նրա դամբարանը պաշտվել և ուխտագնացության վայր է եղել» («Սոցիալդեմոկրատ» Բաքու, 1939 թ. № 5, էջ 59):

Սովետական Ադրբեջանի կառավարությունը, ժողովուրդը և բոլորեկյան պարտիան բարձր գնահատելով Նիզամու արվեստը և նրա անմահ հիշատակը, կառուցել են մի հուշակալ դամբարան, որտեղ թաղված է մեծ բանաստեղծը, իսկ Բաքվում գտնվում է Նիզամու թանգարանը՝ ռեսպուբլիկայի ամենալավագույն կուլտուրական օջախներից մեկը: Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը կրում է Նիզամիի անունը:

* * *

«Սամսե» ժողովածուի մեջ ամփոփված երկերը արևելյան ժողովուրդների միջնադարյան գրականության ամենաուշադրալ ստեղծագործությունների թվին են պատկանում: Արևելագետները դրանք գնում են Թիրդուսու «Շահ-Նամե»-ի և Շոթա Ռուսթավելու «Վադրենափորի»-ի կողքին: Արևելքի բազմաթիվ գրողներ ընդօրինակել են, աշխատել են նմանվել Նիզամուն, գրել են նրա աղբյուրության տակ: Ստեղծվել է հակադասական գրականություն Նիզամիի թեմաների և կերպարների շուրջը:

Հնդամատյանում ամփոփված «Գալտնիքների դանձարան»-ը կազմված է մի շարք հետաքրքիր նովելներից: Արժեքավոր են հատկապես այն պատմվածքները, որոնք աչքի են ընկնում սոցիալական և քաղաքական սրություններ: Բարոյախրատական նովելների մեջ Նիզամին քննադատում է ֆեոդալական կարգերը, մերկացնում է իշխաններին և բռնակալներին, արտահայտում է ազատասիրական ձգտումներ, պաշտպանում է ժողովրդի իրավունքը:

Նովելներից մեկի մեջ Նիզամին ալլեգորիկ պատկերներով պատմում է, թե ինչպես թագավորը ալիքում է երկիրը, ծաղ-

կած գյուղերը դաբձնում է ամայի: Մի այլ նովելայի մեջ աղ-
քատ ծերունին մերկացնում է բռնակալ իշխանների վայրագու-
թյունները և դաժանությունները:

«Պառավ կնոջ և Սուլթան Սանջարի հեքիաթի» մեջ գեղջկու-
հին բողբոսում է սուլթանի դեմ նրա համար, որ վերջինս եր-
կիրը դարձրել է ավերակների կույտ, գյուղացուն զրկել մի
կտոր հացից:

Բողբոսելով սոցիալական անհավասարության դեմ, ճնշման և
աշխատավորության շահագործման դեմ Նիզամին «Գաղտնիք-
ների գանձարանը» պատմվածաշարքի մեջ արտահայտում է
12— բդ դարի դեմոկրատական շերտերի տրամադրությունները:

Ատելով բռնությունը, ճնշումը, Նիզամին հաճախ զիմում է երկ-
րի տերերին, պահանջելով նրանցից լինել արդարադատ, պաշտ-
պանել ժողովրդի իրավունքը և արդար վաստակը: Իհարկե 12-բդ
դարի պայմաններում պոետը չէր կարող լիովին ազատ մնալ
կրոնական, միստիկական տրամադրություններից: Սակայն նրա
ստեղծագործության մեջ երկրորդական տեղ է բռնում միս-
տիցիզմը, կամ երկրի տերերից արդարություն հայցելը:

Նիզամիի նովելաները հիմնականում արտահայտում են բո-
ղոք սոցիալական անհավասարության դեմ, աշխատավորության
շերտերի դժգոհությունը՝ թագավորներից և մեծ ու փոքր ֆեո-
դալներից:

Դարեր շարունակ ամբողջ Արևելքում ընթերցանության
լավագույն գիրք է եղել «Խոսրով և Շիրին» էպիկական պոեմը:
Շատերն են գրել Խոսրովի և Շիրինի մասին, բայց Նիզամին է
միակ գրողը, որ տվել է Խոսրովի և Շիրինի մասին ժողովր-
դական զրույցի մոտմոենտալ ճշգրտական վերամշակումը: Պոեմայի
սյուժեի հիմքում ընկած է Խոսրովի արկածները նրա և Շիրինի
սիրո պատմությունը:

Իրանի թագավոր Որմիզդը իր որդու՝ Խոսրովի պայծառ
ապագան գուշակելով, կոչեց նրան Փարվիզ (Պարվիզ), որ նշա-
նակում է փայլուն տիրակալ: Նվ իսկապես, թեպետ Խոսրովը
հանդիպեց շատ դժվարությունների և դժբախտությունների:

բայց ծնված լինելով երջանիկ աստղի տակ, հասավ մեծ փառքի
և հարստության, իշխեց Իրանի հզոր գահի վրա, ապրեց վայել-
քի և ճոխության մեջ:

Երիտասարդ Խոսրովը ուներ մտերիմ մի ընկեր Շափուր
անունով: Շափուրը շատ խելոք և զարգացած մարդ էր, տեսել
էր բաղմամբով երկրներ՝ Իսպանիայից մինչև Հնդկաստան, քա-
ջատեղյակ էր շատ զիտությունների և տաղանդավոր նկարիչ էր:
Շափուրը Խոսրովին պատմում է մեծ տիրուհի՝ Մեհին-Բանուի
և նրա բարեկամուհի Շիրինի մասին: Իզուր չէ, որ Շիրինն նշա-
նակում է անուշ, քաղցր: Շիրինի պես գեղեցիկ աղջիկ գոժար
թե աշխարհում ուրիշը չի: «Առաջների մարգարիտները նրա՝
ճառագայթների նման իրենց գեղեցկությամբ գերազանցում են
մարգարտյա խեցիկներին: Շուրթերը՝ երկու խոնավ սուտակներ
են, քիթը՝ արծաթե թուր, որ կիսել է նրա գեմքի խնձորը: Մո-
լորակները ոչինչ են նրա մոտ: Իր գեղեցկությամբ նրա գեմքը
գերել է լուսնին և արևին» (ինչպես այս, նույնպես և մյուս
մեջբերումները «Խոսրով և Շիրին» պոեմից բերված են Գարեգին
Սևուկյանի արձակ փոխադրությունից՝ «Խոսրով և Շիրին», Բա-
քու, 1940 թ.):

Մարմնական գեղեցկության հետ մրցում է հոգեկան գեղեց-
կությունը: Շիրինը անչափ խելոք, լմաստալն աղջիկ է: Նա
քաջ է և համարձակ: Վտանգի ժամանակ կարող է հանել փղի
ժանիքները և փշրել առյուծի ճանկերը: Նա ունի մի հրեղեն
ձի՝ Շերդիդ անունով:

Լսելով Շափուրի պատմությունը Շիրինի մասին, Խոսրովը
կորցնում է իր հանգիստը և քույր: Երազում անգամ նա տեն-
չում է Շիրինին: Մերահարված Խոսրովը Շափուրին ուղարկում
է Շիրինի մոտ, նրա սիրտը զրավելու համար: Շափուրը գալիս
է Հայաստանի լեռները, որտեղ այն ժամանակ գտնվում էր
հրաշագեղ աղջիկը և նրան երեք անգամ ցույց է տալիս Խոսրո-
վի նկարը: Իրանի թագաժառանգի նկարը գերում է Շիրինին:
Մի քիչ և քիչ սրտում, Շիրինը փախչում է Մեհին-Բանուից,
գնում է դեպի Մեղաին, Խոսրովին տեսնելու: Երկար ճանա-
պարհորդությունից հոգնած, Շիրինը թաքմանալու համար
մտնում է աղբյուր՝ լողանալու:

Մինչ այդ, խարդախ մաքդկանց հաջողվել էր Խոսրովի անուշ-
նով գրամ կտրելու միջոցով դժառնություն պցել նրա և հոր մի-
ջև։ Որմիզդի վրիժառությունից ազատվելու համար Խոսրովը
փախչում է իր հայրենի երկրից և նույն ճանապարհով անց-
նելիս, կանգ է առնում այն աղբյուրի մոտ, ուր լողանում էր
Շիրինը։ Չճանաչելով իբար, Շիրինը և Խոսրովը հեռանում են
տարբեր ուղղությունը։ Շիրինը գալով Մեղաին, բնակություն է
հաստատում իր համար կառուցված գոյակում։ Առանձնություն
մեջ տխուր ու միալար են անցնում նրա օրերը։ Միակ մի-
թարությունը՝ քաղցր երազանքն էր Խոսրովի մասին։

Լսելով, որ վախճանվել է հայրը, Խոսրովը շտապում է Իրան
և ժառանգում է հոր գահը։ Կարգի գցելով պետական գործերը,
նա խրեն տվեց շվայտություններին։ Դրանից հետո գիշեր ու
ցերեկ խմում էր նա, քեֆ անում, ոչ մի բանի չէր մտած
առանց որսի և գինու թափի»։

Խոսրովը իր երկիրը եկավ այն ժամանակ, երբ Շիրինը ար-
դեն ճանապարհվել էր հորաքրոջ՝ Մեհրին-Բանուի մոտ։ Այնպես,
որ այս անգամ ևս սիրահարները իրար չհանդիպեցին։

Իշխան Բահրամ Ջուրին ապստամբություն է բարձրացնում
և գրավում Խոսրովի իշխանությունը։ Գահընկեց Խոսրովը փախ-
չում է Իրանից և շարունակում է շվայտ ու անհոգ կյանք
Աղբյուրում։

Մուղանի դաշտավայրում, որսի ժամանակ, Խոսրովը հանդիպում
է Շիրինին։ Մերահարները մի ամիս շարունակ մտերիմների հետ
միասին զվարճալի, ուրախ օրեր են ապրում, զբաղվում են որ-
սորդությամբ, խաղեր ու խնձույքներ են կազմակերպում, իրար
պատմում առակներ և դրույցներ։ Խոսրովի բոլոր ճիգերը՝ տիրել
Շիրինին, անհաջող են անցնում։ Շիրինը մնում է անզբոսելի ու
անբիծ։ Շիրինը վերջում կշտամբում է Խոսրովին, որ թողած
իր երկիրը, զրկված գահից, ապրում է գեխություն և զվարճու-
թյան մեջ։

Վերադարձած Շիրինից, Խոսրովը մեկնում է Ռում՝ պետա-
կան նպատակառումներով և ամուսնանում է Բյուզանդիայի կայ-
սեր աղջկա՝ Մարիամի հետ և բյուզանդական պորթերի գլուխ

անցած, գալով հայրենի երկիր, պարտության է մատնում խռովարարներին, գրավում է հոր գահը և նորից իշխում Իրանում:

Սոսրովի անջատումից հուսահատված և տենչալով նրան, Շիրինը ընկելով է Սոսրովի մայրաքաղաք՝ Մեդանի մոտ, ամայի տեղում կառուցված ամրոցում:

Մարիամից գաղտնի, Սոսրովը ցանկանում է կապվել Շիրինի հետ: Շիրինը կշտամբում է Սոսրովի պատգամավորին: Առաքինի Շիրինը մերժում է Իրանի հզոր տիրակալի առաջարկությունը: Շիրինը գերադասում է ապրել մենակության մեջ և մեռնել՝ քան ապօրինի կապեր ստեղծել Սոսրովի հետ:

Շիրինը պատվիրում է ճարտարապետ և քանդակագործ Ֆարհադին կառուցել մի այնպիսի ջրանցք, որով կաթը արոտավայրից հոսելով, գա մինչև ամրոցը: Պատանի Ֆարհադը գերված Շիրինի հմայքով, պատռում է լեռների կուրծքը, գերմարդկային աշխատանքով կառուցում է ջրանցքը, պատրաստում է գեղեցիկ շատրվան:

Սոսրովը իմանալով, որ Շիրինին սիրում է Ֆարհադը, դիմում է նենգության: Նա խոստանում է մոռանալ Շիրինին, եթե Ֆարհադը ձեզքի Բիսութուն գրանիտե հսկայական ժայռը:

Ազնիվ ճարտարապետը հավատալով Սոսրովին, սկսում է պատռել ապառաժը, բայց երբ գործը ավարտելու վրա էր, Սոսրովի վարձկաններից մեկը կոկորդիլոսյան արցունքներ թափելով, կարողանում է խաբել և հավատացնել Ֆարհադին, թե Շիրինը հանկարծամահ է եղել: Չտանելով այդ հարվածը, Ֆարհադը անշնչացած ընկնում է գետնին:

Ջրավականանալով այդ քստմենլի գործով, Սոսրովը Շիրինին վիրավորելու նպատակով գրում է հեգնական նամակ Ֆարհադի մահվան լուրը հաղորդելով: Սակայն ազնիվ և մեծահոգի Շիրինը, որ շարունակում էր սիրել Սոսրովին, գրում է նրան մի սրտառուչ, կարեկցական նամակ Մարիամի մահվան առթիվ:

Թեթևամիտ և փոփոխական Սոսրովը երկրորդ անգամ ամուսնանում է սպանանցի գեղեցկուհի Շաքարի հետ:

Սոսրովի երկար թախանձանքներից հետո Շիրինը համաձայնում է ամուսնանալ նրա հետ:

Շիրինի խրատներով խոսքովը չափավորեց իր վարքը և սկսեց ուսումնասիրել իմաստությունը, արդարությունը և երկրի գաղտնիքները:

Մարիամից ծնված՝ Շիրուն օրդին դավադրություն է կազմակերպում հոր դեմ, գրավում է իշխանությունը և խոսքովին բանտ նետում:

Դաժան և վավաշոտ Շիրունն մոլի ցանկությամբ աշխատում է տիրել Շիրինին: Իր մտադրությունը իրագործելու համար Շիրունն սպանում է հարազատ հորը՝ խոսքովին, երբ նա հանգիստ քնած էր: խոսքովի դամբարանում ինքնասպան է լինում Շիրինը:

Մարդիկ Շիրինի տապանաքարին գրեցին՝ «Շիրինից բացի, որ դաժան գեանի տակ է, ոչ ոք ուրիշի համար իրեն չի սպանել»:

Այսպիսով ավարտվում է տալմուրիչ, էպիզոդներով հարուստ «խոսքով և Շիրին» բովանդակաւն պոեմը:

Հակասական կերպար է խոսքովը: Մի կողմից նա զուրկ է մարդկային բնավորության դրական գծերից: Քաջ է և վտանգի ժամանակ անվեհեր: Հիացմունք է պատճառում օրինակ, երբ խնձույքի ժամանակ նա սպանում է կապաղած առյուծին, որը հանկարծակի հարձակվել է անդեն մարդկանց վրա: Իր կյանքի վերջում խոսքովը դառնում է խոհեմ և լուրջ, զբաղվում է գիտությամբ և իմաստությունների ուսումնասիրությամբ: Բայց մյուս կողմից խոսքովը թեթևամիտ և փոփոխական է: Ամբողջ կյանքը համարյա անց է կացրել շվաշտության մեջ: Կյանքի իմաստը տեսնում է խնձույքի, գինու և կնոջ մեջ: Անհոգ է և պետական գործերով քիչ է զբաղվում: Ետստեր և փառամոլ է: Դաժան և նենգավոր բնավորություն ունի. խոսքովը ատելի է մանավանդ այն ժամանակ, երբ խարդախությամբ խորտակում է Թարհաղի սերը և հասցնում նրան մահվան:

Ամբողջապես վերցրած խոսքովը անհամադրելի է, վանդ: խոսքովի մեջ Նիզամին մարմնավորել է ֆեոդալ-աշխարհակալի բացասական տիպը:

Ժխտողական վերաբերմունք ունենալով դեպի երկրի տերերը, Նիզամին կերակել է իշխողի մի այլ բնորոշ կերպար: Դա

Խոսքովի որդի Շիրուեն է: Շիրուեն անագնիվ, դաժան և բռնա-
կալ է, հայրասպան և արյունաբեր, անձնավորում է իրենով
սանձարձակ բռնակալի տիպը:

Ատելով երկրի տերերին, Նիզամին նրանց հակադրում է ժո-
ղովրդի ազնիվ զավակ, ճարտարապետ և քանդակագործ Ֆար-
հադին:

Ֆարհադը պոեմի մեջ հումանիզմի, լուսավոր գաղափար-
ների, բանականության և ազնիվ սիրո կրողն է: Նա իր դարի
առաջագեմ մարդն է՝ աշխատանքավթյան, գիտության, իմաս-
տության բոլոր շնորհքներով օժտված: «Հաշիմներ կատարե-
լում նա օրինակ է ծառայում բոլորին, աստղերի գիտուն է,
ելկլիդի դադանիքների վճռողը: Նա եթե ուզենա՝ իր բրիչով
հողի վրա կնկարի ձկան՝ վրա նստած թռչունի: Իր վարպետու-
թյամբ կարող է կարմիր վարդը ներկել, բրիչով չինական նախշ
կքաշի ժայռի վրա: Այդ վարպետության համար ողջ Խուսեմը նրա
ձեռքն է համբուրում»:

Ֆարհադի ընկերն է նկարիչ Շափուրը: Նրանք միասին են
սովորել Ջինաստանում: Շափուրը ևս՝ իր դարի առաջագեմ
ներկայացուցիչն է, գիտության և աշխատանքի մարդ՝ բնավո-
րության ազնիվ և առաքինի գծերով:

Նիզամին առանձին համակրանքով է խոսում իր հերոսուհի-
ների՝ Մեհին-Բանուի, Շաքարի, Շիրինի և ուրիշների մասին:

Համաշխարհային գրականության մեջ Նիզամին եղել է առա-
ջիններից մեկը, որը ֆեոդալիզմի ժամանակ պաշտպանել է կնոջ
իրավունքը, պահանջել է մարդկային, անշահախնդիր վերաբեր-
մունք դեպի կինը:

Շիրինը համաշխարհային գրականության մեջ կնոջ ամենա-
համակրելի կերպարներից մեկն է: Շիրինը անհամեմատ ավելի
սինթետիկ, ամբողջական է, քան Հոմերոսի Հեղինեն, Դանտեի
Բեատրիչեն: Իր հերոսությամբ և համարձակությամբ նա չի
զիջում ամենաքաջ սղամարդուն, միանգամայն հմուտ է զինա-
վարժության և որսորդության մեջ:

Խոսելով Շիրինի և նրա նաժիշտների մասին, Նիզամին
ասում է. «Հասան խաղի հրապարակը, սկսեցին խաղալ: Խոսքովը

առաջին անգամ տեսավ աղջիկներին խաղը և զարմացավ: Նա զարմացավ, որովհետև այդ գեղեցկուհիներից ամեն մեկը մի արծիվ էր՝ կաքավի տեսքով: Խաղում նրանք ազամարդկանցից բնավ հետ չէին մնում:

Նրանք, որ խաղի ժամանակ թռչունների էին նման, որսի ժամանակ առյուծներ դարձան: Նրանց ոչ մի նետը իդուր չէր կորչում: Ամեն մի նետով մի այծամ էր միովում գետնին»:

Շիրինը իմաստուն է, գիտությունների մեջ հմուտ: Նա գիտե կառավարել երկիր և իր շինարար գործունեությամբ երջանկացնել ժողովրդին: Իշխանության գլուխը անցնելով, Շիրինը բարեկարգեց երկիրը, թեթևացրեց հարկերը, վերացրեց ճնշումը և առհասարակ մասծում և գործում էր ժողովրդի բարորության համար: «Շիրինը զահ բարձրանալով, իր թագավորության համբավը տարածեց ամբողջ աշխարհում: Նա բոլոր կալանավորներին ազատություն տվեց, ծանր լուծք վերցրեց հալածվածներից, իր ժամանակի բոլոր տեսակի ճնշումները վերացրեց: Էլ չթողեց ռամիկներից տուրքեր, քաղաքացիներից գլխահարկ հավաքեն: Բարեկարգեց գյուղերն ու քաղաքները, որովհետև իր համար արած ազոթքները՝ գերազասում էր կյանքի բարիքներից: Նրա արդարության շնորհիվ բարեկամացան բազեն ու լորը, գայլն ու գառը միասին շրջեցին արոտները: Ժողովուրդը նրա անունով սկսեց երգվել:

Նրկընում ազատությունը տիրեց, ամեն մի հատիկն իր պես հարյուրը տվեց»:

Այս էլ դորադոյի մեջ Նիզամին տվել է իր սոցիալական ուստուպիան: Ազբբեջանական ժողովրդի մեծ մտածողը և արվեստագետը 12-րդ դարում երազել է ազատ հասարակարգ, սոցիալական ճնշման վերացում, մարդկության ազատագրում:

Նիզամիով զբաղվող նախասովետական շրջանի գրականագետները խոսելով «Խոսրով և Շիրին» պոեմայի մասին, բացառապես տեսնում էին այստեղ միայն սիրո պատմություն: Կամա թե ահամա նրանք անտեսում էին պոեմայի գաղափարական բովանդակությունը:

Անկասկած երկի էական, հիմնական մասը կազմում է խոս-
րովի և Շիրինի սիրո նկարագրութունը, բայց կասկածից զուրս
է նաև, որ գաղափարական բովանդակության տեսակետից
«Խոսքով և Շիրին»-ը համաշխարհային գրականության մեջ լա-
վագույն պոեմների թվին է պատկանում:

«Խամսեր» հաջորդ գրվածքը «Լեյլի և Մեջնուն» պոեմն է:
Դա մի պատմութուն է անհույս, չբավարարված սիրո մասին,
և որպես այդպիսին եղակի տեղ է գրավում ոչ միայն Նիզամիի
ստեղծագործության մեջ, այլ և բացառիկ է բոլոր ժողովրդների
միջնադարյան գրականության մեջ:

Նիզամիից չորս դար հետո Շեքսպիրը «Ռոմեո և Զուլիետա-
յի» մեջ երգեց արևելքի մեծ բանաստեղծի «Լեյլի և Մեջնուն»
պոեմայի մոտիվները:

«Լեյլի և Մեջնունը» լայն մասսայականացում է ստացել Արև-
մուտքի ժողովուրդների գրականության և ֆոլկլորի մեջ: Բազմա-
թիվ հայ գրողներ՝ Սյայաթ-Նովան, Պռոշյանը, Ավ. Իսահակյանը,
Վահան Տերյանը և ուրիշները ողբերգական սերը, սիրահար
զույգի կործանումը երգելիս համեմատում են Լեյլիի և Մեջնու-
նի հետ: Դարերի ընթացքում Նիզամիի կերպարները բազմա-
թիվ ժողովրդների գրականության մեջ հանդիսացել և հանդի-
սանում են դժբախտ սիրահարների սիմվոլներ, համեմատվող
օրրաղներ: Նիզամիի երգած մոտիվները արտահայտվել է նաև
կերպական գրականության մեջ: Գյոթեն, որ այնպիսի հիաց-
մունքով խոսում է Նիզամիի մասին, անկասկած երիտասարդ
Վերթերի տառապանքը, հեռանկարից զուրկ սերը նկարագրելիս,
եթե չի օգտվել, համենայն դեպս նրան օրինակ է ծառայել «Լեյ-
լի և Մեջնունը»:

«Լեյլի և Մեջնունը» արաբական ժողովրդական լեգենդա է,
որ տարածվել է Կովկասում արաբական արշավանքների և տի-
րապետության ժամանակ: Արաբական ժողովրդական սիրավեպը
հետագայում դարձել է Կովկասյան ժողովուրդների ֆոլկլորի սե-
փականութունը և աղբյուր է հանդիսացել շատ նմանողու-
թյունների: Նիզամին օգտվելով արաբական լեգենդայից և Կով-
կասյան ժողովուրդների՝ առաջին հերթին աղբյուրձանական ֆոլ-
կլորից, կերտել է իր «Լեյլի և Մեջնուն» հմայիչ լեգենդան:

Պոեմի հասարակական արժեքն այն է, որ Նիզամին աշտեղ ծառանում է ֆեոդալական կաշկանդումների և մահմեդական կրոնի դեմ, երգելով ազատ սերը, բողոքում է կնոջ ստրկութեան դեմ:

Լեյլին հրաժարվում է իր կյանքը կապել Իբն-Սալիմի հետ, որի հետ նշանել էին նրա ծնողները: Սիրելով Մեջնունին, Լեյլին ձգտում է ինքնուրույնութեան և ֆնում է հավատարիմ իր սիրածին: Բայց մյուս կողմից, Լեյլին անգոր է, թույլ: Նա չի կարողանում, պաշտպանել իր իրավունքը, նրան ճնշում են ֆեոդալական միջավայրը, ազաթները, կրոնը: Լեյլին կործանվում է, խորտակվում է նաև Մեջնունը:

Պոեմայի մեջ արտահայտված թախիժը, հերոսների ողբերգական վախճանը յուրահատուկ ձևով վերարտադրում են մեծ գրողի գեղեցկությունը տիրող հասարակարկից:

Լեյլի և Մեջնունի սրտառու ապամությունը սկսվում է այսպես. Արաբիայի Ամեր ցեղի պետը շատ բարի է, ազնիվ, պատվասեր: Նա բարեկիրթ է, շատ հարուստ, հզոր և ազատ, բայց դժբախտ է, որովհետև չունի զավակ: Աննկարագրելի է հոր ուրախությունը, երբ նա ունենում է մի աղա: Անունը դնում է Կեյա: Նա չափազանց գեղեցիկ և խելոք պատանի է դառնում: Նրան գուրգուրում և խնամում են ծնողները և դայակները, իսկ երբ լրանում է 10 տարին, ուղարկում են դպրոց՝ գիտությունների մեջ հմտանալու համար: Դպրոցում տղաների հետ միասին սովորում են նաև նշանավոր ցեղապետների աղջիկները: Կեյան գերում է չքնաղ Լեյլին:

Կայսին վիճակվեց նստել լուսնի հետ,
Սիրուն տիկնիկի, վարդի բուրավետ:
Գեղահասակ էր հարեանուհին,
Ոնց լուսամուտից ներս նայող նոճին,
Շողողում էին հունքերի տակից
Զույգ վիթի աչքեր, աչքեր բերկրալից:
Եվ հայացքը, որ նետ էր, կամ սուսեր,
Բյուր սիրտ էր խոցում այդ օրից ի վեր:
Նա թանկ նվերն էր օտար ցեղերի,

Մարգարիտը բոլոր մարգարիտներին:
Նա մի դոհար էր դեռ ձեռք չդիպած,
Նժույզ էր նա մի, դեռ թամբ չտեսած:

Վարսի ծխի տակ թովքն էր աչքերի,
Երեսն արծաթե լուսամտիով էր մի,
Բերանը սրվակ օծանելիքով,
Երկնային փառք էր խոստանում նա ծով:

Լուսինն է այգսկես Արաբստանի,
Լոկ թրքուհին է այգքան գեղանի:
Ոչ շպար էր պետք նրա աշտերին,
Եվ ոչ էլ սուրմա աղեղ հոնքերին:
Նա մի ասաղիկ էր ընկերներին մեջ,
Ծածկում էր նրանց փայլով իր անշեջ,
Շողշողում էր նա նրանց մեջ պայծառ,
Ոնց որ քասիղը մեր քաղցրաբարբառ:
Լեյլա էր անունն, այսինքն գիշեր,
Վարսերի մութն էր երեսին իջել:

(Աղբրեջաներենից թարգմանեց Սամվել Գրիգորյանը):

Երկու անմեղ սրտերում բոլորովում է սիրո անշեջ հուրը:
Նրանք մոռանում են ամեն ինչ, չեն կարողանում զբաղվել
գասերով:

Ընկերներն իրենց դասն էին սերտում,
Իսկ իրենք ուրիշ գիրք էին թերթում,
Խոնարհումն էին նրանք սովորում,
Լոկ «սիրելն» էին իրենք խոնարհում:
Փորձարկում էին նրանք, գեղազրույթ,
Խոստովանք էին իրենք լոկ գրում:
Նրանք լավ էին և հանրահաշվում,
Իրենք լոկ իրենց «ախն» էին հաշվում:

Կայսր սիրուց մոլորվել էր: Խենթի նման *նչ հանգիստ ուներ, ոչ քուն և ոչ դադար:* Ընկերները հեզնանքով նրան սկսեցին կոչել Մեջնուն՝ այսինքն խենթ, գիժ, ցավազար: Սիրո զաղտնիքը երկար պահել չի լինում: Բամբասանքները հասնում են Լեյլիի ծնողներին: Լեյլիին հանում են դպրոցից և բերում տուն: Սիրահարները անշատումը ցավալի հետևանք է ունենում Մեջնունի համար: Նա կորցնում է հանգիստը և ցնորվածի պես թափառում հանգեցրած ու անապատներում: Ուրիշներից զաղտնի Լեյլիի տան շեմքին արցունքի հեղեղներ է թափում: Մեջնունը փախչում է մարդկանցից, թափառում կիսամերկ, բորիկ, հողմերի դեմ գլուխը բաց: Դժբախտ Մեջնունը համարյա խենթանում է: Սիրասուն զավակին փրկելու համար հայրը իր կողմնակից անվանի մարդկանց ուղեկցությամբ զալիս է հարսնախոսության Լեյլիի հոր քոչավայրը: Լեյլիի հայրը տալիս է խիստ վերափորական պատասխան:

Բայց տղադ մի քիչ պակաս է խելքից,
Դրա համար էլ բախտ չի ունենա,
Ինչպես ասում են ցավազար է նա:
Այո, խենթ է նա, կամ նման մի բան,
Մեջնուն են ասում բոլորն էլ նրան:
Եվ թայ չի լինի նա իմ աղջկան,
Ոչ էլ աղջիկս է նրան սաղական:

Ստանալով մերժում, Մեջնունի հայրը ձեռնունայն վերադառնում է տուն և հորդորում որդուն մոռանալ Լեյլիին, ամուսնանալ մի այլ գեղեցիկուհու հետ: Հոր և ավագների խրատները հանգստացնելու փոխարեն, ավելի են սաստկացնում Մեջնունի տառապանքները: Երկյուղ կրելով նրա կյանքի համար, հայրը հույսը դնում է ասածո վրա և Մեջնունին բռնաբերում համար տանում է սրբազան քաղաքը՝ Մեկքա: Բայց այդ ուխտագնացությունը նույնպես չբարվոքեց Մեջնունի վիճակը և չթեթևացրեց նրա ցավը:

Հեռանալով հասարակությունից, Մեջնունը մի քարայրում ձգնալորի կյանք է վարում: Դեռ չափազանց երիտասարդ, նա արդեն հյուժոված էր երկար ծոմերից:

Որսի ժամանակ քաջ ասպետ Նոֆալը հանդիպում է Մեջնու-
նին: Լսելով Մեջնունի պատմութիւնը, Նոֆալը բարեկամանում
է նրա հետ, որոշ ժամանակ միասին բնակվում են անապա-
տում, գինի խմելով և զրուցելով, Նոֆալը աշխատում է Մեջ-
նունին մոռացնել տալ վիշտը: Դրանից հետո Նոֆալը որոշում
է օգնել Մեջնունին, խաղաղությամբ, կամ զենքի ուժով բերել
Լեյլիին: Նոֆալը պահանջում է Լեյլիի հորից աղջկանը տալ
Մեջնունին: Ստանալով մերժում, Նոֆալը իր քաջերով պատ-
րաստվում է կռվի: Սոսկալի, ահռելի էր պատերազմը.

Բարձրացան շարքերն ու հնչեց անեղ,
կոշը մարտական, հնչեց քանի հեղ,
Բեզվիններն անվախ մարտի դիմեցին,
Իրարու ճակատ, կուրծք թրտեցին:
Մարտիկների կանչ, խրխինջ ձիերի,
Ոտքերի դսիյուն և զարկ թրերի,
Թռչող կորդակներ, զնգուն, փետրածածկ,
Եվ ոտնահարվող արտեր չհնձված:
Հասուն մրգի տեղ արմավենու տակ,
Ելան դիակներ արնոտ, այլանդակ:
Նետերի ամպերն ասես թռչուններ,
Բացել էին բոլոր սոված կտուցներ:
Ջարգի աղմուկը մարդկանց խլացնում,
Ցնցում էր նրանց ու երկինք հասնում:
Թրերն ալ էին, ոնց թասեր գինով,
Ջարգից զորքն ասես դարձել էր գինով:

Հաջորդ օրը Նոֆալը նկատում է թշնամու նորանոր անհամար
զորքերը: Տեսնելով, որ չի կարող շահել պատերազմը, նա հեռա-
նում է կռվի դաշտից, իսկ հետո հավաքելով նոր ուժեր, հաղ-
թում է հակառակորդին: Մակայն պարտված Լեյլիի հայրը հայտ-
նում է, թե կսպանի աղջկանը և երբեք չի համաձայնի, որ նա
ամուսնանա Մեջնունի հետ: Համոզվելով, որ չի կարող իրագոր-
ծել իր ցանկութիւնը, Նոֆալը հրաժարվում է իր մտադրու-
թիւնից, իսկ Մեջնունը նորից վերադառնում է անապատ:

Ամայության մեջ նա հյուսում է սրտառուչ գաղեղներ չքնաղ Լեյլիի մասին: Համարելով այդ անպատվություն, Լեյլիի հայրը և բարեկամները որոշում են սպանել Մեջնունին, սակայն դա նրանց չի հաջողվում, որովհետև դավադրության մասին իմանում են Մեջնունի հարազատները: Նրանք Մեջնունին գտնում են անապատում՝ շրջապատված զազաններով: Հոր և բարեկամների աղաչանքը չի օգնում և Մեջնունը չի թողնում անապատը:

Մի անգամ հեռվից տեսնելով Լեյլիին, Մեջնունը վերջնականապես ցնորվում է: Լեյլին իր մոտ է կանչում Մեջնունին: Ցնորված Մեջնունը ուշաթափվում է, իսկ հետո փախչում սիրած աղջկանից: Մեռնում է զժբախտ Լեյլին: Մեջնունը դառն արցունքներով թրջում է անբախտ աղջկա շիրիմը և մեռնում Լեյլիի գերեզմանի վրա:

Դժբախտ զուգի՝ ողբերգական մահով ավարտվում է «Լեյլի և Մեջնուն» սիրավեպը:

«Լեյլի և Մեջնուն» պոեմը գրվել է Շիրվանշահ Ախսիթանի պատվերով և Նիզամիի միակ սիրելի որդի Մահամեդի հորդորանքով: Նիզամին մտադիր էր պոեմը գրել մայրենի լեզվով՝ աղբրեջաներեն, սակայն Շիրվանշահը կարգադրում է գրել ֆարսերեն: Միջնադարում ֆարսերենը աղբրեջանական գրականության համար նույն նշանակությունն է ունեցել, ինչպիսի նշանակություն միջին դարերում եվրոպական մի շարք երկրներին համար ունեցել է լատիներեն լեզուն:

Իր դարի դավաղը լինելով, Նիզամին չէր կարող բացարձակ հակադրվել իշխող ֆեոդալներին, մերժել նրանց պահանջը և ժխտել ֆարսերեն լեզուն: Նա ստիպված էր «Լեյլի և Մեջնուն» պոեմը գրել ֆարսերեն լեզվով:

«Քամսեխ» նախավերջին պոեմը կոչվում է «Յոթ գեղեցկուհի»: Բնութագրելով երկրի տերերին, Նիզամին ասում է. «Արքաներն ու իշխանները նման են բոցի: Նրանք չար են, հարկավոր է հեռու լինել նրանցից: Նրանք չունեն ոչ մի բարեկամ: Եթե մեկն ու մեկը դառնում է նրանց բարեկամը թեկուզ մեկ օրով, նրանք

մեկ ակնթարթից հետո կործանում են այդ բարեկամին» («Խորհրդաշխատանքի գործ», 1940 թ. № 7, էջ 8, աղբյուրներին)։

Բռնակալների դեմ ուղղված ժողովրդական ցատումը Նիդամին ցայտուն կերպով արտահայտում է «Յոթ գեղեցկուհի» պոեմի մեջ, ճարտարապետ Սոխնարի սպանությունը նկարագրելիս։

«Այն ժամանակ,—գրում է պոետը,—երբ խուլարնյակի պատերի տակ շատրվանում էր մեծաքանքար ճարտարապետ Սոխնարի արյունը, դղյակում հեղհեղում ուժեղանում էին նվագածությունը, ուրախ բացականչությունները, հրճվող բռնակալների, շահերի և արքայազուհիների քրքիջն ու աղմուկը։

Սակայն այն պարտեզում, ուր տարածվել էր բազմազույն ծաղիկների բուրմունքը, ընդդեմ նրանց, ում համար նեղ են երկինքն ու երկիրը, ով չի ճանաչում իրենից բացի և ոչ ոքի, ով իր ոտների տակ ճգնում է բոլոր ժողովրդներին, շահերի և արքայազուհիների դեմ լավում էր ապստամբություն ձայնը, որ դուրս էր եկել ճնշված ժողովրդի սրտից»։ (Նույն տեղ, էջ 8)։

Պոեմայի չորրորդ հեքիաթի մեջ ժողովուրդը միահամուռ երգվում է պինքի ուժով տառալիչ դաժան թագավորին և նրա տեղը դահ բարձրացնել բարի թագաժառանգին։

Ստեղծված բռնակալներին, Նիդամին հիացմունքով է խոսում ժողովրդի ազնիվ դավակ, ճարտարապետ Սոխնարի մասին, որը դառնում է իշխողների նենգությունից զուրկ, ինչպես Փարսազը «Խոսրով և Շիրին» պոեմայի մեջ։

Թե Արևելքի, թե Արևմուտքի միջնադարյան դրականությունից մեջ Նիդամին եղել է առաջիններից մեկը, որը երգել է խղճի ազատությունը և անկաշառ սերը՝ ազատ կրոնական և ցեղային կաշկանդումներից։

Նիդամիի ինտերնացիոնալիզմը հատկապես վառ պատկերացում է ստացել «Յոթ գեղեցկուհի» պոեմի մեջ։ Նա մեծազույն համակրանքով և հիացմունքով է խոսում հնդկական, չինական, խորեզմական, սլավոնական մավրիտանական, բյուզանդական և իրանական գեղեցկուհիների մասին։

Հրաշալի հեքիաթները, ֆանտաստիկ նկարագրությունները, փայլուն սրամտությունները, ժողովրդական իմաստությունները,

րը, թևավոր ափորիզմները, վառ, գունազեղ պատկերները՝ այդ ամենը «Յոթ գեղեցկուհի» պոեմը դարձնում են համաշխարհային գրականության ամենահոյակապ հուշարձաններից մեկը:

Պոեման այնքան լայն մասսայականացում է ստացել, որ մինչև իսկ սլավոն աղջկա զրույցի (4-րդ հեքիաթ), «Սյուսեն հետազայում օգտագործել է իտալական զրոդ Կարլո Գոցցին (1722—1806) իր «Արքայազուհայր Թուրանզոտ» պիեսայի մեջ», — գրում է արևելագետ Ե. Բերտելսը (տես «Հեքիաթ ռուսական արքայազուհերի մասին» Բաքու 1941 թ. առաջաբան, էջ 10):

Շիրկերի «Թուրանզոտ» տրագիկոմեդիայի սյուսեն համարյա ամբողջապես նման է Նիզամիի պոեմայի 4-րդ հեքյաթին՝ սլավոն աղջկա զրույցին, որը նույնպես իրավունք է տալիս ասելու, որ Շիրկերը իր երկի սյուսեն կազմելիս օգտվել է Նիզամուց:

Նիզամիի «Յոթ գեղեցկուհի» պոեմը սկսվում է այսպես, — Եմենի իշխան Նեմանուն Իրանի թագավոր Եզիզուդդին որդի Բահրամի համար կառուցել է տալիս մի հրաշալի դղյակ, բնութթյան ամենագեղատեսիլ վայրերից մեկում: Դղյակի կառուցման գործը հանձնարարվում է Բյուզանդիայի հռչակավոր ճարտարապետ Սուլմարին. «Սուլմարն ուժեղ բնավորության տեր մարդ էր: Նա գիտեր գիտության և մեխանիկայի բոլոր գաղտնիքները»: Այնքան շքեղ էր այդ դղյակը, որ ժողովուրդը անվանեց Խոնավարնյակ, այսինքն՝ սքանչելի դղյակ: Բայց բռնակալները սովորաբար լինում են դաժան և նենգավոր: Իմանալով, որ Սուլմարը կարող է համանման դղյակ և մինչև իսկ ավելի լավը պատրաստել ուրիշի համար, Նեմանուն նախանձից մոլեգնած, սպանում է անմեղ ճարտարապետին:

Այդ սքանչելի դղյակում ուրախ և անհոգ ապրում է Սասանյան ղեկապետի թագաժառանգ Բահրամ Գուրը: Նրա հայրը՝ Իրանի հզոր շահը և թագավորի վաստակ Նեմանուն կատարում էին Բահրամ Գուրի բոլոր ցանկությունները: Բահրամ Գուրի մոտիկ ըարեկամն էր Նեմանունի որդին՝ Միանդարը: Հոր անհետացումից հետո Եմենի տիրակալը դարձավ Միանդարը, որը առաջվա պես սիրաշահում և ընկերակցում էր Բահրամ Գուրին:

Բահրամ Գուրը լրջամիտ և խոհեմ էր: Նա տարվեց գրքերով և բազմաթիվ գիտություններ ուսումնասիրեց. «Ամենից առաջ նա տարվեց աստղաբաշխությամբ, ուսումնասիրեց երկնքի լուսատուների զաղտնիքը, նրանց պտույտների իմաստն ու առաջացումը: Նա աչք չէր հեռացնում գրքերից: Նա իր ամբողջ ուժը գործադրեց ուսումնասիրելու գիտության այն բոլոր զաղտնիքները, որ մինչ այդ գեղեւ չէին ուսումնասիրված: Այդ գործում Միանդարը մեծ օգնություն ցույց տվեց Բահրամին, որովհետև նա ավելի շատ գիտությունների հետ էր ծանոթ, քան թե Բահրամը: Բահրամը այնքան օգտվեց նրանից, այնքան շատ բան վերցրեց նրանից, որ գեւ երիտասարդ հասակից դարձավ մի շարք գիտությունների քաջ գիտակներից մեկը»:

Բահրամ Գուրը զօրեղ էր ոչ միայն խելքով, այլև քաջությամբ: Եմենում ամենահռչակված որսորդն էր: Պատմում են, որ ձեռքով մի անգամ նա հաղար եղնիկ է որսացել: Դրա համար էլ նա կոչվեց Գուր, որ ֆարսերեն նշանակում է եղնիկ կամ վայրի երիվար: Առյուծ սպանելը նույնպես նրա համար խաղ էր:

Մի անգամ դժգոհվում գրոսներին Բահրամ Գուրը անսպասելի բացում է զաղտնի, անհայտ մի դուռ և մտնում մի սենյակ, դարձարված յոթ երկրի հրաշագեղ աղջիկների նկարներով: Նրանք բոլորն էլ արքայական, կամ իշխանական տոհմից են: Բացի աղջիկներից, կար նաև մի գեղեցիկ պատահու նկար: Դա Բահրամ Գուրի նկարն էր, որի տակ գրված էր.

«Աստղերի գուշակությունն այն է, թե երբ այս պատանին կտիրի ողջ աշխարհին և կգառնա հզորներից ամենահզորը, այն ժամանակ նա կվերցնի այս յոթ արքայադստերին, որոնց նմանը չկա: Այդ մենք չենք հորինել: Այդ ցույց է տվել քո բախտը, իսկ մենք գրել ենք...»:

Բահրամ Գուրը որոշում է տիրել աշխարհին և յոթ գեղեցկուհիներին: Հոր մահից հետո նա չի կարողանում անմիջապես ժառանգել գահը, որովհետև Իրանի ավագները թագավոր են կարգում մի իմաստուն ծեր մարդու: Բահրամ Գուրը պաշտպանվելով իր իրավունքը, կատարում է մեծ սխրագործություն:

Սպանելով երկու կատաղած առյուծներին, նրանց ճանկերից խլում է Իրանի թագը և դրանով ապացուցելով իր ուժն ու իրավունքը, պայմանի համաձայն ժառանգում է հոր դահլը: Բահրամ Գուրը՝ (420—438) բարեկարգեց երկիրը, լիացրեց ժողովրդին և շատ բարի գործեր կատարեց: Սովի ժամանակ Գուրը բացեց պետութեան և հարուստների պահեստները, կերակրեց ժողովրդին և մինչև իսկ թափված ցորենից օգտվեցին թուզունները: Սովի ժամանակ միայն մի մարդ մեռավ և դա շատ մեծ վիշտ պատճառեց Բահրամ Գուրին:

Բահրամ Գուրը գառնալով Իրանի մեծ պետութեան շահը, հաղթում է Զինաստանի Խսկանին և նվաճում է շատ երկրներ:

Առյուծաքաղ Բահրամ Գուրը ուղարկում է պատգամավորներ, ստանում է յոթ երկրի հրաշագեղ փերիներին և նրանց համար կառուցելով շքեղ պալատ, յուրաքանչյուրին տեղավորում է առանձին աշտարակում, դարդարված ամեն մեկի երկրին հատուկ գույներով: Աշխարհիս յոթ գեղեցկուհիների տերը՝ Բահրամ Գուրը շաքաթվա ամեն մի օր հերթով այցելում է գեղեցկուհիներին և ամեն մեկից լսում մի հմայիչ հեքիաթ: Յոթ օրվա մեջ լսում է յոթ հեքիաթ: Այսպիսով «Յոթ գեղեցկուհի» պոեմը բաղկացած է յոթ հեքիաթից և այլ զրույցներից, որոնք իրենց հմայքով և գեղեցկութեամբ ոչնչով չեն գիշում արաբական «Հազար ու մի գիշեր» չքնաղ հեքիաթներին:

Մրամխտ և իմաստալից է Բահրամ Գուրի և նրա գերուհի գեղեցիկ ու կամակոր Ֆիթնեի պատմությունը:

Գուրը վարժ որսորդ էր, նրա նետերը զիպուկ էին, անվրեսդ: Բայց Ֆիթնեից գովասանքի խոսք չէր լսում: Մի անգամ էլ թագավորի հարցմունքին, թե ցիւրին որտեղից խփի, խորամանկ գեղեցկուհին պատասխանում է:

Ասաց. «Թե ուզում ես փառքիդ թելը երկարել,
Հարկավոր է ցիւրի ոտքը գլխին կարել»:
Շահը զգաց որոգայթն իր ճորտի հյու
Միջոց դառավ որոգայթի գեմն առնելու:
Նա պահանջեց բալիստրադեղ, քամուց արագ,

Դրեց իսկույն աղեղին մի քարագնդակ
Եվ գնդակը ձգեց որսի աղանջին աջ,
Յիրի ուղեղն այդ հարվածի ցավից անքայ:
Թույլ կենդանին երբ բարձրացրեց ոտքը հողից,
Որ աղանջը ազատ անի նման օղից,
Շահի նետը կայծակի պես հասավ նրան
Եվ աղանջն ու սմբակը իսկույն կապեց իրար:

(Աղյուսակներենից Բարգմանեց Թաթուլ Հարյան):

Շահի այդ ճարպիկությունը չի զարմացնում Ֆիթնեին, քնդհակառակը, նա սառնասրտությամբ պատասխանում է, որ «ոչ թե շահի ուժից է այդ, այլ փորձից մեծ»: Կատաղած շահը հրամայում է զորավարին գլխատել իր սիրելի զերուհուն:

Խոհեմ զորավարը Ֆիթնեին չի սպանում, այլ թաքցնում է իր կալվածքում: Ֆիթնեն դրազվում է փորձով, ամեն օր շալակած բարձրացնում է ուսերի վրա հորթը պալատի սանդուխքի 60 աստիճանով և այնքան է վարժվում, որ հետագայում ևս հեշտությամբ շալակին բարձրացնում է աստիճաններով մեծացած հորթը՝ որ արդեն դարձել էր հսկայական ցուլ: Տեսնելով այդ, շահը մնում է ապշած, իսկ Ֆիթնեն ասում է, թե դա արդյունք է փորձի և վարժության: Շահը հասկանալով ահնարիչը, ներում է գերուհուն, համոզվում է, որ նա խելոք է, իրավացի և ամուսնանում է հետը:

Իրականության ճանաչման և նպատակին հասնելու համար առաջնությունը տալով փորձին, Նիզամին արտահայտում է միանգամայն նոր գաղափար, հակադրվում է կրոնական դոգմատիկային և հավատում է մարդկային բանականությանը ու զիտական փորձին: Դրանք՝ այնպիսի գաղափարներ են, որոնք եվրոպական գրականության մեջ տեղ գտան Նիզամիից մի քանի դար հետո: Շեքսպիրի Համլետը մոր և հորեղբոր հանցանքը ապացուցելու և առհասարակ ճշմարտությանը հասնելու միջոցը համարում է փորձը, իր կասկածները ստուգում է փորձի միջոցով:

Մյուս զրույցների մեջ ևս Նիզամին զարգացնում է այն միտքը, թե կյանքի բանալին փորձի, գիտության, իմաստու-

Թյան մեջ է, որ երջանկությանը, ցանկացածին չի կարելի հասնել միայն ուժով, առավել ևս հավատով: Դրա համար հարկավոր է աշխատանք, խելք և զիտելիքներ:

Սլավոնական աղջկա պատմած հեքիաթի մեջ ռուսական արքայազուտը պայման է գնում, որ կամուսնանա նրա հետ, ով քաջությունից բացի, ունի նաև զորեղ միտք և կարող է լուծել իր հանելուկ-հարցումները:

Մի քաջ երիտասարդ թագաժառանգ ռուս աղջկան տիրելու համար, նրա հանելուկները լուծելու և խորհրդավոր, անմատչելի ամրոցի գաղտնիքները բանալու համար, ռբտեղ բնակվում էր աղջիկը՝ գնում և մեծ իմաստունից սովորում է կյանքի էությունը, աստղերի գաղտնիքը, կարգում է գրքեր, զինվում գիտությամբ: Այդ ամենից հետո է միայն, որ նա կարողանում է պատասխանել աղջկա հարցերին, պարզել ամրոցի որագայթները և ամուսնանալ ռուսական արքայազուտի հետ:

Գեղեցկուհուն շատերն են ձգտել, բայց բոլոր ասպետները, քաջերը զոհվել են, որովհետև չեն կարողացել լուծել աղջկա հանելուկները և գտնել ամրոցի մուտքը: Եվ միայն երիտասարդ թագաժառանգը զինված գիտությամբ, կարողացավ հասնել նպատակին:

Առաջնությունը տալով իմաստությանը, խելքին, Նիզամին իր բոլոր գործերի մեջ փառաբանում է մտքի մշակներին՝ Փարհազին, Սուլմարին, գովերգում է Շիրինին, Իսկենդերին, Բահրամ Գուրին, որոնք կարգում են գրքեր, լսում իմաստուններին, թափանցում գիտության գաղտնիքների մեջ:

Նիզամու համար իդեալական աղջիկը նա է, որը գեղեցկության հետ մեկ տեղ խոհեմ և իմաստուն է: Այգալիսին է Շիրինը «Խոսրով և Շիրին» պոեմի մեջ:

«Յոթ գեղեցկուհի» պոեմայում Նիզամին ռուս աղջկա գեղեցկությունը երգելով, գովերգում է նաև նրա խելքը.

Նա լուսնից փայլուն էր, այտերը ալ վարդեր,
Շաքարից էլ քաղցր ուներ ալվան շրթեր:
Նա գյոզալ զոհրա էր, զոհրաից էլ բարի,—
Նա ճերմակ էր մոմից, ճերմակ էր շաքարից,

Բերանի համը քաղցր, անմահական ջուր էր,
 Աչքերի կրակը արեից էլ հուր էր,
 Մուշկի բույրը նրա բույրի մոտ անուժ էր,
 Նա նարգիզ էր, վարդ էր, ռեհան էր, նուշ էր:
 Նոր գարունքից թարմ էր նրա զեմքի գույնը,—
 Դեմքի գույնից վառ էր իր գեղեցկությունը:
 Նրա նազը ու քայլը ու հայացքը խումար
 Նեհր, քուն կրեքեխն ծաղիկների համար:
 Բոյ ու բուսած ունեք չինարու պես շիտակ,
 Վառվում էր ինչպես մոմ, այրվում ինչպես կրակ,
 Նրա ոտքի փոշում վարդ, նարգիզ կրուսներ,
 Նա վարդերի վարդ էր, ծաղիկների լույսն էր:
 Գեղեցկություն ունեք, ձիրքն էլ նրա ընկեր,
 Խելքն էլ այդ երկուսի զարդն ու զարգարանքն էր:
 Դատող, խորամիտ էր, օժտված էր ձիրքով—
 Գրել էր թերթիկներ լի խոհով ու մտքով:
 Աղջիկը ասողերի գաղանիքներն էլ գիտեր,
 Նա բնության նման խոր, ամենագետ էր:

(Աղբյուրներից թարգմանեց Թաթուլ Հուրյանը):

Այդ նույն պոեմայի մեջ մի պատահու խելքը գովելով, Նի-
 ղամին գրում է,

Հիսուս էր նա գիտություններ ուսանելում,
 Հովսեփի պես նա մարդկանց էր լուսավորում:
 Գիտությանց գիտակ էր նա և պիտանի,
 Առաքինի էր անսահման այդ պատանին:

(Աղբյուրներից թարգմանեց Աշոտ Գրաշի):

Նիզամին զարգացնում է այն միտքը, թե չարիքների պատ-
 ճառը տգիտությունն է, իսկ բարիքների մայրը՝ լուսավորու-
 թյունն է: Նահապետ Քուչաղի լեզվով ասած.

«Անգեղանի հուր նման, ուր ընկնե գտեղն կու էրե, գիտուն ի
 ջուր նման, ուր երթա կանաչ բուսեր է»:

Այսպիսով Նիզամիի ստեղծագործության հիմնական արժանիքները մեկն էլ այն է, որ նա 12-րդ դարում հանդիսացել է մեծագույն լուսավորիչ, բանականության և իմաստության ռահվիրա: Միջնադարյան խավարին, կրոնին հակադրել է մարդկային բանականությունը, լուսավորությունը, կանգնած լինելով այն տեսակետի վրա, թե իմաստության ու գիտություն մեջ է առաքինությունը, արդարամասությունը և մարդկային երջանկությունը:

Վերոհիշյալ գաղափարները զրահորվում են Նիզամիի բոլոր ստեղծագործությունների մեջ, բայց ամենից ցայտուն արտացոլվել են «Իսկինդեր-Նամե» պոեմայում, կազմված ավելի քան 20 հազար բանաստեղծական տողից: Այս պոեմը բաժանվում է երկու մասի՝ «Շերեֆ-Նամե—Փառքի, պատվի գիրք» և «Խիրեդ Նամե» — բանականության, իմաստության գիրք», կամ կոչվում է նաև «Իկբալ-Նամե» — այսինքն՝ «Բախտի հաջողության գիրք»:

Պոեմայի առաջին մասը նվիրված է Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների և սխրագործությունների նկարագրությանը, երկրորդ մասում Մակեդոնացին հանդես է գալիս որպես մտածող, իմաստասեր, գիտունների հետ վիճող միապետ, որ ցանկանում է վերափոխել աշխարհը, մարդկանց միջև հաստատել հավասարություն և արդարություն:

Նիզամիի պատկերացմամբ Ալեքսանդր Մակեդոնացին սոսկ նվաճող, աշխարհակալ չի, այլ նա բանականության, իմաստության կրող է, մի լուսավորյալ, փիլիսոփա միապետ: Նա աշխատում է գիտության միջոցով հասնել կյանքի ճշմարտությանը:

Մի խոսքով Նիզամիի պատկերացմամբ Ալեքսանդր Մակեդոնացին իդեալական միապետի կերպարն է:

Նախերգանքից և բացատրական գլուխներից հետո, Նիզամին անցնում է բուն նյութին, շարադրելով հին աշխարհի մեծ գուրավարի կյանքի և սխրագործությունների բաղմամբով էպիզոդները:

Ալեքսանդր Մակեդոնացու կերպարի մեկնաբանության մեջ Նիզամին հիմնովին տարբերվում է, թե ֆիրդուսուց և թե

մյուս հեղինակներից: Ժխտելով նախորդներին տրադիցիան, Նիզամին Մակեդոնացու մեջ աշխարհակալից բացի, տեսնում է մեծ իմաստասերի, լուսավորչալ միապետի:

Ալեքսանդր Մակեդոնացու ծննդով սկսվում է պոեմը: Պոետը պատմում է արևելյան վերսիան, որի համաձայն հռչակավոր աշխարհակալը պարսից Դարեհ թագավորի որդին է, հաղորդում է նաև արևմտյան վարիանտը, թե Մակեդոնիայի Ֆիլիպպ թագավորը գտավ մի որբ երեխայի և որդեգրելով, խնամեց նրան: Հետագայում մեծանալով այդ երեխան, նվաճեց աշխարհը: Դա Ալեքսանդր Մակեդոնացին էր:

Նիզամին ժխտում է այդ երկու պատումները, չի հավատում դրանց, համարում է անհիմն լեգենդներ և կանգնած է այն տեսակետի վրա, թե Ալեքսանդր Մակեդոնացին Ֆիլիպպ թագավորի որդին է:

Գրվածքի մեջ մանրամասն նկարագրված է Ալեքսանդր Մակեդոնացու դաստիարակությունը նշանավոր փիլիսոփաների մոտ, նրա ընկերությունը Արիստոտելի հետ, և թե ինչպես հետագայում հույն հանճարեղ իմաստունը դառնում է մեծ զորավարի խորհրդատուն:

Այնուհետև պատմում է Ալեքսանդր Մակեդոնացու բազմաթիվ արշավանքները և քաջագործությունները:

Հաղթելով բազմաթիվ ցեղերի, Ալեքսանդր Մակեդոնացին նվաճում է եգիպտոսը և կառուցում է իր անունով Ալեքսանդրիա քաղաքը:

Նիզամին չի հավատում այն լեգենդային, թե Մակեդոնացին ուներ կախարդական հայելի, որի մեջ տեսնում էր աշխարհի երեսին տեղի ունեցող բոլոր անցքերը: Նիզամին այն կարծիքին է, որ այդ զրույցը ուղղակի վերաբերում է հայելու գյուտին:

Դրանից հետո նկարագրված է Ալեքսանդր Մակեդոնացու կոնֆլիկտը պարսից թագավոր Դարեհի հետ: Պարսկաստանի հզոր միապետը ծաղրելով երիտասարդ աշխարհակալին, ուղարկում է նրան այնպիսի նվերներ, որով ուզում էր ասել, թե նա գեռ երեխա է:

Մակեդոնացին այդ նվերները մեկնաբանում է այլ կերպ, որ ինքը պետք է հաղթի Դարեհին և ժիրի Պարսկաստանին:

Ալեքսանդր Մակեդոնացու գուշակությունը իրագործվում է։ Նա նվաճում է Պարսկաստանը, իսկ Դարեհը սպանվում է դավադիրների կողմից։ Մակեդոնացու հանդիպումը մեռնող Դարեհի հետ պոեմի ամենացնցող տեսարաններից մեկն է։

Տիրելով Պարսկաստանին, Ալեքսանդր Մակեդոնացին արդարությամբ և խաղաղությամբ սկսում է կառավարել երկիրը։

Նա ամուսնանում է Դարեհի աղջիկ՝ դեդեցկուհի Ռոկսանի հետ և նրան ու Արխատտելին ուղարկում է Հունաստան, իսկ ինքը պատրաստվում է նոր արշավանքների։

Անընդհատ արշավանքների ժամանակ Ալեքսանդր Մակեդոնացին լինում է բազմաթիվ երկրներում՝ Ադրբեջանում, Հայաստանում, Արևադիայում և զալով Վրաստան, կառուցում է Թիֆլիս քաղաքը։

Լսելով, որ Ադրբեջանում իշխում է հզոր Թագուհի Նուշաբեն, շրջապատված բացառապես քաջ նաժիշաներով, Ալեքսանդր Մակեդոնացին որոշում է գնալ, տեսնել չքնաղ Ադրբեջանը և հուշակավոր Թագուհուն։ Նա Թագուհուն ներկայանում է որպես տիեզերահռչակ զորավարի գեսպանը, բայց խոհեմ Նուշաբեն խսկույն կռահում է, որ իր դիմաց կանգնած է հենց ինքը՝ Ալեքսանդր Մակեդոնացին։

Նիզամին բուն ոգևորությամբ նկարագրում է իր հայրենիքի՝ Ադրբեջանի դյուլթական գեդեցկությունը, փարթամ բնությունը և երկրի իմաստուն և քաջ տիրուհուն՝ Նուշաբենին։

Ալեքսանդր Մակեդոնացու և Նուշաբեի հանդիպման նկարագրությունը հանդիսանում է պոեմի ամենաուշագրավ և ամենահմայիչ մասերից մեկը։

Այնուհետև նկարագրում է, թե ինչպես Ալեքսանդր Մակեդոնացին հաստատ մտադրություն ունենալով վերացնել աշխարհից բռնությունն ու ճնշումը, ընկնում է բազմաթիվ արկածների մեջ և գրավում է բազմաթիվ երկրներ։

Նա գրավում է Դերբենդը, բազմաթիվ այլ բերդեր, որից հետո Տիրեոտի վրայով հասնում է Ջինաստան։

Վերադարձին Ալեքսանդր Մակեդոնացին հիմնում է Սամարղանդ քաղաքը, հետո պատրաստվում է գնալ հայրենիք, բայց այդ ժամանակ լսելով, որ Բարդայի վրա հարձակվել են ուս-

ները և ավերել երկիրը, որոշում է արշավել ուսաների վրա և գերությունից պառնել Նուշարեին: (Մովսես Կազանկատուացու «Պատմություն Ազգանից երկրի» 3-րդ գրքում, որը կարծում են սխալ են վերադրում նրան, նկարագրված է Պարտավի առումը ուսաների ձեռքով 914 թվից հետո, երեւի 944 թ.):

Նիզամին ուսաներին պատկերում է անվեհեր ընավորությամբ: Նրանք խիզախ պատերազմողներ են և կռվում են առյուծների պես: Ռուս կանաչք նուշնպես քաջ են, աղատասեր և առաքինի:

Հսկայական դժվարություններ հաղթանարելուց, յոթ արյունահեղ ճակատամարտից հետո միայն Ալեքսանդր Մակեդոնացուն հաջողվեց գերությունից պառնել Նուշարեին:

«Իսկենդեր Նամե» պոեմի առաջին մասը ավարտվում է մի առասպելով: Ալեքսանդր Մակեդոնացին խմանում է, որ հյուսիսային բևեռում կա մի խավար աշխարհ, որտեղ հոսում է կենդանության առուն: Այդ ջրից խմողը հավիտյան կապրի և կլինի երիտասարդ: Համոզվելով, որ անհնարին է գտնել անմահական ջուրը, Ալեքսանդր Մակեդոնացին նորից վերադառնում է լույս աշխարհը:

Պոեմի երկրորդ մասում պատմվում է Ալեքսանդր Մակեդոնացու աշխարհաշեն գործերի և նրա իմաստության մասին:

Վերադառնալով Հունաստան, մեծ աշխարհակալը կարգադրում է աշխարհի բոլոր իմաստունների աշխատությունները թարգմանել հունարեն: Այնուհետև նա իր շուրջը համախմբում է բազմաթիվ փիլիսոփաների և հոգ է տանում, որ երկրում զարգանան գիտությունները և արվեստը:

Դրանից հետո խոսվում է այն մասին, որ Ալեքսանդր Մակեդոնացին իր գլխին ունեցել է երկու եղջյուր, պատմվում է Արքիմեդի սիրո մասին և Մակեդոնացու զրույցը Դիոգենեսի հետ:

Ալեքսանդր Մակեդոնացին քաջատեղյակ է և հմուտ բազմաթիվ գիտությունների մեջ: Նա վիճում է հնդկական գիտնականի և Հունաստանի յոթ մեծ փիլիսոփաների՝ Արիստոտելի,

Պլատոնի, Սոկրատեսի և ուրիշների հետ—երկրի կազմության, ոգու էության, աշխարհի առաջացման և այլ գիտական խնդիրների մասին:

Այստեղ զբաւուրվում է Նիդամիի արտակարգ գիտելիքները և հունական փիլիսոփայության խորը ճանաչողությունը:

Չափազանց կարևոր է նշել, որ Նիդամին ճշմարտության բանալին տեսնում է ոչ թե կրոնի, այլ գիտության մեջ: Նրա հերոսը՝ Ալեքսանդր Մակեդոնացին աշխարհում արդարությունը հաստատելու համար առաջնորդվում է Պլատոնի, Սոկրատեսի և Արիստոտելի ուսմունքներով:

Ճշմարտությունը գտնելու համար Ալեքսանդր Մակեդոնացին շրջում է բաղնաթիվ երկրներ: Նա լինում է Աֆրիկայում, Հյուսիսային երկրներում, Հնդկաստանում և այլ աշխարհներում:

Վերջապես հյուսիսում Ալեքսանդր Մակեդոնացին տեսնում է իր ցանկացած իդեալական երկիրը: Դա մի երջանիկ երկիր է, որտեղ չկա խաբբայություն, կեղծիք և ճնշում: Այստեղ չկա շահագործում, տեր և ստրուկ, բոլոր մարդիկ իրար հավասար են, նույն իրավունքով ոգտվում են երկրի բարիքներից: Բոլորը անխաիր աշխատում են և ապրում ազատ: Մարդիկ կազմում են մի եղբայրական ընտանիք, նրանք չունեն իշխան, երկիրը կառավարում է ինքը՝ փողովուրդը:

Այս պատկերի մեջ ամբողջ վեհությամբ արտացոլված է հանճարեղ բանաստեղծի իդեալը:

Վերադարձին Ալեքսանդր Մակեդոնացին հիվանդանում և մահանում է: Նրա գիակը փոխադրում և հողին են հանձնում Ալեքսանդրիայում:

Պոեմը ավարտվում է Հունաստանի յոթ իմաստունների վախճանով և Սոկրատեսի մահվամբ:

Ահա սա է ընդհանուր գծերով «Իսկենդեր-Նամե» պոեմի սյուժեի սխեման:

«Իսկենդեր-Նամե» մոնոմենտալ պոեմայով ավարտվում է «Խամսե» («Հնգամասյան») հանճարեղ երկը, որով Նիդամին անմահացավ համաշխարհային գրականության մեջ, որպես էպիկական, ռոմանտիկական պոեմների հեղինակ:

Բայց Նիդամին միենույն ժամանակ մեծ լիբիկ բանաստեղծ է:

Մինչև այսօր Նիդամիի լիբիկան շատ քիչ է ուսումնասիրված, որովհետև մեծ մասամբ դառնում է ձեռագիր վիճակում: «Նիդամու Դիվան» կոչվող ձեռագրերի ժողովածուներ կան Օկսֆորդի, Բեռլինի, Կահիրեի և Հնդկաստանի գրադարաններում: Բացի այդ, Նիդամիի բազմաթիվ գաղեկները տեղ են գտել հին տաղարաններում և ժողովածուներում:

Արևելագետներից շատերը հաղորդում են, որ Նիդամիի դիվանը բաղկացած է 20 հազար բեյթից, բայց Ն. Բերտելսը այդ համարում է չափազանց օթյուն և կարծում է, որ Նիդամիի լիբիկան հիմնականում ունի երկու հազար բանաստեղծական տող (տես Բերտելս «Աղբրեջանի մեծ բանաստեղծ Նիդամին» Բաքու, 1940 թ. էջ 123):

Նիդամիի լիբիկայի հիմնական ժանրը հանդիսանում է դավելը: Գրականագետ Հ. Արասլին գրում է.

«Աղբրեջանում առաջին անգամ դադել գրող եղել է Նիդամին. Նիդամիից ավելի առաջ գաղել գրող բանաստեղծները մինչև հիմա մեզ անհայտ են:

Այս ձևն աղբրեջանական պոեզիայում արաբական արշավանքներից հետո է ստեղծվում և աղբրեջանական պոետների կողմից զարգացվելով հասցվում է մինչև մեր ժամանակները» (Նիդամի Գյանջևի «Ընտիր գաղեկներ» Բաքու, 1940 թ. էջ 6):

Դադելի մեծ վարպետ լինելով, Նիդամին կարողացել է հաղթահարել լիբիկայի այդ ժանրի այն դժվարությունները, որի մասին խոսում է Գյոթեն:

«Գաղեկները ունեն այն առանձնահատկությունը, որ պահանջում են շատ հարուստ բովանդակություն: Միահնչյուն, նորից ու նորից կրկնվող հանգը պահանջում է նույնանման խոհերի պաշար: Դրա համար էլ այդ ժանրը յուրաքանչյուրին չի հաջողվում» (նույն տեղ էջ 7):

Նիդամիի գաղեկների մեջ շոշափված են հասարակական խնդիրները: Նա հանդես է գալիս որպես լուսավորիչ, քննադատում է ֆեոդալական կաշկանդումները, ագիտությունը, կրոնի դոգմաները: Նա երգում է աշխարհի, կյանքի վայելքները՝ կինը և գինին:

Նիդամիի գաղեղները առյուծի բաժինը կազմում է սիրային լիրիկան: Ինչպես պոեմներում, այնպես էլ գաղեղների մեջ Նիդամին սիրո հանճարեղ երգիչ է, մաքրկային նուրբ և աղնիվ գագաթունքների արտահայտիչ:

Նիդամիի 20-ից ավելի ընտիր գաղեղները հայերեն թարգմանել է Աշոտ Գրաշին. նրանք ճնշող մեծամասնությամբ սիրային լիրիկայի զողարիվ նմուշներ են (տես՝ Նիդամի Գյանջի «Ընտիր գաղեղներ» թարգմանություն Աշոտ Գրաշի, 1940 թ.):

Ե. Բերտեյը ընդլայնելով Նիդամիի սիրային գաղեղները, գրում է.

«Դրանք կրքերով լի, բայց լույսակեզ սրտի քնքույշ և անբիծ գեղումներ են...

Դա—այն ճշմարիտ, մեծ սերն է, որ իր համար ոչինչ չի փնտռում, որը բարձրագույն հաճույքը տեսնում է նրանում, որպեսզի իրեն ամբողջապես տա իր սիրածին» (Բերտեյ «Աղբյուրեղանի մեծ բանաստեղծ Նիդամին» Բաքու, 1940 թ. էջ 125):

Նիդամիի կյանքի և ստեղծագործություն այս չափազանց համառոտ ակնարկից հետո, այժմ անցնենք մեզ հետաքրքրող հարցերին: Նախ Նիդամին ի՞նչ առնչություն է ունեցել հայ ժողովրդի և կուլտուրայի հետ, այլ խոսքով՝ Նիդամիի ստեղծագործություն հայկական աղբյուրները, և երկրորդ՝ որ մեր աշխատություն հիմնական նպատակն է՝ Նիդամին հայ գրականության մեջ, թե նրա կերպարները և թեմատիկան ինչպես և ով է արտացոլել հայ գրականության մեջ:

ԳԼՈՒԽ II

Ինչպես տեսանք, Նիզամի Գյանջևին ծնվել, ապրել և ստեղծագործել է Գյանջա քաղաքում: Միջնադարի այդ նշանավոր քաղաքը, Անդրկովկասի մյուս քաղաքների նման, ունեցել է ինտերնացիոնալ կազմ: Բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էին ադրբեջանցիները և հայերը: Այժմ ևս Գյանջա (Կիրովաբադ) քաղաքում կողք-կողքի ապրում են բազմադարյան հարևանները՝ այդ երկու եղբայրական ժողովուրդները:

Ադրբեջանական գրականության հետ մեկտեղ 12-րդ դարում Գյանջայում զարգանում էր հայկական կուլտուրան և ադրբեջանական բանաստեղծների հետ միասին ստեղծագործում էին հայ գրողները:

Նիզամին հայրենակից և ժամանակակից է նշանավոր հայ երաժագետ և առակախոս, «Գատատանազրբի» հեղինակ Մխիթար Գոշը: Նա Գյանջայում էր այն ժամանակ, երբ Նիզամին կերտում էր իր հուշակավոր պոեմները: 13-րդ դարում ապրել և գործել են մատենագիրներ Կիրակոս Գանձակեցին և մի շարք այլ հեղինակներ:

Անձամբ ծանոթ է եղել Նիզամին իր ժամանակակից հայ գրողների հետ, մանավանդ Գյանջայում ապրող գրողների հետ, դրա մասին ոչինչ հայտնի չէ, ոչ մի տեղեկություն չի պահպանվել: Սակայն տրամաբանորեն դատելով պետք է ենթադրել և միանգամայն հավանական է, որ Նիզամին շփվել է իր հայրենակիցների՝ հայ կուլտուրայի ներկայացուցիչների հետ, իսկ Նիզամի լայն տեղեկությունները Հայաստանի մասին ունենալու հավանական են դարձնում Նիզամի ծանոթությունը առհարարակ հայկական միջավայրի հետ:

Հանձարեղ գրողի ողջ ստեղծագործությունը ցույց է տալիս, որ նա ընդարձակ պատկերացում և տեղեկություն է ունեցել Հայաստանի, հայ ժողովրդի և նրա արվեստի մասին: Նիզամին հիացմունքով և մեծագույն համակրանքով է խոսում Հայաստանի և հայ ժողովրդի մասին:

Այդ անսակեռից հատկապես ուշագրավ է «Խոսքով և Շիրին» պոեմը, որտեղ կարելի է գտնել հիացմունքի բազմաթիվ տողեր Հայաստանի և նրա ժողովրդի մասին:

Գովերգելով Հայաստանի լեռները և հայկական վանքերում ապրող իմաստուն և ազնիվ ծերունիներին, Նիզամին գրում է.

«Ելավ Շափուրը, պատշաճ կերպով պատրաստեց այն, ինչ անհրաժեշտ էր, ճամփա ընկավ, կտրեց տափառտանը տափառտանի կռակից, շտապեց դեպի Հայաստանի սարերը:

...Տեղ հասնելով, Շափուրը հիացավ լազուր ժայռերով, որ փոխ էին առել ծաղիկների գույնը, երկնապաղ սարերով, որոնց գազաթներին զմրուխտյա գորգեր էին փռել:

Սարերում գրանիտից կառուցված հնամենի մի վանք կար, ուր ծերունի ճգնավորներ էին ապրում: Շափուրը այդտեղ կանգ առավ հանգստանալու, քանի որ հոգնել էր երկար ճամփից: Հանգստացավ և խնդրեց այն իմաստուն ծերունիներին ասել, թե ինչ տեղ են զբոսնում այն զեղեցիկուհիները և թե որտեղ են լինելու վաղը:

Ազնիվ ծերունիներն ասացին նրան, թե հանգիստակա՞ծ սարի գոգին մոտ գտնվող հովտում են զբոսնում այն սեզ նոճիկները» (Նիզամի Գյանջևի «Խոսքով և Շիրին» հայերեն արձակ փոխադրեց Գարեգին Սեյդունյ, Բաքու, 1940 թ. էջ 14):

Հայտնի է, որ համարյա բոլոր հայ հին գրողները՝ մատենագիրները և բանաստեղծները ունեցել են կրոնական կոչում, եղել են վանականներ, կամ ճգնավորներ: Առաջին հայ աշխարհական գրողը, որ կրոնական կոչում չի ունեցել, 13-րդ դարի բանաստեղծ-տաղերգու Ֆրիկն է:

Նիզամիի գովասանական տողերը ազնիվ ճգնավոր ծերունիների մասին, անկասկած վերաբերում է հայ մատենագիրներին, կամ բանաստեղծներին, որոնք կանթեղի աղոտ լույսի տակ անց են կացրել անքուն գիշերներ, գրելով մագաղաթների վրա

հայ ժողովրդի դյուցազնական տարեգրությունը, կամ կերտելով գեղարվեստական խոսքի անմահ էջեր: Որ իսկապես այստեղ խոսքը վերաբերում է հայ գրողներին, երևում է Նիզամիի բնորոշումից: Նիզամին նրանց անվանում է իմաստուններ, այսինքն գիտությամբ և արվեստով զբաղվող մարդիկ:

«Սուրով և Շիրին» պոեմի բաղմամթիվ էջերում սիրված են ջերմ համակրանքի և սիրո տողեր հայ ժողովրդի աղնիվ զավակների մասին: Մի առանձին գովասանքով և հմայքով է խոսում Նիզամին հայ աղջիկների մասին:

Պարսկաստանի Սուրով թագավորի այն հարցին, թե որ երկիրն է գեղեցկուհիների հայրենիքը, ներկաներից մեկը պատասխանում է.

«Գեղեցկուհիները հայրենիքը Հայաստանի նվիրական հողն է, այնտեղի գեղեցկուհիները փերիներ են: Այն երկիրը գեղեցկուհիների զրախտն է:

Այն բարի մարդը, երբ Հայաստանի անունը տվեց, Սուրովի սիրտը թրթռաց: Իր մեջ նա ողջունեց նրա ասածը, միայն թե ներկաներից ամաչեց բարձրաձայն համաձայնել դրա հետ»:
(Նույն տեղ, էջ 91):

Իր տեղում արդեն տեսանք, թե ինչպիսի հիացմունքով Նիզամին փառաբանում է Շիրինի աստվածային գեղեցկությունը, բարոյական մաքրությունը, առաքինությունը, մեծահոգությունը, հավատարմությունը, հոգու վսեմությունը: Շիրինը Նիզամիի ամենահամակրելի կերպարներիցն է:

Նիզամիի հանձարի շնորհիվ է, որ Շիրինը դարձել է համաշխարհային գրականության մեջ ամենահմայիչ, լավագույն կանացի կերպարներից մեկը:

Ազրբեջանական ժողովրդի մեծ բանաստեղծից հետո, ֆոլոսի մի շարք վարիանտներում և ուզբեկական հռչակավոր գրող Նավոիի «Փարհադ և Շիրին» պոեմում Արևելքի գեղեցկուհին պատկերվել է որպես հայուհի: Այստեղից մի շարք գրականագետներ ենթադրել են, որ այս տրագիդիան գալիս է Նիզամիից:

Այսպիսով Շիրինի բարեմասնությունները, գեղեցկությունը,

իմաստությունը աշխարհով մեկ առաջին անգամ մեծ վարպետութեամբ ցույց է տվել տարբեր շահական ժողովրդի մեծ գրողը:

Համաշխարհային գրականութեան մեջ համալիրելի կանանց կերպարների մրցահանդեսում Շիրինը առաջավորների շարքումն է գտնվում:

Յեղային և կրոնական տարբերությունը արգելք չհանդիսացավ մեծ հումանիստին իր հանճարի ամբողջ թափով պատկերելու Շիրինի վսեմությունը և բարոյական գեղեցկությունը:

Իրավացի է պրոֆեսոր Մ. Ռաֆիլին, երբ խոսելով «Պոստով և Շիրին» պոեմի մասին, գրում է.

«Իր գլխավոր և սիրելի հերոսուհուն Նիզամին ընտրեց քրիստոնեուհի, գեղեցկուհի Շիրինին (Շիրին բառացի նշանակում է քաղցր, անուշ): Դա արգեն մի համարձակ քայլ էր Սրեկեքի ժողովուրդների գրականութեան մեջ հաստատված տրադիցիայի կործանման ասպարեզում:

Նիզամիի մտերիմներից մեկը չկարողացավ իրեն զսպել, նախատեց, որ նա իր հերոսուհուն ընտրել է քրիստոնեուհի: Բայց, երբ Նիզամին նրան կարգաց իր վեպը, ապա նա լռեց դյուլթվելով ոտանավորների գեղեցկութունից և գեղեցիկ նկարագրություններից» (Միքայիլ Ռաֆիլի «Նիզամի», Բաքու, 1939 թիվ, էջ 55):

Ֆոկլորի և մասնավորապես Նիզամիի «Պոստով և Շիրին» ստեղծագործության ժողովրդասիրությունը, առանց ցեղային և կրոնական տարբերության, ինտերնացիոնալիզմը հետազայում շարունակեցին բազմաթիվ գրողներ, մասնավորապես ուղղեկական ժողովրդի հանճարը՝ Նավոին: Ուղղեկատանի համալսարանի դոցենտ Շիրվանի Յուսուֆ-Ջիյան գրում է. «Փարհադ և Շիրին»-ի հանճարեղ ստեղծող Նավոին, իր գրանդիոզ պոեմը կերտելիս, բացարձակապես պահանջ չէր զգում սահմանափակելու գործողությունների վայրը իր հայրենիքի շրջանակներում: Դեպքերը, որի մասին նա պատմում է, ծավալվում են Զինաստանի, Իրանի, Հունաստանի և Հայաստանի ընդարձակ տերիտորիայում: Նրա հերոսներն են հանդիսանում չինացի Փարհադը, իրանցի Շափուրը, հայուհի Շիրինը և ուրիշները:

Այդպես էլ Նիզամիի պոեմները մեջ հերոսները հանդիսանում են զանազան ժողովուրդների ներկայացուցիչները:

Հստակ արտահայտված կոսմոպոլիտիզմի այդ իդեաներումն է Նիզամիի ստեղծագործությունների բնորոշ առանձնահատկությունը, որով նա տարբերվում է ազգային նեղ շրջանակներում պարփակված գրողներից, օրինակ՝ Ֆիրդուսուց, որի հերոսները միշտ միայն իրանցիներ են» («Նիզամի»—3-րդ ժողովածու, Բաքու, 1941 թիվ, էջ 66):

Այսպիսով կարելի է պնդել, որ Նիզամիի շնորհիվ Շիրինը ոչ միայն մտել է համաշխարհային գրականության մեջ, այլև հետագայում հայ ժողովուրդը այնքան է սիրել Շիրինին, որ նրան դարձրել է հայուհի: Իհարկե այդ արագիցիան կարող է զալ և արևելյան ժողովուրդների ֆոլկլորում տարածված գրոյ-ցից Ֆարհադի և Շիրինի սիրո մասին: Ֆոլկլորի մեջ ևս Շիրինը հայուհի է: Բայց անփխտելի է Նիզամիի հսկայական դերը Շիրինի մասսայականացման մեջ, իսկ մյուս կողմից կասկածից զուրկ է մեծ բանաստեղծի ազդեցությունը նաև արևելյան ժողովուրդների ֆոլկլորի վրա: Հաջորդ գրվածքը, որտեղ Նիզամին տալիս է բավականին ընդարձակ տեղեկություններ Հայաստանի մասին «Իսկենդեր-Նամե» մեծածավալ պոեմն է:

Հայ ժողովրդի պատմություն համար Նիզամիի հաղորդած տեղեկությունները հետաքրքիր են Հայաստանում տեղի ունեցած պատմական իրադարձությունների նկարագրությամբ:

Գտնվելով երկու աշխարհների՝ Նվրոպայի և Ասիայի միջև Հայաստանը անհիշատակ ժամանակներից հանդիսացել է ավերիչ պատերազմների թատերաբեմ: Բազմաթիվ աշխարհակալներ խուժում և ավերում էին երկիրը, քայքայում, կործանում ծաղկած քաղաքները և գյուղերը:

Հայ ժողովրդի և նրա հայրենիքի պատմական այս վիճակն էր արտացոլումն է ստացել Նիզամիի ստեղծագործության մեջ:

Բազմաթիվ հայ գրողներ, որ սկսած դեռ 5-րդ դարից պատկերել են հայ ժողովրդի տառապանքը ավերիչ պատերազմների

հետևանքով, ցավալով ցույց են տվել Հայաստանի անբարենպաստ աշխարհագրական դիրքը, որի հետևանքով երկիրը ենթարկվում էր անընդհատ հարձակումների և ասպատակությունների ուշադրավ արտահայտություն է գտել նաև Նիզամիի ստեղծագործություն մեջ:

Դարեհի և Իսկենդերի պատերազմները ծանր հետևանք են ունենում Հայաստանի համար: Նիզամին պատմում է, թե ինչպես Դարեհի հսկայական բանակը կատաղած ծովի պես խուժում է Հայաստան: Դարեհի բանակը որտեղով որ անցնում, թողնում է ամայություն, ավերած երկիրը մասնում գիշատիչներին: Նիզամին ասում է, որ երբ Դարեհի բանակը մտավ Հայաստան, կարծես հասել էր վերջին դատաստանի օրը: (Տես՝ «Իսկենդեր-Նամե», ռուսերեն թարգմանեց Բերտելսը, Բաքու, 1940 թիվ, էջ 130—131):

Մի այլ տեղում Նիզամին տազնադով պատմում է, որ հյուսիսային ցեղերից վտանգ է սպառնում հայերին: (Նույն տեղ, էջ 313):

Մեծ հումանիտար համակրանքը Հայաստանի նկատմամբ չի արտահայտվում միայն նրանով, որ կարեկցություն է խոսում հայ ժողովրդի մասին, նկարագրելով նրա տառապանքը և երկրին սպառնացող վտանգը: Դրա հետ միասին, Նիզամին տեսնում է Հայաստանի ապատությունը, երազում է տեսնել հայ ժողովրդին երջանիկ և բախտավոր, ճնշումներից ազատ:

Նիզամիի պատկերացումով Ալեքսանդր Մակեդոնացին արեւելեյան դեսպոտ չէ: Նա փրկիստիա, իմաստուն և արդարադատ միապետ է: Նվաճելով բազմաթիվ երկրներ, Ալեքսանդր Մակեդոնացին ամենուրեք տարածեց իմաստությունը, հովանավորում և պաշտպանում էր իրեն ենթակա ժողովուրդներին: Նա ամեն տեղ հաստատեց ճշմարիտ օրենքներ և բարեկարգեց ժողովուրդներին կյանքը: Հավատի խնդիրներում համբերատար լինելով, Ալեքսանդր Մակեդոնացին հարգում էր ժողովրդների տարբեր դավանանքները, սովորությունները, չէր բռնանում մարդկանց հավատի, խղճի վրա:

Շինարար թագավորը Արաբիայում, Պարսկաստանում, Սիրիա-

յում և մյուս նվաճած երկրներում, վերացրեց բռնությունը, ստրկությունը, և սկսեց խնամել ժողովրդներին, աղքատներին օգնել, նրանց մաս հանելով իր անբավ գանձարանից:

Բայց Ալեքսանդր Մակեդոնացին դեռ չէր նվաճել Հայաստանը և հեռեկան հայ ժողովուրդը չէր ճաշակել նրա կառավարման արդասիրքները:

Նիզամին ցանկանում է, որ Ալեքսանդր Մակեդոնացին հովանավորի նաև Հայաստանը, վերացնի ճնշումը երկրից, պաշտպանի հայ ժողովրդի իրավունքը և ազատությունը: Նիզամին պատմում է, որ Ադրբեջանի տիրակալից գալիս է սուրհանդակ և ասում է.

«Քանի որ շահը, խաղաղություն է բերել աշխարհին,
Ու վերջ է տվել նա ողջ աշխարհում բռնություններին,
Ինչո՞ւ նա հայոց աշխարհի մասին չի հոգում բնավ
եվ ինչո՞ւ, ինչո՞ւ չի ուզկորվել այդ երկիրը նա:
Ձէ որ երկիրն այդ այնքան մոտ է քո օրերին արդար,
Ինչո՞ւ է մնում նա դիշերից¹⁾ էլ մութ ու խավար»:

(Նույն տեղ, էջ 207—208,)

Թարգ. Ս. Գրիգորյան:

Միջնադարյան խավարում, կրոնական մոլեռանդության, հալածանքների, ավերածությունների և պատերազմների ժամանակաշրջանում հայ ժողովրդին բախտակից ադրբեջանական եղբայրական ժողովրդի մեծ բանաստեղծը և հումանիստը հանդիսացել է հայ ժողովրդի ազնիվ բարեկամը: Նա երազել է Հայաստանը աեսնել անկախ, ազատ բռնությունից, իսկ հայ ժողովրդին՝ ցանկացել է բարեկեցություն և երջանկություն:

Նիզամիի կերպարները կենդանի և բնական են, հանդիսանում են գեղարվեստական խոշոր ընդհանրացումներ և պահպանում իրենց հմայքը գարբերի ընթացքում, որովհետև դրանք ծագում են ժողովրդից, ֆոլկլորից, իսկ հայտնի է «որ հերոսներ»

¹⁾ Բառախաղ. շամ = գիշեր = Սիրիա, այսինքն՝ ինչու Հայաստանը երջանիկ չէ, ինչպես Սիրիան. — Ծանոթություն ն. Բերտեխսի:

քի ամենից ավելի խորը և պայծառ, դեղարվեստականորեն կատարյալ տիպերը ստեղծել է ֆոլկլորը, աշխատավոր ժողովրդի բանավոր ստեղծագործութունը» (Մաքսիմ Գորկի):

Մոսկւով ֆոլկլորի բազմադարյան մնացուկ, կենդանի օրրագների մասին, Մաքսիմ Գորկին գրում է.

«Երանք բոլորն էլ պաակներեն են, որոնց ստեղծման մեջ ներդաշնակորեն զուգակցվել են ռացիոն և ինստիուցիան, միտքն ու զգացմունքը: Այդպիսի զուգակցումը հնարավոր է միմիայն այն դեպքում, երբ ստեղծողն անմիջականորեն մասնակցում է իրականության ստեղծագործման աշխատանքին, կյանքի նուրացման պայքարին»:

Մաքսիմ Գորկու այս տողերը ամբողջապես վերաբերում են նաև Նիզամիին և նրա կերպարներին:

Նիզամիի հերոսների շարքը մարդկային մտքերի, զգացմունքների ներդաշնակ միասնութուն է, որովհետև դրանց հեղինակը իրականության հանդեպ չի ունեցել հայեցողական վերաբերմունք: Նա պայքարել է բանական կյանքի համար, նա ակտիվորեն մասնակցել է կյանքի բարեփոխման պայքարին:

Նիզամին լինելով իր ժամանակի ամենակուլտուրական և ամենալուսավորյալ մարդկանցից մեկը, ֆոլկլորից բացի, օգտվել է բազմաթիվ գրավոր աղբյուրներից՝ պատմական մատյաններից և հիշատակարաններից:

Անժխաելի է, օրինակ, որ Նիզամին քննադատորեն յուրացրել է Ֆիրդուսիի «Շահ-Նամե»-ի այն հատվածները, որտեղ խոսվում է Բահրամ Գուրի, Մոսրուկի և Ալեքսանդր Մակեդոնացու մասին, տալով սակայն միանգամայն այլ մեկնաբանություն և մշակելով վերոհիշյալ կերպարները ամբողջապես ինքնուրույն ձևով:

Արաբական և պարսկական գրավոր աղբյուրներից բացի, Նիզամին ծանոթ է եղել նաև հայկական և անդրկովկասյան մյուս ժողովրդների գրականությանը: Ուշագրավ է Նիզամիի հետևյալ խոստովանությունը. «Ժսկենդեր-Նամե»-ի մեջ նա ասում է, որ ինքը Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը գրելիս օգտագործել է բազմաթիվ գրավոր աղբյուրներ: Նիզամին գրում է.

«Պատմելով այդ թագավորի մասին, հորիզոնները նվաճողի մասին, ես չտեսա այդ գծագրված միասին մի կապույցի մեջ.

Խոսքերը կուտակված, որպես զանձարան,

Բոլոր ցուցակների մեջ եղել են ցրված:

Ամեն մի ցուցակից ես վերցրի արժեքավորը,

Եվ արտահայտեցի այդ հղկված բանաստեղծության մեջ.

Բացի նորագույն պատմություններից (եւ ուսումնասիրել եմ և գրքեր) հրեական, քրիստոնեական, և պահլավական»:

(Նիզամի «Իսկենդեր Նամե», ուսւ. թարգմանեց Ե. Բերտելս, Բաքու, 1940 թիվ, էջ 71):

Ուրեմն Նիզամին իր իսկ խոստովանությամբ, պոեմները գրելիս օգտվել է վերոհիշյալ լեզուներով գրված աղբյուրներից:

Մեկ թվում է, որ քրիստոնեական գրքերի տակ առաջին հերթին պետք է հասկանալ հայկական և վրացական աղբյուրները:

ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի անդամ-թղթակից, Նիզամիի ճանաչված մատնագետ Ե. Բերտելսը մեկնաբանելով Նիզամիի վերոհիշյալ տողերը, գրում է.

«Նորագույն պատմությունների տակ, նա, իհարկե, նկատի ունի արաբական և պարսկական խրոնիկաները: Բայց հրեական և քրիստոնեական գրքերի տակ, նա լինչ է հասկանում: Ելնելով 12-րդ դարի Աղբրեջանի և հատկապես Գյանջայի էթնիկական կազմից, կարելի է ենթադրել, որ բանաստեղծը կամ անմիջապես, կամ երրորդ անձնավորությունների օգնությամբ ծանոթանում է նույնպես ասորական, հայկական և վրացական աշխատությունների հետ», (Բերտելս, նույն տեղ էջ, 18):

Մի այլ աշխատության մեջ Բերտելսը, բացահայտելով Նիզամիի կապը հայկական գրավոր աղբյուրների հետ և մատնանշելով, թե ինչպես հայկական և վրացական գրականության միջոցով նա ծանոթացել է հունական փիլիսոփայության հետ, գրում է.

«Այստեղ առաջին հերթին պետք է նշել տրագիկայի եռյակի կազմը, որից ոգտվել է Նիզամին: Եթե Ֆիրդուսին իր քերթվածքը հիմնել է Սառանյան կոնցեպցիայի բազայի վրա, (խոսքը

Ալեքսանդր Մակեդոնացու մասին է—Գ. Ա.), որ և համապատասխանում է նրա սեփական հայացքներին, ապա Նիզամին ապրելով մուսուլմանների և քրիստոնեաների՝ այսինքն վրացիների և հայերի սերտ շփման շրջանում, չցանկացավ և չէր կարող պաշտպանել իր դարն ապրած հայացքները։ Այդ տրադիցիայի միջոցով նրա առաջ բացվում էր երկրորդ ճանապարհը դեպի անտիկ աշխարհը։ Այդ պոեմայի («Խսկենդեր-Նամե»—Գ. Ա.) բազմաթիվ էջերը պարզ ասում են այն մասին, որ հին հունական փիլիսոփայությունը նրան հայտնի է ոչ միայն իսլամական-արիստոտելիզմի այն կեղևով, որի մեջ նա լայն տարածում է ստացել խալիֆաթի երկրներում արդեն 10-րդ դարի նախօրյակին, այլև հայտնի է նաև այն լուսաբանությամբ, այն ձևի մեջ, որով նա պահպանվել է Վրաստանի և Հայաստանի հնադարյան վանքերում, որոնց կյանքի մասին Նիզամին այնքան շատ գիտեր։ Ալեքսանդրի մասին պոեմային դա տալիս է հատուկ արժեք և դարձնում է նրան հուշարձան, որ քացահայտորեն առանձնահատուկ տեղ է գրավում նախկին խալիֆաթի երկրների բոլոր դրականության մեջ»։ (Բերտելս «Աղբյուրների մեծ պոեմ Նիզամին» Բաքու, 1940 թիվ, էջ 108—109)։

Բերտելսի տեսակետները միանգամայն հավանական են, քանի որ նա իր մտքերը հաստատում է Նիզամիի ստեղծագործություններին բերելով միանգամայն համոզեցուցիչ փաստեր։

Նիզամիի առնչությունը հայ կուլտուրայի և դրականության հետ ակնբախ է «Յոթ գեղեցկունի» և հատկապես «Խոսրով և Շիրին» ու «Խսկենդեր-Նամե» պոեմներին։

«Յոթ գեղեցկունի» պոեմի մեջ Բահրամ Գուրի օբրատը կերտելիս Նիզամին օգտվել է աղբյուրական, հայկական, վրացական, ինչպես և պարսկական առասպելներից։

Պոեմայի գլխավոր հերոսը Պարսկաստանի Սասանյան թագավոր Բահրամ Գուրն է, որը պատմական աղբյուրների մեջ համապատասխանում է Հազկերտ առաջինի որդի՝ Վարախրամ հինգերորդին (420—438 թ.թ.)։

Բայց, ինչպես նշում է Բերտելսը, Նիզամիի մոտ պատմական այդ անձնավորության մեջ արտահայտվել է Մերձավոր Արևելքի ժողովուրդների առասպելների ազդեցությունը։ Նիզա-

միւր Բահրամ Գուրի մասին Բերտելսը գրում է. «Սասանյան թագավորը, շնորհիվ նրա անվան համաձայնութեան հին աստվածութեան Վերեթրազնի հետ, և հալմանաբար վրացական և հայկական միջավայրում գոյութեան ունեցող համանման տրանսֆորմացիայի օգնութեամբ դարձել է կոսմիկական որսորդ, պայծառ հերոս, որը իր զգացմունքների բոլոր դրսևորումների մեջ չգիտե սահման՝ նույնչափ անզուսպ է, ինչպես սիրտ, այնպես և աստեութեան մեջ» (Բերտելս «Աղբրեջանի մեծ պոետ Նիզամին» Բաքու, 1940 թ. էջ 81):

Նիզամիի Բահրամ Գուրը գեղեցիկ է և հմայիչ: Նա բացառիկ որսորդ է, իր արտակարգ ուժի և քաջութեան շնորհիվ կարողանում է հաղթել հրեշներին և ֆանտաստիկ գազաններին:

Դժվար չէ նկատել, որ առյուծաքաղ Բահրամ Գուրը իր այս գծերով հիշեցնում է հեթանոսական շրջանի հին հայերի աստծուն՝ Վիշապաքաղ Վահագնին, որի մասին ժողովրդի մեջ եղած առասպելը դեռ 5-րդ դարում Գողթան երգիչներից լսել և գրի է առել իր «Հայոց պատմութեան» մեջ Մովսէս Խորենացին:

Նշելով Բահրամ Գուրի կապը հայկական առասպելի հետ, Բերտելսը գրում է.

«Մեր տարեգրութեան 420 թվից մինչև 438 թիվը Իրանում թագավորում էր Վարախրամ 5-րդը: Նրա անունը ժողովրդին հիշեցնում էր հնագույն աստվածութեան Վերեթրազնին՝ ամպրոպի և կայծակի աստծուն, դրա համար էլ ժողովուրդը նրա հիշատակը դարդարել է բազմատեսակ լեգենդաներով և զրույցներով: Իրանք հատկապես խիստ տարածված էին կովկասում, որտեղ վրացիները Վերեթրազնին գիտեին Վախթանգ անունով, հայերը կոչում էին Վահագն, աղբրեջանացիները՝ Բահրամ Գուր»: (Տես՝ Նիզամի Գյանջևի «Հեքիաթ ուսական արքայադստեր մասին», Բաքու, 1941 թիվ, էջ 8):

Ուրեմն, Նիզամին կերտելով Բահրամ Գուրի կերպարը, առաջին հերթին պիտի օգտվեր կովկասյան ժողովուրդների առասպելներից:

Բերտելսը մատնանշելով այն հանգամանքը, որ Նիզամին իր ողջ ստեղծագործութեամբ կապված է եղել կովկասյան, հետևա-

պէս նաեւ հայկական իրականութեան հետ, գրում է. «Հազիւ թե լինի պատահականութեան, վոր Նիզամին իր հայացքը դարձրել է Վահագն և Վախթանգ անունով հերոսի վրա, որը հայանի է և՛ Հայաստանին, և՛ Վրաստանին, և հետևապէս ունի սերտ կապ Կովկասի հնագույն զրույցներին հետ: Ձէ որ չի կարելի մոռանալ, որ Նիզամին համար «Խոսրով և Շիրին»-ը ևս առաջին հերթին կապված է Կովկասի իրականութեան հետ»: (Բերտելս: «Ազդրբեյանի մեծ պոետ Նիզամին», Բաքու, 1940 թիվ, էջ 82):

Նիզամին «Խոսրով և Շիրին» սիրավեպը ավելի սերտ առնչութեան ունի հայկական իրականութեան հետ, քան «Յոթ գեղեցկունի» պոեմը:

Հայ ժողովրդի մեջ եղած զրույցները Ծարհադի և Շիրինի սիրոյ մասին և հայ մատենագիրներին գործերում պահպանված տեղեկութեանները Պարսկաստանի թագավոր Խոսրովի և Շիրինի սիրոյ մասին, բերում են այն համոզման, որ Նիզամին ծանոթ է եղել և օգտվել է Խոսրովի ու Շիրինի պատմութեան հայկական աղբյուրներից, մասնավորապէս Սեբեոսի «Պատմութեանից»:

7-րդ դարի նշանավոր մատենագիր Սեբեոս եպիսկոպոսը «Է դարուն սկիզբներն ծնած ըլլալու է. ինչպէս կը վկայէ և ինքն» (Չարբհանալյան «Հայկական հին գաղութեան պատմութեան», Վենետիկ, 1897 թիվ, էջ 436): Սեբեոսը ապրել և ստեղծագործել է այն ժամանակ, երբ Պարսկաստանում իշխում էր Որմիդդի (579—590) որդի Խոսրով Արբուեզը (Փարվիզը 590—628) և որոշ ժամանակ եղել է պարսից արքունիքում: Քաջատեղյակ լինելով Խոսրովի կյանքին, Սեբեոսը ատում է «Սասանական հէն Արբուեզ Խոսրովին», «հորձանիչ և ավերող Խոսրովին, առտուծուց անիծվածին»:

Նիզամին Խոսրովի տիպը կերտելիս Սեբեոսի նման նրա նկատմամբ ունեցել է բացասական վերաբերմունք:

Սեբեոսն իր պատմութեան սկզբում հաղորդում է Մարաբասի գրքի մասին, համառոտ պատմում է Հայկի և Բելի առասպելը, խոսում է Հայկի հաջորդների, Արա-Գեղեցիկի, Շամիրամի և այլոց մասին և հետո պատմում է, թե ինչպէս հայերը ընկնում են Ասորեստանի, Մեդիացիների և Ալեքսանդր Մակեդոնա-

ցու տիրապետութեան տակ: Այնուհետեւ համառոտ խոսում է Վարդան Մամիկոնյանի, Վահան Մամիկոնյանի ղեկավարած ապստամբութեան և Խոսրով Անուշիրվանի մասին:

Այդ ամենը Սերեոսի «Պատմութեան» հիմնական նյութը չի հանդիսանում, այլ կարծես ներածական բաժինն է:

«Պատմութեան» բուն նյութը պարունակվում է երկրորդ մասում, սկսած 8-րդ գլխից: Այդ մասը Սերեոսը անվանում է ժամանակակից պատմություն «Մատեան ժամանակեան, պատմութիւն թագաւորական, վեպ արիական, վանումն տիեզերական, հէն Սասանական՝ Այրուէզն Խոսրովեան, որ հրդեհեալ բոցացոյց զսուր ներքոյս ամենայն, զգորգեալ զծով և զցամաք, զարթուցանել զկործանումն ի վերայ ամենայն երկրի» («Սերէոսի եպիսկոպոսի պատմութիւն» ի ձեռն Մալխասեանց, Երևան, 1939 թ. էջ 32):

Այս տողերից երևում է, որ Սերեոսի աշխատութեան հիմնական թեման հանդիսանում է Խոսրով Արրուեզի պատմությունը: Եվ իսկապէս, Սերեոսը ընդարձակ պատմում է պարսից թագաւոր Որմիզդի հաջորդ Խոսրով Արրուեզի մասին: Մանրամասն նկարագրված են Խոսրովի կյանքը, նրա տիրապետությունը և պարսկա-բյուզանդական երկարամյա պատերազմները, մանավանդ Խոսրովի հաղթական արշավանքները հույների դեմ՝ Մորիկ կայսրի սպանությունից հետո:

Ուրեմն Սերեոսի «Պատմութեան» հիմնական թեման 7-րդ դարի քաղաքական անցքերն են, որոնց ականատես է եղել նա:

Սերեոսը «ժամանակակից պատմութեան համար իրրեւ աղբյուր ունեցել է մեծ մասամբ ականատեսների պատմաձևերը: Շատ բան, հարկավ, անձամբ տեսել է: Այս պատճառով և Սերեոսի գիրքն իր ժամանակի պատմութեան համար առաջնակարգ աղբյուր է իր ստուգութեամբ»: (Ակադեմիկոս Մ. Արեղյան «Հայոց հին գրականութեան պատմություն» I, Երևան, 1944 թ. էջ 390—391):

Զարբհանալյանը ևս Սերեոսի պատմութեան մեջ հիմնականը համարում է ժամանակակից (7-րդ դարի առաջին կեսի), Խոսրովի ժամանակի ղեկավարի նկարագրությունը:

«2 դարուն վերջերն և է-ին կեսուն՝ ոչ միայն պարսից և հունաց մեջ նշանավոր գործեր եղան դաշանց և պատերազմաց, այլև հայք անոնցմե նեղյալք կամ ձանձրացյալք կամ անհամբերք՝ թե ապստամբության և թե քաջության գործեր ըրին, որ երկու ինքնակալ պետությանց մեջ ալ հռչակվեցան և անոնց մտադրությունն արթնացուցին: Սերեոս եաքի և գլխավոր գործերուն ակնաստես՝ ուզեց զանոնք զրով ավանդել, մանավանդ ամենեն հռչակավոր ղեպվածն, որ էր Հերակլ կայսեր արշավանքն ի վերա պարսից, անցնելով կրկին անգամ ընդ Հայաստան: Ասոր պատերազմներն ընդ պարսից, և այս եաքի-ներուս տերության շիոթությունն Ապրուեզ Խոսրով թագավորին ատեն, և քիչ մ'առաջ և. ետև...»

(Չարբհանայան «Հայկական հին դարության պատմություն», Վենետիկ, 1897 թիվ, էջ 436):

Ստեփանոս Մալխասյանցը Սերեոսի «Պատմություն»-ը բաժանում է երեք մասի՝ հերոսական կամ առասպելական շրջան, զրան հաջորդող պատմական ժամանակները, և վերջին մասը կազմում է հեղինակին ժամանակակից հինգ թագավորների ցավալի ժամանակները: Ըստ Մալխասյանցի Սերեոսը հինգ թագավորներ ասելով, նկատի ունի բյուզանդական կայսրեր Մորիկին (ռուսերեն Մավրիկիյա 582—602), Փոկասին (Փոկ), Հերակլին (610—641), Կոստանդինոսին և Կոստանդին (641—668) (Տես՝ «Սերեոս եպիսկոպոսի պատմությունը», Երևան, 1939 թիվ, ռուսերեն, Մալխասյանցի, ծանոթություն): Այնուհետև Մալխասյանցը ասում է, որ «Սերեոսի հիմնական նպատակն է եղել նկարագրել Խոսրով Աբրուեզի թագավորությունը»: (Նույն տեղ, ծանոթություն 70), իսկ Ալիսյանը մինչև իսկ գտնում է, որ Սերեոսի երկը պետք է կոչել «Խոսրով Փարվիզի պատմություն»: (Սերեոս, հայերեն, էջ 181):

Այն ժամանակ, երբ Նիզամին Խոսրովի տիպն էր կերտում և գեղարվեստորեն վերարտադրում նրա կյանքը, արդեն հրապարակի վրա կար այնպիսի մանրամասն և ստույգ աղբյուր, որպիսին Սերեոսի «Պատմություն» է, որի գոյության մասին

բանաստեղծը չէր կարող չիմանալ և հետևապես հայ պատմիչի աշխատությունը չէր կարող վրիպել նրա ուշադրությունից:

Նիզամիի «Խոսրով և Շիրին» պոեմի սյուժետային գիծը, Սերեոսի «Պատմության» ու Նիզամիի պոեմայի մեջ բաղմաթիվ դեպքերի նմանությունը, զուգադիպությունը պերճախոս վկայում են, որ մեծ բանաստեղծը անկասկած ծանոթ էր Սերեոսի «Պատմության»:

Նիզամիի ծանոթությունը Սերեոսի աշխատության հետ ցույց տալու նպատակով համառոտակի ծանոթանանք Սերեոսի «Պատմության» այն տեղերին, որտեղ նա խոսում է Խոսրովի մասին:

Պարսկաստանի Սասանյան թագավոր Որմիզդը անխոհեմ քաղաքականության հետևանքով իր դեմ լարում է նշանավոր զորավար, Պարսկաստանի արևելյան նահանգների կառավարիչ և զորքերի հրամանատար Վահրամին (Նիզամիի մոտ Բահրամ Զուրին):

Դժ զորավար Վահրամը իր զորքերի կողմից հռչակվելով թագավոր, «արծվի արագությամբ» (Սերեոս, էջ 35)՝ արշավում է դեպի Պարսկաստանի մայրաքաղաքը, Որմիզդին վահճնկեց անելու համար:

Պալատական նախարարները Սասանյան գահը փրկելու նպատակով կուրացնում՝ ապա սպանում են Որմիզդին և նրա որդուն, անչափահաս Խոսրովին կարգում թագավոր:

Խոսրովն անկարող լինելով դիմադրել ասպտամբներին, թողնում է Պարսկաստանը և փախչում Արևմուտք: Վահրամը գրավում է Պարսկաստանի մայրաքաղաքը, թագավորական գանձերը և գահը:

Խոսրովը թանկագին նվերների հետ նամակ է ուղարկում Բյուզանդիայի կայսր Մորիկին՝ օգնություն խնդրելով նրանից հոր գահը ուղուրադատորից ազատելու համար:

Մորիկ կայսրը ուղարկում է իր զորքերը Խոսրովին օգնության: Խոսրովը կայսերական զորքերի գլուխն անցած, արյունահեղ ճակատամարտում հաղթում է ասպտամբներին: Հաստատվելով պարսկական գահի վրա, Խոսրովը երկար տարիներ իշխեց և բաղմաթիվ պատերազմներ մղելով, հրդեհեց աշխարհը:

Սոսրովը շատ նվերներ ուղարկեց Մորիկին և երախտագիտությամբ իրեն համարեց Մորիկի որդեգիրը:

Հայտնի է, որ Մորիկը ծագումով եղել է հայ (տես՝ Զարբ-հանալյան «Հայկական հին դպրության պատմություն», Վենետիկ, 1897 թիվ՝ էջ 432), իսկ Նիդամին պատմում է, որ Սոսրովը ամուսնանում է Մորիկի դուստր, գեղեցկուհի Մարիամի հետ: Այդպիսով Սոսրովի կին Մարիամը հոր կողմից հայուհի է:

Դրանից հետո Սերեոսը պատմում է, թե ինչպես Սոսրովը իրեն կին է առնում քրիստոնեուհի, գեղեցկուհի Շիրինին և դարձնում թագուհիների թագուհի: Շիրինը, ազատ ու անկաշկանդ դավանում էր իր հավատը: Սերեոսը գրում է. «Էին սորա (Սոսրովի) կանայք բազում ըստ աւրինի մոզութեան իւրեանց, բայց առ սա և կանայս քրիստոնեայս, և սորա կին քրիստոնեայ յոյժ գեղեցիկ ի Սուլթանտան աշխարհէ, անունն Շիրին: Սա է բամբիշն, տիկնաց տիկին: Շինեաց վանս և եկեղեցի մերձակայ արքունական կայնիցն, և բանակեցոյց ի նմա քահանայս և պաշտաւնեայս. կարգեաց ռոճիկս և հանդերձազինս յարքունուստ, զարդարեաց ոսկով և արծաթով: Եւ բարձր ի գլուխ համարձակութեամբ քարոզեր զավետարանն արքայութեան ի դրանն արքունի. և ոչ ոք իշխէր ի մեծամեծաց քաղէիցն բանալ դերբան իւր և ասել բան մի մեծ կամ փոքր ընդ քրիստոնէի»: («Սերէոսի եպիսկոպոսի պատմութիւն» ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևվան, 1939 թիվ, էջ 47):

Այնուհետև հայ մատենագիրը պատմում է, որ Սոսրովը լսելով Մորիկի սպանվելը Ֆոկասի կողմից, սկսում է պատերազմական հաղթական գործողություններ Բյուզանդիայի դեմ իր հայրազրի վրեժը առնելու համար: Ֆոկասին տապալելով, Հերակլը դառնում է կայսր և հաղթում է Սոսրովին:

Սերեոսը մանրամասն նկարագրում է Հերակլի և Սոսրովի պատերազմները, քաղաքական անցքերը Բյուզանդիայում, Պարսկաստանում և Հայաստանում 7-րդ դարի առաջին կեսին՝ Հերակլի և Սոսրովի թագավորության ժամանակ:

Սերեոսի «Պատմությունը» Սոսրովի մասին վերջանում է նրանով, որ բռնակալ և դաժան, «Կործանիչ և ավերող» Սոսրովը

տաանյակ տարիներ իշխելուց հետո, զգվեցնում է պարսկական իշխաններին, որոնք ձերբակալում են Սոսրովին և գահ են բարձրացնում նրա որդուն՝ Կավատ Բ Շիրոյեին:

Կավատի հրամանով Սոսրովին և նրա բոլոր ժառանգներին մի ժամվա ընթացքում սպանում են (Նիզամիի մոտ հայրասպանը դեսպոտ Շիրոյեյն է՝ Սոսրովի որդին):

Ինչպես սլարզ հայելու մեջ տեսնելի է Նիզամիի պոեմի նմանությունը Սերեոսի «Պատմությունը»: Նրկու գեպքում էլ սյուժետային զարգացումը ընթանում է նույն գծով, մանավանդ պատմության սկիզբը՝ Վահրամի (Բահրամ Չուբին) ապստամբությունը, Սոսրովի զահրնկեց լինելը և հետո Սոսրովի հաղթանակը բյուզանդական կայսրի օգնության շնորհիվ:

Սերեոսի և Նիզամիի մոտ սյուժեի վերջավորությունը ևս միանգամայն նույնն է. Սերեոսի մոտ Սոսրովը սպանվում է դաժան որդու՝ Կավատի հրամանով: Նիզամիի մոտ ևս հայրասպանը նույն Կավատ Շիրոյեյն է:

Սերեոսը և Նիզամին միանգամայն բացասական, վանող գույներով են նկարագրում թե՛ Սոսրովին, թե՛ նրա որդուն: Սերեոսի պես, Նիզամին ցույց է տալիս, թե ինչպես Շիրոյեյն հորը սպանելուց հետո պահանջում է, որ իր հարեմում լինեն Սոսրովի բոլոր կանայք:

Պատմական գեպքերը գնահատելիս Սերեոսի և Նիզամիի հայացքները զարձյալ համընկնում են:

Սոսրովի արկածների մանրամասնությունների մեջ ևս կարելի է նկատել պատմիչի և բանաստեղծի հայացքների հարազատություն: Այսպես, օրինակ, Նիզամիի մոտ Սոսրովի քաջագործությունները, նրա ճարպիկ որսորդությունը, առյուծի սպանություն տեսարանը հիշեցնում են Սերեոսի մոտ բազմահաղթ և կորովի Սմբատ Բագրատունու սխրագործությունները:

Սմբատ Բագրատունու նկարագիրը գերազանցորեն գրական-գեղարվեստական ստեղծագործություն է. «Սերեոսի «Պատմությունը», ինչպես նաև հիշատակարաններն ընդհանրապես, չուներ սպեցիֆիկ գրական նշանակություն,—ասում է ակադեմիկոս Մ. Աբեղյանը,—որովհետև դա չի հորինված գեղարվեստորեն: Բայց դրա մեջ կան վիպականեր, զրույցներ, որոնք ծագում են

քերանացի բանաստեղծական ավանդություններէց, դրա համար էլ պատմված են մասամբ կենդանի ձևով: Այդպիսի հատվածներէ մեջ Սերեոսի աշխատությունը գրական նշանակություն էլ է ստանում, դրանցից մեկն է Մանուէլի որդի Սմբատ Բագրատունու զրույցը» (ակադեմիկոս Մանուէլ Արեղյան «Հայոց հին գրականություն» 1, Երեւան, 1944 թ., էջ 394):

Այդ գեղեցիկ զրույցի մեջ պատմվում է, թե ինչպես ազատասեր և հայրենասեր Սմբատ Բագրատունին պատրաստում է ապստամբություն բյուզանդական անտանելի լուծը թոթափելու համար: Սմբատ Բագրատունին մատնվելով ձերբակալվում է և դատապարտվում մահվան: Կայսրի հրամանով Սմբատ Բագրատունուն մերկ և անզեն նետում են կրկես՝ զազաններին կերակուր դառնալու համար:

Սմբատ Բագրատունին անհափ կորովի և բազմահաղթ դյուցազն է, վայելուչ կազմվածքով, ջլուտ մկաներով, լայնաթիկունք, ֆիզիկական ահռելի ուժի տեր:

Կրկեսում նրա դեմ դուրս են բերում մի կատաղի արջ: Բայց կորովի ասպետը չի շփոթվում, այլ մոնչալով, հարձակվում է, բռնեցքով սոսկալի հարված է հասցնում արջի ճակատին: Արջն անշնչացած, ընկնում է գետնին: Բայց են թողնում մի հսկայական ցուլ: Բագրատունին չի ընկճվում: Նա բռնում է ցուլի եղջյուրներից և ոլորելով վիզը, կոտորում է եղջյուրները: Ուժասպառ ցուլը փախչում է կրկեսի հրապարակից:

Դրանից հետո Սմբատ Բագրատունու վրա նետվում է զազանների արքան՝ առյուծը: Այս անգամ ևս չի հուսահատվում Սմբատ Բագրատունին, այլ զարմանալի ճարակությամբ բռնում է առյուծի ականջներից, ցատկում, նստում է մեջքին և առասպելական Սամսոնի նման, անպարտելի բազուկներով լսեղբում և սպանում է անառապի թագավորին (Սերեոս, գլուխ 18-րդ):

Հազարավոր հանդիսատեսների բռնն ցնծության ու ծափերի տակ Բյուզանդիայի կայսրը ստիպված Բագրատունուն շնորհում է կյանքը:

Դա մի գեղեցիկ, դմայելի առասպել է, որը Սերեոսը լսելով ժողովրդից, գրի է առել իր պատմության մեջ:

Մենք հիմք ունենք ենթադրելու, որ Նիզամին Խոսրովի,

ինչպես նաև «Յոթ գեղեցկուհի» պոեմի հերոս Բահրամ Գուրի կերպարները կերտելիս օգտվել է նաև հայ ժողովրդական առասպելներին (Վահագնի առասպելը), ինչպես նաև Սեբեոսի մոտ պահպանված Սմբատ Բազրատունու մասին հորինված ժողովրդական զրույցից:

Նիզամիի խոսքովը ավելի սերտ առնչվում է Սեբեոսի «Պատմության» մեջ Մուշեղի վեպի հետ:

Խոսքովի և Մուշեղի ժողովրդական վեպի պատումի մեջ նկարագրված է, թե ինչպես Վահրամ Մերհևանդակը ապստամբելով, գրավում է Պարսկաստանի գահը: Խոսքովը ապավինում է հույների և ստանալով օգնություն Մորիկ կայսրից, կարողանում է հաղթել Վահրամին և գրավել հոր գահը: Խոսքովին օգնում էին նաև հայոց զորքերը՝ Մուշեղի գլխավորությամբ: Մուշեղի վեհանձնության շնորհիվ Վահրամը (Նիզամիի մոտ Բահրամ Չուբին) կարողանում է փախչել և աղատվել մահից: Խոսքովը որոշում է դավադրաբար սպանել Մուշեղին՝ թշնամուն փրկելու համար, սակայն դա նրան չի հաջողվում: Մորիկը Մուշեղին ուղարկում է Թրակիա, ուր ողբերգական մահով սպանում են հայոց սպարապետին:

Նիզամիի «Խոսքով և Շիրին», պոեմի մեջ այդ ամենը կա, բացի Մուշեղից: Նիզամիի մոտ Խոսքովը գրավում է գահը հույների օգնությամբ և հաղթում է Բահրամ Չուբին: Մյուսին նույնն է, միայն առանց Մուշեղի:

Անվանի գիտնական, աշագեծիկոս Մանուկ Աբեղյանը հիմնավոր փաստերով ցույց է տալիս, որ Սեբեոսի մոտ Խոսքովի և Մուշեղի պատումը գալիս է «Պարսից պատերազմ» հայ ժողովրդական վեպից, որը 5-րդ դարում գրական մշակման է ենթարկել Փավստոս Բյուզանդը:

Նշելով այս ղեկքում Փավստոսի ազդեցությունը Սեբեոսի վրա, Աբեղյանը գրում է.

«Այս իսկ վիպական պատմվածքը, որ Սեբեոսի մեջ շատ տեղ բուն ժողովրդական գույն ունի, որի հիմքը, սակայն, անպայման պատմական է, իր ձևով Բյուզանդի, Մուշեղի վեպի մի նորոգված պատմվածք է: Նույնություներն աղնայանի է: Այդ երկուսի միակ էական տարբերությունն այն է, որ Հունաստանից

հունաց զորքերով իր սպանված հոր դահը ժառանգելու համար եկող թագավորը ոչ թե հայոց Պապն է, այլ Սասանյան Խոսրովը: (Աղաղեմիկոս Մանուկ Աբեղյան «Հայոց հին գրականության պատմություն» I, Երեւան, 1944 թ., էջ 397):

Ուրեմն Խոսրովի վիճակը և սպանված հոր դահը ժառանգելու պատմությունն ամբողջապես նման է Պապի մասին եղած գրույցին: Հետևապես հավանական է, որ Նիզամին գիտեր Պապի գրույցը անմիջականորեն Փավստոս Բյուզանդի «Պատմություննից», կամ Սեբեոսի Խոսրովի և Մուշեղի նորոգված պատումի միջոցով:

Յոթերորդ դարի մի այլ հայ մատենագիր՝ Հովհան Մամիկոնյանի «Պատմություն Տարոնա» պատմավիպական աշխատության մեջ նույնպես կան բազմաթիվ նկարագրություններ պարսից թագավոր Խոսրովի և նրա վարած արշավանքների մասին, և ավելի ընդարձակ պահպանված է Խոսրովի և Մուշեղի վիպագրույցը:

Մովսես Կաղանկատվացին ևս տալիս է բավական տեղեկություններ Խոսրով թագավորի մասին:

Նիզամին, որ եղել է իր ժամանակի կրթված մարդկանցից մեկը, քաջատեղյակ շատ լեզուների, և ինչպես ինքն է ասում, կարգացել է հրեական, քրիստոնեական և պահլավական գրքեր, այսպիսով անկասկած ծանոթ էր Խոսրովի հայկական աղբյուրներին՝ Սեբեոսի, Հովհան Մամիկոնյանի, Մովսես Կաղանկատվացու և այլ մատենագիրների աշխատություններին:

Մեզ այդ համոզմանն է բերում հատկապես Նիզամիի «Խոսրով և Շիրին» պոեմի սերտ կապը Սեբեոսի պատմության հետ: «Խոսրով և Շիրին» պոեմի հայկական գրավոր աղբյուրները նշելուց հետո, այժմ անցնենք մեծ գրողի «Իսկենդեր-Նամե» երկի հայկական աղբյուրների պարզաբանմանը:

«Իսկենդեր-Նամե»-ի աղբյուրների մասին խոսելիս, սկզբից և եթ պետք է նշել, որ Նիզամին լսել է ժողովրդի մեջ տարածված բազմաթիվ գրույցներ Իսկենդերի մասին և օգտագործել է իր «Իսկենդեր-Նամե» պոեմայի մեջ:

Աղբյուրներում, հատկապես բանաստեղծի ծննդավայրում՝ Գյանջա քաղաքում, մինչև այսօր էլ ձերուհիները պատում են

զրույցներ իմաստուն Նիզամիի և նրա թեմաների շուրջը: Նիզամիի «Իսկենդեր-Նամե» պոեմի մոտիվներով ժողովրդի մեջ կան տարածված բաղմաթիվ լեգենդաներ և հեքիաթներ: Դա բերում է այն համոզմանը, որ Նիզամին «Իսկենդեր-Նամե»-ն գրելիս ձեռքի տակ ունեցել է Ալեքսանդր Մակեդոնացու շուրջը հորինված ժողովրդական լեգենդաների մի շարք վարիանտներ, բայց և հետագայում բանաստեղծի հանձարեղ վերամշակումներն իրենց հերթին տարածվել և մասսայականացել են ժողովրդի մեջ:

Փոփոխորի և Նիզամիի կապը եղել է փոխադարձ. վերջներով իր պոեմների նյութը ֆոփոխորից, Նիզամին իր հերթին հսկայական ազդեցություն է գործել ժողովրդական բանահյուսության վրա:

«Իսկենդեր Նամե»-ի մոտիվներով հորինված ադրբեջանական ժողովրդական լեգենդաներից բերենք մի երկու նմուշ:

«Իսկենդերի համբերությունը» հեքիաթի մեջ պատմվում է, որ Ալեքսանդր Մակեդոնացին տիրելով ամբողջ աշխարհին, ցանկացավ հարկատու դարձնել նաև ձկների թագավորին: Այդ նպատակով ուռկանով ծովից հանում են մի ջրամարդ, որը սակայն չէր հասկանում երկրի վրա ապրող մարդկանց լեզուն: Իսկենդերն իմաստունների խորհրդով ջրամարդին ամուսնացնում է մի կնոջ հետ և նրանք ունենում են մի երեխա: Իսկենդերը համբերությունը սպասում է, որպեսզի երեխան մեծանա: Երեխան մեծանալով, հասկանում էր հոր և մոր լեզուները:

Դրանից հետո Իսկենդերը երեխայի միջոցով նրա հորը հայտնում է իր մտադրությունը, ջրամարդն էլ գնում է ծովի հատակը և Իսկենդերի հրամանը հաղորդում ձկների թագավորին: Ծովի տիրակալը հրաժարվում է հարկ տալուց: Իսկենդերի հրամանով զինվորները համբերությունը, առանց շտապելու սկսում են ծովի շուրջը դատարկել: Ձկների թագավորը, երբ այդ իմանում է, ասում է. «Իսկենդարը, որ այսպես համբերությունը է գործ տեսնում, կասկած չկա, որ ծովը կցամաքեցնի: Գնացեք Իսկենդարին հայտնեցեք, որ ծովը չցամաքացնի, ինչ ուզում է կտամ»: Եվ այդպես, Իսկենդարի համբերությունը խորտակում է արգելքները:

«Իսկենդարի արդարադատությունը» զրույցի մեջ, Ալեքսանդր Մակեդոնացին պատկերված է որպես արդարադատ թագավոր և փողովրդի պաշտպան:

Խղճալով մի աղքատ կնոջ, Իսկենդարը նրան նվիրում է տերոգորմիա, որի հատիկները թանկագին քարերից էին: Հարուստ թաշիրը կաշառելով կեղծ վկաներին, հաստատում է, որ տերոգորմիան պատկանում է իրեն և կինը դող է: Գաղաքապետը հրամայում է կտրել կնոջ աջ ձեռքը: Իսկենդարը լսելով այդ անիրավությունը պատժում է հանցագործներին, թաշիրին կախում են ծառից և նրա ամբողջ կարողությունը հատկացնում զժրախտ կնոջը, վկաների լեզուն կտրում են, որպեսզի այլևս սուտ չխոսեն, իսկ քաղաքապետի երկու ձեռքը կտրում են, որպեսզի մյուս դատավորների համար դաս լինի և անմեղ մարդկանց ձեռքը չկտրեն:

Սրամիտ է «Ալեքսանդրը և մուրացկանը» զրույցը:

Ծառի տակ ընկած է մի ծերունի մուրացկան, որին անհանգըստացնում են աներես ճանձերը: Ալեքսանդրի այն հարցին, թե ինչով կարող է օգնել, ծերունի մուրացկանը խնդրում է, որ Ալեքսանդրը հրամայի ճանձերին իրեն չտանջեն: Ալեքսանդրը պատասխանում է, որ դա իր ուժերից վեր է, իսկ ծերունին պատասխանում է, թե եթե աշխարհի տերն անդոր է իշխելու և հրամայելու ճանձերին, ապա ինչո՞վ նա կարող է օգնել իրեն: Լսելով ծերունու խոսքերը, Ալեքսանդր Մակեդոնացին ընկնում է խոր մտածության մեջ և ապա շարունակում իր ճանապարհը:

«Ալեքսանդրի եղջյուրները» զրույցի բովանդակությունը այն ավանդությունն է, թե Ալեքսանդր Մակեդոնացին ունեցել է եղջյուրներ: Գաղտնիքը պահելու համար Ալեքսանդրն իր գլուխը սափրողներին անմիջապես զլխատում էր: Սափրիչներից մեկը իմանալով այդ, աղաչում է խնայել իր կյանքը և խոստանում է ոչ մի տեղ, և ոչ ոքի չպատմել գաղտնիքը: Ալեքսանդրը հավատում և չի սպանում սափրիչին: Անցնում են օրեր և սափրիչն էլ չհամբերելով, ընկնում է մի հորի վրա և երեք անգամ գոռում է, թե թագավորը եղջյուրներ ունի: Հորի մոտ բռնում է մի եղեգն, որից հովիվը պատրաստում է սրինգ և այդ սրինգը միայն մի բան էր նվագում՝ Ալեքսանդրը եղջյուրներ ունի:

Ալեքսանդրի դադանիքը խմանում են բոլորը: Թագավորը հրամայում է հովիվին նվագել սրինգը: Եվ սրինգը միշտ նույն երգն է երգում: Պարզելով ճշմարտությունը, Ալեքսանդր Մակեդոնացին ներում է և՛ հովիվին, և՛ սափրիչին:

Մեր նպատակից դուրս է պատմել Նիգամիի «Իսկենդար-Նամե»-ի ժողովրդական լեզենդների բոլոր վարիանտները: Դրանք շատ են և հատուկ ուսումնասիրության կարիք են զգում: «Ալեքսանդր Մակեդոնացու մահը» ազրբեջանական դմայելի լեզենդան պատիվ կրերի ամեն մի ժողովրդի ֆոկլորին (տես՝ «Նիգամի» ժողովածու երկրորդ, Բաքու, 1940 թիվ, էջ 151—154):

Պատմելով Իսկենդարի շուրջը հորինված լեզենդաներից մի երկուսը, ցանկացել ենք նշել և ցույց տալ մի կողմից Նիգամիի կապը ֆոկլորի հետ, իսկ մյուս կողմից Նիգամիի մոտիվները լայն տարածումը ժողովրդի մեջ:

Այնուհետև կարևոր է նշել, որ վերոհիշյալ պոեզյաները, լեզենդները պատմվում են ոչ միայն ազրբեջանական ժողովրդի, այլև մյուս ժողովուրդների մոտ: Հայտնի է օրինակ, որ «Ալեքսանդրի եղջյուրները» հեքիաթի մի վարիանտն էլ գոյություն ունի հայկական ֆոկլորում: Ճիշտ է, հայկական հեքիաթը անմիջականորեն չի վերաբերում Ալեքսանդր Մակեդոնացուն, այլ այստեղ նույն ձևով խոսվում է եղջյուրներ ունեցող մի անանուն թագավորի մասին: Մակայն կասկածից դուրս է, որ հայկական այդ հեքիաթը Ալեքսանդրի մասին եղած պոեզիի փոփոխված մի պատումն է: Կամ մի ուրիշ օրինակ. ազրբեջանական ժողովրդի մոտ պահպանվել է այն պոեզիան, թե Ալեքսանդր Մակեդոնացու անբավ գանձը թաքնված է Գյանջա քաղաքի մոտ: Համանման մի ավանդություն էլ կա հայերի մոտ, համաձայն որի Ալեքսանդր Մակեդոնացու գանձը թաղված է Նիգամիի ծննդավայրի մոտ, դրա համար էլ քաղաքը կոչվում է Գանձակ (գանձ խոսքից):

Այս և մյուս փաստերը բերում են այն համոզման, որ Նիգամին իր ստեղծագործությունամբ կապված է եղել ինչպես ազրբեջանական, այնպես էլ մյուս ժողովուրդների, որոնց թվում և հայկական ֆոկլորի հետ, իսկ մյուս կողմից Նիգամիի «Իսկենդար-Նամե» պոեմի մոտիվները լայն տարածում են ստացել կովկասյան ժողովուրդների ֆոկլորում:

Հին աշխարհի մեծ զորավարի կերպարը Նիդամիից դեռ շատ ավելի առաջ գրավել է բազմաթիվ զրոյների ուշադրութունը: Արևմուտքում և թե Արևելքում հորինվել են մեծ քանակությամբ կենսագրականներ, վեպեր և զրույցներ Ալեքսանդր Մակեդոնացու մասին:

Հունական մատենագիրները գրել են մեծ աշխարհակալի կենսագրութունը: Բացի պաշտոնական խրոնիկաներից, Ալեքսանդր Մակեդոնացու շուրջը հորինվել են զրական երկեր, վեպեր և զրույցներ գերազանցորեն հիմնված ժողովրդական լեգենդաների և ավանդութունների վրա:

Հին աշխարհում Ալեքսանդր Մակեդոնացու մասին հորինված վեպերից ամենատարածվածը և մասսայականացվածը եղել է Սուտկալիսթենեսի «Պատմություն վարուց Ալեքսանդրի» վեպը, որը ստեղծվել է մեր թվագրության I դարում և վերջնական ձևավորում է ստացել IV դարի սկզբներին: Երկար ժամանակ այդ վեպը վերագրել են Ալեքսանդր Մակեդոնացու բժիշկ Կալիսթենեսին, ըայց հետո պարզվել է, որ դա զրական կեղծիք է և գիտության մեջ այդ վեպը հայտնի է Սուտկալիսթենեսի անունով:

Գրական կեղծիքը երևում է նրանից, որ համաձայն վեպի, Ալեքսանդր Մակեդոնացին Ֆիլիպպի որդին չի, այլ Եգիպտոսի քուրմ Նեկտաներին դայթակեցնում է Ֆիլիպպ Մակեդոնացու կնոջ՝ Ոլիմպիադային և նրանց կապից ծնվում է Ալեքսանդր Մակեդոնացին: Այսպիսով ստացվում է, որ մեծ աշխարհակալը սերվում է եգիպտական փարաոններից և հետևապես նա ոչ թե օտարերկրյա նվաճող է, այլ եգիպտական թագավորների ժառանգն է և աստվածային իրավունքով ժառանգել է Եգիպտոսի գահը: Այս ձևով, ինչպես նշում է Բերտելսը, եգիպտական իշխողները աշխատեցին վերականգնել իրենց սասանված արժանագնատվությունը և բավարարել իրենց վիրավորված ինքնասիրությունը:

Եգիպտացիներին հետևելով, պարսիկները ևս իրենց արքայական տան աստվածային, ի վերուստ լինելը հաստատելու համար, վերամշակելով եգիպտական ծագում ունեցող Սուտկալիսթենեսի

սի վեպը, Ալեքսանդր Մակեդոնացուն դարձրին Աքեմենիանների սերունդից: Պարսկական վերսիայի համաձայն Ալեքսանդր Մակեդոնացին Դարեհ 2-ի և Ֆիլիպոս Մակեդոնացու աղջկա դուստրն է, հետևապես Ալեքսանդրը Դարեհ 3-ի մեծ եղբայրն է և պարսկական գահի օրինավոր ժառանգը: Ֆիրդուսին «Շահ-Նամե»-ի մեջ համարյա ամբողջապես նույն ձևով է պատմում Ալեքսանդր Մակեդոնացու ծննունդը:

Ըստ Բերտելսի, այս ճանապարհով, թե եգիպտացիները, և թե պարսիկները աշխատեցին հիմնավորել և արդարացնել իրենց երկրների նվաճումը Ալեքսանդր Մակեդոնացու կողմից և մեծ դորավարի տիրապետությունը՝ Նեփոտոսում ու Պարսկաստանում:

Նիզամիի «Իսկենդար-Նամե» պոեմից երևում է, որ բանաստեղծը ծանոթ է Սուտ-Կալիսթենեսի վեպին, ինչպես նաև պարսկական վարիանտին:

Սուտ-Կալիսթենեսի վեպի մեջ պատմվում է՝ Նեկտաների փախուստը Նեփոտոսից և կապվելը Ուլիսիսի հետ, Ալեքսանդրի ծննունդը, նրա արշավանքները, թե ինչպես Ալեքսանդրը գնում է Աֆրիկա և կռուցում Ալեքսանդրիա քաղաքը: Պատմվում է նաև Ալեքսանդր Մակեդոնացու պատերազմները Սիրիայում, հետո թե ինչպես ծախյալ, որպես զեսպան գնում է Դարեհի մոտ, նրանց ընդհարումը և Դարեհի մահը: Այնուհետև նկարագրված են Ալեքսանդր Մակեդոնացու բազմաթիվ պատերազմները, ֆանտաստիկ արկածները, նրա հանդիպումը թագուհի Կանդակայի հետ, Ալեքսանդրի ճամփորդությունը ամազոնականների երկրում և վերջապես նրա մահը Բաբելոնում:

Դժվար չի նկատել, որ վերոհիշյալ վեպի բազմաթիվ մոտիվները վերամշակված ձևով կան նաև Նիզամիի «Իսկենդար-Նամե»-ում:

Նիզամիի պոեմի մեջ ևս նկարագրված է, թե ինչպես Ալեքսանդր Մակեդոնացին գրավում է Նեփոտոսը և կռուցում Ալեքսանդրիա քաղաքը, նրա արշավանքները Սիրիայում և բազմաթիվ այլ երկրներում:

Ալեքսանդր Մակեդոնացին որպես ծախյալ զեսպան Աղբրե-

ջանի տիրուհի Նուշաբեին ներկայանալը և ամադոնկաների աշխարհը ընկնելը՝ այս տեսարանները Նիզամիի մոտ փոխված են: Նիզամիի մոտ դա արդեն տեղի է ունենում Ադրբեջանում: Նիզամիի Նուշաբեն փոխարինում է մի կողմից Դարեհին (դեսպանության տեսարանը), իսկ մյուս կողմից Թադուհի Կանդա-կային:

Եվ այսպես, կասկածից դուրս է, որ Նիզամին ծանոթ է Սուտ-Կալիսթենեսի վեպին: Մնում է պարզել մեզ հետաքրքրող հարցը, թե որտեղից գիտեր Նիզամին այդ վեպը:

Սուտ-Կալիսթենեսի «Պատմություն վարուց Աղեքսանդրի» հունարեն վերամշակված վեպը թարգմանված է եղել պարսկե-րեն, սակայն մինչև Նիզամիի ժամանակ չի պահպանվել: Հետե-վապես նա չէր կարող օգտվել պարսկական թարգմանությունից: Մնում են վեպի ասորական և հայկական օրինակները, որոնք պահպանվել են: Հայտնի է, որ Սուտ-Կալիսթենեսի «Պատմություն վարուց Աղեքսանդրի» վեպը հունարենից առաջին անգամ հայերեն թարգմանվել է Ծարդ դարում և Մովսես Խորենացին օգտվելով այդ երկից՝ վեպի մի հատվածի նմանությամբ նկա-րագրել է Տիգրանակերտի կործանումը: Կարծում են, որ վեպի թարգմանիչը եղել է մեր պատմահայրը. «վաղուց նկատված է, որ Սուտ-Կալիսթենեսի «Աղեքսանդրի վարքի» (որի հավանական թարգմանիչն է ինքը՝ Մ. Խորենացին) մի կտորի նմանությամբ գրած է Տիգրանակերտի կործանումը...» (աղագրեմիկոս Մ. Արեղ-յան «Հայոց հին գրականություն», դիրք առաջին, Երևան, 1944 թ., էջ 291):

Նշանակում է Նիզամին վեպը կարող էր իմանալ հունական, ասորական կամ հայկական օրինակներից: Ստույգ կարելի է պնդել, որ Նիզամին Սուտ-Կալիսթենեսի «Աղեքսանդրի վարքը» գիտեր հայկական թարգմանությունից:

Դեռ հայտնի չէ, և ոչ մի փաստ չկա, թե Նիզամին գիտեր հունական կամ ասորական լեզուները: Հունա-պարսկական պա-տերազմները և հակամարտությունը և հունական դպրոցների բացակայությունը Պարսկաստանին ենթակա երկրներում բա-ցառում են բոլոր հնարավորությունները, որպեսզի Նիզամին սովորեր հունարենը Գյանջայում: Իսկ հայերենը հաստատ կա-րելի է պնդել, որ Նիզամին գիտեր:

Եթե մինչև իսկ հայերեն չգիտեր, ապա դարձյալ կարող էր իմանալ հայկական թարգմանությունը երրորդ անձնավորությունների միջոցով՝ գրադեա հայերից, որոնց հետ միասին տասնյակ տարիներ Գյանջալում ապրել է բանաստեղծը: Մենք արդեն բերել ենք Բերտելսի այն տեսակետը, թե ելնելով 12-րդ դարի Ադրբեջանի, հատկապես Գյանջալի, էտնիկական կազմից, կարելի ենթադրել, որ Նիզամին ծանոթ էր ասորական, հայկական և վրացական աղբյուրներին (տես՝ Նիզամի Գյանջևի «Իսկենդար-Նամե» 1-ին մաս, Բաքու, 1940 թ., էջ 18):

Այնուհետև Բերտելսը ասում է, որ «Այս ճանապարհով, զուտ «մոլոսումանական» ավանդություններից բացի, նրա (Նիզամու—Գ. Ա.) առջև բացվում էր երկրորդ ճանապարհը դեպի անտիկ աշխարհի տրագիկաները» (նույն տեղ, էջ 18):

Բերտելսը, խոսելով Ալեքսանդր Մակեդոնացու կյանքի մասին եղած գրական պատումների և Նիզամիի «Իսկենդար-Նամե» պոեմի գրավոր աղբյուրների մասին, գրում է. «Ունենի իրենց վերսիաները և Անդրկովկասի ժողովուրդները: Սուա-կալիսթենեսը գոյություն ուներ հայկական պատումով (ИЗВОДЕ), իսկ Մովսես Սորենացու խրոնիկան ցույց է տալիս, նրա ծանոթությունը նաև ինչ-որ այլ, տեղական տրագիկանների հետ» (Ե. Բերտելս «Ադրբեջանական մեծ պոետ Նիզամին», Բաքու, 1940 թ., էջ 107):

Բերտելսն այստեղ պարզ շեշտում է Նիզամիի «Իսկենդար-Նամե»-ի հայկական գրավոր աղբյուրները:

Ժամանակն է արդեն ցույց տալ Նիզամիի անժխտելի կապը Մովսես Սորենացու հետ:

Մովսես Սորենացին իր «Հայոց պատմություն» 1-ին գրքի վերջում տալիս է երկու հավելված պարսկական առասպելներից՝ Բյուրասպ Աթահակի մասին: Սորենացու մոտ Բյուրասպ Աթահակը պարսկական միջոցադրի հերոս Զոհակն է, իսկ Հրունդենը Զոհակին հաղթող Ֆիրդուսի հնագույն անունն է:

5-րդ դարում Մովսես Սորենացին Զոհակի և Ֆիրդուսի առասպելը պատմում է նույն ձևով, ինչպես հետագայում Ֆիրդուսին «Շահ-Նամե»-ի մեջ: Սորենացին խոսում է նաև Ռու-

տամի և պարսկական ժողովրդական վեպերի ու զրույցների ալլ հերոսները մասին, որոնց մոտ հինգ հարյուր տարի հետո երգել է Ֆիրդուսին իր հանճարեղ քերթվածքի մեջ:

Ֆիրդուսու երգած վիպական և առասպելական մոտեցմերը և հերոսները հայկական ֆոլկլորում և մատենագրության մեջ, հատկապես Մովսես Խորենացու, Փավստոս Բյուզանդի և Աղաթանգեղոսի աշխատություններում մանրամասն ուսումնասիրված են Կ. Մելիք-Օհանջանյանի հոգվածաշարքում (տես՝ «Ֆիրդուսի» ժողովածու, Երևան, 1934 թ.): Մենք դրանց վրա կանգ չենք առնի: Միայն անցողակի հիշատակենք, որ Նիզամին երգել է Ֆիրդուսու պարսկական վիպական մոտիվները, պատկերել է պարսկական հերոս Բահրամ Գուրին և մյուսներին: Ճիշտ է Ֆիրդուսու «Շահնամե»-ի հերոսները Նիզամիի մոտ միանգամայն ալլ հաճախ հակոտնյա պատկերացում են ստացել, բայց մյուս կողմից չի կարելի ժխտել Նիզամիի առնչությունը Ֆիրդուսու հետ և այն, որ Բահրամ Գուրի, կամ Խոսրովի կերպարները կերտելիս Նիզամիի համար որոշ ելակետ հանդիսացել է Պարսկաստանի մեծ բանաստեղծի հանճարեղ երկը:

Անժխտելի է, որ Նիզամին հրաշալի ծանոթ է պարսկական դյուցազներգությանը, վիպական և առասպելական սվանդություններին և օգտվելով դրանցից, հավանական է դառնում նաև, որ Նիզամին կարող էր ծանոթ լինել պարսկական վեպերի և առասպելների հայկական վարիանտներին, որոնք պահպանվել են 5-րդ դարի հայ մատենագիրների գործերում:

Այդ խնդիրը կարոտ է հատուկ ուսումնասիրության և դրա վրա մենք չենք պնդում:

Բայց, որ Նիզամին Մովսես Խորենացու միջոցով կապվել է հունական աշխարհի և տրագիցիաների հետ, և ծանոթ է մեր պատմահոր աշխատությանը, այդ մենք պնդում ենք ամենայն վստահությամբ: Այդ համոզմանը մեզ բերում է Նիզամիի «Իսկենդար-Նամե»-ի մեջ հայտնած մի շարք կարծիքների զարմանալի զուգադիպությունը Մովսես Խորենացու հայացքների հետ:

Հին Արևելքի երկու մեծ պետությունների՝ եգիպտոսի և Պարսկաստանի իշխող խավերը իրենց պատիվը վերականգնելու

և Ալեքսանդր Մակեդոնացու տիրապետությունը այդ երկրներում արգարացնելու համար, ինչպես արդեն տեսանք, Ալեքսանդր Մակեդոնացու ծննդյան մասին հնարել են իրենց շահերին համապատասխանող վերսիսաներ: Եգիպտացիների ստեղծած կեղծ-Կալիսթենեսի վեպի համաձայն Ալեքսանդր Մակեդոնացին սերված է փարավոններից, իսկ Պարսկաստանի Սասանյան դինաստիայի պաշտոնական խրոնիկայում Ալեքսանդրը Աքեմենիան տոհմից է՝ Դարեհ 3-րդի եղբայրը: Այս վերսիսաները ամբողջ Արևելքում այնքան տարածված և ընդունված են եղել, որ մինչև իսկ հանձարեղ Ֆիրդուսին չկարողացավ հակադրվել պարսկական վարիանտին և «Շահ-Նամե»-ի մեջ կրկնում է պարսիկ իշխողների հնարած սուտը:

V դարում հայ մեծ մատենագիր Մովսես Խորենացին Արևելքի ժողովուրդների գրականության մեջ եղել է առաջիններից մեկը և թերևս միակը, որ չընդունելով այդ վերսիսաներից և ոչ մեկը, ասել է ճշմարտությունը Ալեքսանդր Մակեդոնացու ծագման մասին: Մովսես Խորենացին իր «Հայոց պատմություն» երկի երկրորդ գրքի առաջին գլխում, հույն մատենագիրներին հետևելով, ասում է. «Ալեքսանդր Մակեդոնացին, Փիլիպպոսի և Ոլիմպիադեսի որդին, որը Աքիլեսից քսան և չորրորդն էր, ամբողջ տիեզերքին տիրելուց հետո, շատերին բաժանելով յուր տերությունը կտակով, որ ամենքի իշխանությունը Մակեդոնյան կոչվի, ինքը մեռնում է» (աշխարհաբար թարգ. Խորեն Ստեփանես):

Նիզամին «Իսկենդար-Նամե» պոեմի «Պատմության սկիզբը և ճշմարիտ շարադրումը Իսկենդարի ծննդի մասին» գլխում նախ պատմում է ումիդական (հունական) վերսիսան: Մակեդոնիայի հզոր և արգարադատ թագավոր՝ Ֆիլիկոսը որսի ժամանակ պատահում է մեռած մի կնոջ, որի երեխան կաթի փոխարեն ծծում էր իր մատը: Թագավորը խղճալով, որդեգրեց անպաշտպան որբ երեխային և հետագայում նրան դարձրեց իր հաջորդը:

Նիզամին հետո պատմում է պարսկական՝ Ֆիրդուսու վերսիսան, թե Ալեքսանդր Մակեդոնացին Դարեհ 2-րդ թագավորի որդին է և հետևապես Դարեհ 3-րդի եղբայրը:

Նիզամին վերջում ժխտում է վերոհիշյալ երկու վերսիաներն էլ և տալիս է իր կարծիքը, որ Ալեքսանդր Մակեդոնացին Ֆիլիպպ (Նիզամի մոտ Ֆիլիկոն) թագավորի որդին է (տես՝ Նիզամի Գյանջևի «Իսկենդար-Նամե» 1-ին մաս, ռուսերեն թարգմանեց Ե. Բերտելս, Բաքու, 1940 թ., էջ 77—81):

Նիզամին ամբողջապես կանգնած է Մոսես Սորենացու տեսակետի վրա: Դա մի դարեկ և համոզեցուցիչ փաստ է, որ Նիզամին անկասկած գիտեր Մովսես Սորենացու աշխատությունը, իսկ դրա միջոցով նաև հույն մատենագիրներին տեսակետը:

Բերենք այլ օրինակներ հա:

Մովսես Սորենացին, Մեսրոպ Մաշտոցի կողմից ուղարկվելով Հունաստան և Ալեքսանդրիա, մի քանի տարի շարունակ սովորեց և հրաշալի յուրացրեց հունական լեզուն, փիլիսոփայությունը և պատմագրությունը:

Մովսես Սորենացին հիացմունքով է խոսում Հունաստանի մասին, որովհետև հույները ստեղծեցին իրենց սեփական կուլտուրան և թարգմանելով պահպանեցին ուրիշ ժողովուրդների գրականությունը «Ուստի բոլոր իսկ Հունաստանին չեմ տաքալուսում գիտությունների մայր, կամ դայակ ասեք» (Սորենացի, գիրք 1-ին, գլուխ Բ): Ժխտելով պարսկական առասպելները, Սորենացին ասում է. «Միթե սոքա հույների վսեմ և իմաստալիս առասպելներն են, որոնք այլաբանություն մը թաքցնում են իրանց մեջ գործերի ճշմարտությունը» (Սորենացի, գիրք 1-ի, հավելված «Պարսկական առասպելներին»):

Սովորելով Ալեքսանդրիայում՝ Նեոպլատոնականների կենտրոնում, Մովսես Սորենացին իր հայացքներով հարեց հունական փիլիսոփայության այդ ուղղությանը, և իզուր չէ, որ Սորենացին գովելով իր ուսուցչին, նրան անվանում է «Նոր Պլատոն» (Սորենացի, գիրք 3-րդ, գլուխ ԿԲ): Սորեն Ստեփանեն նշելով նոր-պլատոնականների հայացքների ազդեցությունը Սորենացու վրա, գրում է. «Մեր հեղինակը Զոհակին ներկայացնում է որպես Ներքովթի ժամանակակից և նորան Կենտրոն Պյուսիգ է համարում: Այս կարծիքն երևի Ալեքսանդրիայի դպրոցում նոր Պլատոնյանների մեջ ծնվեցավ...» (Սորենացի «Պատմություն հայոց» Սորեն Ստեփանի թարգմանություն, ծանոթ. 172):

Մովսես Խորենացու նման Նիզամին ևս հատուկ համակրական վերաբերմունք ունի հունական կուլտուրայի հանդեպ, բավականին տեղյակ է հունական փիլիսոփաների ուսմունքներին, յոթ մեծ իմաստունների շարքումն է Խորենացու սիրած Պլատոնը և ինչպես մեր պատմահայրը, Նիզամին ևս «հարում էր գնոստիկական-հեոպլատոնական հայացքներին» (Բերտելս «Աղբյուրներ շանի մեծ բանաստեղծ Նիզամին», Բաքու, 1940 թ., էջ 118):

Այս ամենը կարող են լինել պատմական զուգադիպություններ, բայց մյուս կողմից միանգամայն հավանական է, ճշմարտության մոտ է Բերտելսի տեսակետը, որ Նիզամին հին-հունական փիլիսոփայությունը ընկալել է ոչ միայն մանմեղական Արևելքում տարածված ձևով, այլև այն լուսաբանությամբ, որով նա պահպանվել է «Վրաստանի և Հայաստանի հնագրքային վանքերում, որոնց կյանքի մասին Նիզամին այնքան շատ գիտեր»: Հունա-պարսկական հակամարտությունը և արաբական տիրապետությունը հաջորդող սելջուկ-թաթարների արշավանքները միանգամայն դժվարեցնում էին անմիջական շփումը հին հունական փիլիսոփայության հետ: Դա ենթադրել է տալիս, որ Նիզամին, ապրելով 12-րդ դարում, կարող էր հունական փիլիսոփայությունը ծանոթ լինել հարևան ժողովուրդների՝ հայկական և վրացական աղբյուրներին:

Հայ հին մատենագիրները բազմաթիվ հիշատակություններ ունեն հին հունական փիլիսոփայության և գիտություն մասին: Մովսես Խորենացին ասում է, որ «լուսինը արեգակի լույսով է լցվում» (Խորենացի, գիրք 3-րդ գլուխ 46); իսկ 7-րդ դարի հռչակավոր հայ գիտնական-բնագետ, մաթեմատիկոս և աշխարհագրագետ Անանիա Շիրակացին ամբողջապես հետևում է հին հունական փիլիսոփայությանը և բնագիտական տեսություններին՝ Փլոնին և Արիստոտելին, տեղ-տեղ նույնիսկ թարգմանաբար: Անանիա Շիրակացին ճշմարտության բանալին ավելի շուտ տեսնում է գիտության, քան կրոնի մեջ, սուր քննադատություն է ենթարկում աստղադոշակությունը, համարելով այդ սուտ գիտություն, «անհամ պատմություն» (մանրամասնությունը տես՝ աղագեմիկոս Մ. Աբեղյան «Հայոց հին գրականություն պատմություն», գիրք 1-ին, Երևան, 1944 թ., էջ 385):

Նիդամիի «Իսկենդար-Նամե» պոեմի վերջին գլուխներում, որտեղ խոսվում է աշխարհի կազմության, հոգու էություն և փիլիսոփայական այլ խնդիրների մասին, կարելի է հանդիպել մեծ բանաստեղծի այնպիսի հայացքներին, որոնք համընկնում են Մովսես Խորենացու և Անանիա Շիրակացու արտահայտած տեսակետներին: Ուշագրավ է օրինակ, որ Նիդամին Անանիա Շիրակացու նման կասկածի տակ է առնում աստղաբաշխությունը և Շիրակացու պես Նիդամին ևս գիտությունը գերադասում է կրոնից:

Մովսես Խորենացու պատկերացմամբ Ալեքսանդր Մակեդոնացին լուսավորյալ միապետ է, գիտություն և արվեստի հովանավորող: Խոսելով Մար-Աբաս Կատինայի «Պատմություն» մասին, Խորենացին գրում է. «Այս մատյանը, Ալեքսանդրի հրամանով, քաղգեղեն լեզվից հունարենի թարգմանված, պարունակում է իր մեջ հների և նախնիների բոլոր պատմությունը» (Խորենացի, գիրք 1-ին, գլուխ Թ):

Նիդամին Նույնպես ունի համանման մի պատմություն, որ Ալեքսանդր Մակեդոնացու կարգադրությամբ տարբեր ժողովուրդների գրականությունը թարգմանում են հունարեն, և մանրամասն նկարագրում է Ալեքսանդր Մակեդոնացուն, որպես փիլիսոփա, իմաստուն միապետ, արդարություն և ճշմարտություն սիրող տիրակալ, այսպիսով խորտակելով հների, սրանց թվում և Ֆիրզուսու պատկերացումը Ալեքսանդր Մակեդոնացու մասին, որպես դաժան աշխարհակալ և ավերիչ:

Ուրեմն այս դեպքում ևս Նիդամիի հայացքները Ալեքսանդր Մակեդոնացու մասին համընկնում են Խորենացու տեսակետի հետ:

Հանճարեղ Նիդամին իր էպոխայի մեծագույն մտածողը լինելով, յուրացրել է իր ժամանակի առաջավոր գաղափարները, օգտվել է բազմաթիվ ժողովուրդների, որոնց թվում և հայկական գրավոր աղբյուրներից և իր հերթին հսկայական ազդեցություն է գործել համաշխարհային գրականության վրա:

Նիդամիի ստեղծագործության հայկական աղբյուրների քննությունից հետո, այժմ անցնենք մյուս հարցին՝ Նիդամիի ազդեցությունը հայ հեղինակների վրա, Նիդամիի թեմաները և կերպարները հայ գրականության մեջ:

Առայժմ դժվար է քիչ թե շատ համապարփակ պատասխանել այն հարցին թե՝ Նիդամին ինչ չափով է ազդել հայ գրողներին վրա և թե ինչպես են արտացոլվել Նիդամիի մոտիվները և կերպարները հայ գրականությունում: Այդ ուղղությամբ մինչև այժմ համարյա թե ոչ մի հետազոտական աշխատանք չի կատարված: Մենք մտադիր ենք միայն նախնական փորձ կատարել այդ հարցին պատասխանելու ուղղությամբ:



Նիդամիից հետո 13—14-րդ դարերում հայ գրականության մեջ երևան են եկել բազմաթիվ սիրավեպերի, հեքիաթների և վիպական ստեղծագործությունների պատումներ, ինչպես օրինակ՝ «Աղեքսանդրի վեպը», «Պղնձե քաղաքի պատմությունը» (Թարգմանված երկրորդ անգամ 1222 թվին Առաքել Անեցու ձեռքով), «Պատմություն վասն մանկանն և աղջկանն» հեքիաթները, ինչպիսիք են՝ «Շահ Իսմայիլ և Գյուլիզար», «Աշուղ Ղարիբ և Շահ Սանամ», «Փարհադ և Շիրին», «Լեյլի և Մեջնուն», «Քյաբամ և Ասլի» և այլն» («Փրիկ» հոգվածների ժողովածու, Հ.Ս.Ս.Հ. Պատմության և Գրականության ինստիտուտ, Երևան, 1937 թվ., էջ 51):

Նիդամիի թեմաները և կերպարները, հատկապես խոսրովը, Շիրինը, Փարհադը, Լեյլի և Մեջնունը և Իսկենդարը պատկանում են այսպես կոչված թափառող, մշտական սյուժեների և կերպարների թվին:

Արևելքի ժողովուրդների՝ Հնդկաստանից մինչև Կոստանդնուպոլիս, թե ֆուլկլորում և թե գրավոր գրականության մեջ որ-

քան ասեք հեքիաթներ, սիրավեպեր, զրույցներ և բանաստեղծություններ կան՝ հորինված Նիզամիի վերոհիշյալ թեմաների և կերպարների շուրջը:

Լեյլի և Մեջնունի դժբախտ սերը, Ֆարհադի և Շիրինի ավանդությունը բազմաթիվ վարիանսներով պատմվում է ադրբեջանական, հայկական, վրացական և արևելյան մյուս ժողովուրդների մոտ: Ուզբեկական մեծ բանաստեղծ Նաւոին 15-րդ դարում կերտել է «Ֆարհադ և Շիրին»-ը, իսկ Ադրբեջանի լավագույն բանաստեղծներից մեկը՝ Ֆիզուլին 16-րդ դարում նոր թափով երգեց Լեյլի և Մեջնունի ողբերգական սերը:

Բազմաթիվ հայ գրողներ 13-րդ դարից սկսած նույնպես երգել են Նիզամիի մոտիվները և հերոսներին:

Նիզամիի «Սուրով և Շիրին», «Լեյլի և Մեջնուն» և «Իսկենդար-Նամե» պոեմների մոտիվները եղել են նաև հայկական ֆոլկլորում, մասամբ թարգմանական, ինչպես նաև ինքնուրույն գրականության մեջ: Հեռանալես Նիզամիից հետո հանդես եկած հայ գրողները կարող էին վերոհիշյալ մոտիվները երգել ֆոլկլորի հիման վրա, միանգամայն անկախ Նիզամիից: Բայց մյուս կողմից միանգամայն հնարավոր է նաև, որ հայ գրողները ծանոթ էին Նիզամիի ստեղծագործությանը և օգտվել են նրանից:

Մեր կարծիքով այս խնդիրների լուսաբանման ճշմարիտ ելակետը հանդիսանում է հետևյալը: Համաշխարհային գրականության պատմության մեջ քիչ չեն այնպիսի փաստեր, երբ ֆոլկլորի հետ կապված մեծագույն գրողներն օգտվելով ժողովրդական բանահյուսության մոտիվներից, իրենց հերթին հսկայական ազդեցություն են գործել ֆոլկլորի վրա: Այդպիսի գրողների քերթվածքները ֆոլկլորային ծագում ունենալով, նորից անցել և տարածվել են ժողովրդի մեջ, այս անգամ որպես հեղինակի հայտնի ստեղծագործություն:

Այդպես է եղել հայ-իրանական ժողովրդական վեպի «Ռուստամ-Ջալի» հետ (աես՝ «Ազգագրական հանդես» 12-րդ գիրք, Փարեզին Հովսեփյան «Ռուստամ-Ջալ» (ուսումնասիրություն), Բ. Սալաթյան «Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ» (ուսումնասիրություն), Փարիզ, 1905 թ. և «Ֆիրդուսի» ժողովածու, Երևան 1934 թ.):

Ապացուցված է, որ «Ռուստամ-Ջալ» հայ-իրանական ժողովրդական վեպի ձևավորմանը մեծապես նպաստել է Ֆիրդուսու հանճարեղ «Շահ-Նամ» պոեմը: Եթե մինչև իսկ ժողովրդական վեպը հորինվել է Ֆիրդուսուց անկախ, ապա միևնույն է՝ անփխտելի է Պարսկաստանի մեծ էպիկ ընթացողների հսկայական ազդեցությունը արևելյան ժողովուրդների, որոնց թվում և հայկական ֆոլկլորի վրա: Եվ այսպես, Ֆիրդուսին Ռուստամ-Ջալի դյուցազներգությունը վերցնելով ժողովրդական առասպելներից, իր հերթին ազդել է ֆոլկլորի վրա: Շեքսպիրը իր մի շարք ստեղծագործությունների թեման վերցրել է տարբեր ժողովուրդների ավանդություններից կամ զրույցներից («Ռոմեո և Ջուլիետա», «Օթելլո», «Վենետիկի վաճառականը»), բայց հետագայում բուն աղբյուրը մոռացվել է և Շեքսպիրի հանճարի շնորհիվ է, որ այդ երկերի մոտիվները և կերպարները մասնաշաղկապացել են համաշխարային գրականության մեջ: Եվրոպական ժողովուրդների մեջ տարածված իսպանական «Դոն-ժուան» լեգենդան, կամ գերմանական լեգենդան դոկտոր Ֆաուստի մասին, տարածվել է ոչ այնքան ֆոլկլորի միջոցով, որքան Մուլիերի, Բայրոնի, Պուշկինի և Գյոթեի մշակումների շնորհիվ:

Այդպիսի գրողների թվին է պատկանում նաև Նիզամին: Խոսքովի և Շիրինի սիրավեպի, Լեյլի և Մեջնունի ողբերգություն, Իսկենդարի կերպարի մասնաշաղկապացմանը ամբողջ Արևելքում մեծապես նպաստել է Նիզամիի ստեղծագործությունը: Այդ կարելի է ցույց տալ անփխտելի փաստերով:

Ընդունված և տարածված կարծիքը նա է, որ «Լեյլի և Մեջնունը» արաբական հեքիաթ է¹⁾, որը կովկասյան ժողովրդի մեջ

1). Ուղղեկատանի համալսարանի գիտական աշխատող Շիրվանի Յուսուֆ-Ջիյան «Լեյլի և Մեջնունի» ծագումը» հետաքրքիր հոդվածում ցույց է տալիս, որ այդ հեքիաթը առաջացել է ավելի հին ժամանակներում՝ Բաբելոնում և Ասորեստանում, իսկ հետո արաբների միջոցով տարածվել է ամբողջ Արևելքում: Հեքիաթն անցել է երեք ստադիա՝ հեթանոսական, նախամահմեդական (քրիստոնեական) և մահմեդական, մինչև որ գրական մշակման է ենթարկել առաջին անգամ Նիզամին: (Տես՝ «Նիզամի» ժողովածու 3-րդ, Բաքու, 1941 թ.):

տարածվել է արաբական արշավանքների ժամանակ: Բայց մյուս կողմից հայտնի է, որ «Լեյլի և Մեջնուն» հեքիաթը կողկասյան ժողովուրդներին հայտնի է 12-րդ դարից սկսած, կամ հետո:

Արաբական արշավանքների և տիրապետության ժամանակաշրջանը կողկասում շարունակվել է 7-րդ դարից մինչև 10-րդ դարի սկիզբները: Արդ, եթե «Լեյլի և Մեջնուն»-ը հայ ֆոլկլորում և գրականության մեջ տարածված լիներ ֆոլկլորի միջոցով, ապա այդ հեքիաթը հայ իրականության մեջ հայտնի կլիներ 7—10-րդ դարերում՝ արաբական խալիֆաթի ժամանակ: Մինչդեռ այդպես չէ. «Լեյլի և Մեջնուն» զրույցը մեկ մոտ տարածվել է Նիզամիից հետո: Դա նշանակում է, որ Նիզամիի շնորհիվ է «Լեյլի և Մեջնուն»-ը մասսայականացել, ինչպես հայ իրականության, այնպես էլ մյուս ժողովուրդների մեջ: Նիզամիից հետո է միայն, որ տարբեր ժողովուրդների բազմաթիվ գրողներ սկսեցին մշակել արևելյան այդ դյուլթիչ հեքիաթը, իսկ Նիզամիից առաջ ոչ ոք դրա մասին չի գրել: Այստեղից կարելի է եզրակացնել, որ «Լեյլի և Մեջնուն»-ի սյուժետը վերցնելով ֆոլկլորից, Նիզամին իր հանձարի շնորհիվ կարողացավ մասսայականացնել այդ զմայլելի սիրավեպը ամբողջ Արևելքում, մոռացնել տալով դրա նախնական՝ ֆոլկլորային վարիանտը:

Համարյա նույն ձևով, կամ մի քիչ տարբեր, տարածվել են հայ գրականության մեջ «Խոսրով և Շիրին» զրույցը և Իսկենդարի կերպարը:

Պարսից-Մասսանյան թագավոր Խոսրով 2-րդ Պարվիզի մասին, ինչպես արդեն գիտենք, ընդարձակ տեղեկություններ կան 7-րդ դարի հայ մատենագիրներ՝ Սերեոսի, Հովհան Մամիկոնյանի և Մովսես Կաղանկատվացու աշխատություններում: Սերեոսը մինչև իսկ համառոտ տեղեկություն է հաղորդում Շիրինի, նրա բարեգործության մասին և թե ինչպես նա ամուսնանում է Պարսկաստանի զահակալի հետ: Մատենագիր Սերեոսը պատմել է Խոսրովի թագավորության մասին և նրա քաղաքական գործերը:

Գեղարվեստական պատկերացման և մտահղացման տեսակետից Նիզամին միանգամայն տարբերվում է Սերեոսից և հե-

տապնդում է միանգամայն այլ նպատակներ: Սերեոսի մոտ խոսքովը գերազանցորեն պետական գործիչ է, պատմական անձնավորություն, իսկ Նիզամիի մոտ խոսքովը մարդկային հոգեբանություն մի սինթետիկ գրական խարակտեր է: Նիզամիի ստեղծագործությունն հիմքում ընկած է սիրային կոնֆլիկտը և դա է հիմնական մոտիվը, մինչդեռ Սերեոսի մոտ դա խառն բացակայում է:

Խոսքովի տիպի պատկերացման հարցում Նիզամին առավել ևս տարբերվում է Ֆիրդուսուց: Պարսից բանաստեղծը այս դեպքում, ինչպես առհասարակ ամբողջ «Շահ-Նամե»-ի մեջ, նպատակ է ունեցել տալ պարսից թագավորների խրոնիկան համաձայն իշխող խավերի, սասանյանների տրագիցիայի: Սերեոսի նման, և հակառակ Ֆիրդուսուն, Նիզամին չի գրվատում, այլ խորազանդում է բռնակալ և դաժան խոսքովին: Եվ այսպես, Նիզամին ընդհանուր գծերով նման է Սերեոսին, իսկ Ֆիրդուսուց համարյա ոչինչ չի վերցրել խոսքովի տիպը կերտելիս: Նիզամին միանգամայն ինքնուրույն և նոր ձևով է պատկերել խոսքովի և Շիրինի պատմությունը, որը հետագայում այս կամ այն չափով կրկնել են Արևելքի բազմաթիվ գրողները, որոնց թվում և հայ հեղինակները:

Խոսքովի, Շիրինի և Փարհադի մասին պատմող հայ գրողների վրա զգալի է Նիզամիի մտքերի, խոհերի, մոտիվների անմիջական ազդեցությունը:

Միջնադարյան հայ բանաստեղծներ՝ Խաչատուր Կեչառեցին և Գրիգոր Աղթամարցին իրենց կաֆաների մեջ Ալեքսանդր Մակեդոնացուն պատկերել են այնպես, ինչպես Նիզամին:

Խաչատուր Կեչառեցին և Գրիգոր Աղթամարցին հակադրվելով արևելյան և արևմտյան վերսիաներին, մանավանդ Ֆիրդուսուն, Ալեքսանդր Մակեդոնացուն, պատկերել են ոչ միայն որպես աշխարհակալ, այլ ցույց են տվել Ալեքսանդր Մակեդոնացու արդարադատ, իմաստուն լինելը: Այս դեպքում Խաչատուր Կեչառեցին և Գրիգոր Աղթամարցին լիովին հետևում են Նիզամին և համամիտ են Ալեքսանդր Մակեդոնացու վերաբերյալ նրա հայացքներին:

Սահաւորութիւն Կեչառեցի¹⁾ ստեղծագործել է 13-րդ դարի վերջերին: Նա եղել է նշանավոր գիտնական, ծանոթ է Պլատոնի փիլիսոփայութեանը: Սակայն ավելի հռչակվել է որպէս բանաստեղծ, մանավանդ իր հորինած կաֆաներով²⁾:

Կալիսթենեսին վերագրված «Աղեքսանդրի պատմութեան» վեպը, որը հայերէն առաջին անգամ թարգմանվել է 5-րդ դարում, Սահաւորութիւն Կեչառեցին նորից արտագրում է, հնացած ձեռագրից կատարում է կրճատումներ և հավելումներ, գրում է վեպի համար առաջաբան ու վերջաբան և վերջապէս վեպի հատվածների վերջում տեղավորում է իր հորինած հանգավոր ոտանավորները՝ կաֆաները, գրված վեպի թեմաների նմանութեամբ, կամ պատմում է գրվածքի առանձին հատվածների բովանդակութեանը:

Անկասկած հեղինակի բարձր կուլտուրայի և աշխարհիկ մտածողութեան պետք է վերագրել այն, որ նա կրճատում է վեպի ֆանտաստիկ նկարագրութեանները, դառնում ինչպէս ինքն է ասում «անհարմար և շաղիաղի» տեղերը: Կալիսթենեսին վերագրված վեպի նկատմամբ Սահաւորութիւն Կեչառեցու այսպիսի քննադատական վերաբերմունքը հավանական է դարձնում, որ հայ բանաստեղծը ծանոթ էր Նիղամիի քերթվածքին և նրա

1). «Աղեքսանդր Մակեդոնացու պատմութեան» շուրջը կաֆաներ հորինած հայ բանաստեղծների մասին ուսումնասիրութեաններ գրել են՝ Հ. Հակոբոս, Վ. Տաշեան «Ուսումնասիրութեանք Ստոյն-Կալիսթենեսայ վարուց Աղեքսանդրի», Վիեննա, 1892 թ., Կ. Կոստանյանց «Գրեգորիոս Աղթամարցիին և յուր տաղերը», Թիֆլիս, 1898 թ., էջ 101—126, Մանուկ Արեղյան «Հայոց հին գրականութեան պատմութեան» գիրք երկրորդ, Երևան, 1946 թ., էջ 230—244, 536—542 և ուրիշները: Օգտվում ենք վերջին երկու աշխատութեաններից, օրինակներ կաֆաներից առված են նույնպէս այդ աշխատութեաններից:

2). Կաֆա կամ կաֆայ կոչվում է արաբական՝ հանգավոր ոտանավորը: Առաջին անգամ հայ գրականութեան մեջ կաֆայը հիշատակել է Գրիգոր Մագիստրոսը 11-րդ դարում: Կ. Կոստանյանցը խոսելով կաֆաների մասին, ասում է, թե դրանք «Աղեքսանդր Մակեդոնացու պատմութեան» շուրջը հյուսված բանաստեղծութեաններ են, նույնահանգ ոտանավորներով և խրատա-

համար օրինակ էր ծառայում ադրբեջանական մեծ գրողի «Իսկենդար-Նամե» պոեմը: Նիզամին է եղել առաջին բանաստեղծը, որ ժխտելով Ալեքսանդր Մակեդոնացու շուրջը հորինված արեւելյան և արեւմտյան առասպելներում, ինչպես նաև Սուտ-Կալիսթենեսի վեպում եղած մի շարք մոտիվները, մեծ զորավարին պատկերել է միանգամայն նոր բովանդակությամբ, ցույց տալով նրան որպես հանճարեղ զորավար, իմաստության և մարդարեության մարմնացում, արդարադատության և իշխողի իդեալական կերպար:

Սաչատուր Կեչառեցին ևս, Նիզամիի պես, Ալեքսանդր Մակեդոնացուն համարում է քաջության, իմաստության, հանճարեղության մարմնացում, և այնքան է մեծարում նրան, որ համեմատում է Քրիստոսի հետ: Գրականագետ Զամինյանը իրավունք ունի նշելու, որ Նիզամիի շնորհիվ է ստեղծվել Ալեքսանդր Մակեդոնացու պաշտամունքը և դրա հետևանքն է հանդիսանում Սաչատուր Կեչառեցու արտակարգ հիացմունքը հին աշխարհի մեծ աշխարհակալի անձնավորությամբ:

Շեշաեկով Նիզամիի ազդեցությունը Սաչատուր Կեչառեցու վրա, Զամինյանը գրում է. «Վերջինիս անունը (Ալեքսանդր

կան բովանդակությամբ: Բացի Սաչատուր Կեչառեցուց, կաֆաներ գրել են նաև միջնադարյան հայ աշխարհիկ պոեզիայի նշանավոր դեմքերից Գրիգոր Աղթամարցին և Զաքարիա Եպիսկոպոսը:

Կ. Կոստանյանցը «Գրիգորիս Աղթամարցին և յուր տաղերը» աշխատության մեջ խոսում է Գրիգոր Աղթամարցու կաֆաների մասին: Նա կաֆաները գրել է միջին հայերենով, չհաշված երկուսը՝ հորինված գրաբար լեզվով: Հայերենի հետ Աղթամարցին գործ է ածում, — ինչպես ցույց է տալիս Կ. Կոստանյանցը, պարսկերեն և թուրքերեն բառեր, ոճեր և ամբողջ տողեր ու տներ:

«Պատմություն Աղեքսանդրի աշխարհակալի» ձեռագրերից Կոստանյանցը հանել և հրատարակել է 42 կաֆա, որոնց մի մասը հորինել է Սաչատուր Կեչառեցին, իսկ մյուս մասը Գրիգոր Աղթամարցին և Զաքարիա Եպիսկոպոսը: Նշանավոր բանասերը հաղորդում է, որ էջմիածնի մատենադարանում «Աղեքսանդրի պատմության» հինգ ձեռագիր օրինակ կա, որոնցից մի ձեռագիրը կաֆաներ չունի, իսկ մյուսներն ունեն:

Մակեդոնացու—Գ. Ա.) չափազանց հուշակված էր իբրեւ քաջարի զինվոր. Ֆիրզուսին Շահնամեի մեջ նորա մասին կերպեր, Գանձակեցի Նիզամին (1180) գրած է Իսքանդարնամե գրվատական քերթվածը։ Այս ընդհանուր պաշտումի հետեանք է անշուշտ և այն պարագան, որ ԺԳ. դարու վերջերը Սաջատուր Կեչառեցին գտնելով Աղեքսանդրի վարուց հին հայ թարգմանությունը մաշված ու հնացած՝ արտագրեց և այդ հեթանոսական անվայելուչ գրվածքը սիրելի դարձնելու համար գրեց հառաջաբան ու վերջաբան։ Այստեղ նա իր հիացմունքը կհայտնե Աղեքսանդրի վրա, և այդ հիացմունքն այն աստիճանի կհասնի, որ մինչև իսկ նույն կատարած գործերը Քրիստոսի կատարածներուն հետ կհամեմատե։ Նա կպատկերացնե Աղեքսանդրի կյանքն իբրեւ քաջության, իմաստության և հանճարեղության օրինակ» (տես՝ Զամինյան, «Պատմություն հայ գրականության» Ա. մաս, ՆորՆախիջևան, 1915 թ., էջ 212)։ Միջնադարյան հայ գրականության լավագույն մասնագետներից մեկը՝ Կարապետ Կոստանյանցը ևս նշելով կաֆաներ հորինող հայ հեղինակների կրած ազդեցությունը Նիզամիից գրում է.

«Այլ անգամի թողնելով պարզելու այն խնդիրը, թե քիչ և ավել ազդեցություն է ունեցել միջնադարյան հայոց գրականության վրա արևելյան հարևան ցեղերի, մանավանդ պարսից, բանաստեղծությունը, մենք այստեղ կարևոր ենք համարում հիշատակել, որ Աղեքսանդրի պատմության մեջ կաֆաներ հյուսող երվիչներն, անշուշտ ծանոթ են եղել Շահնամայի այն մասերին, որոնք վերաբերում են Աղեքսանդրին, նմանապես և Նիզամիի Իսկանդար Նամային և այլ արևելյան ավանդությունների ժողովածուներին...» (Կ. Կոստանյանց «Գրիգորիս Աղթամարցին և յուր տաղերը—հավելված «Աղեքսանդրի պատմության կաֆաները», Թիֆլիս, 1898 թ., էջ 106)։

Այժմ տեսնենք, թե Սաջատուր Կեչառեցին ինչպես է գնահատում Աղեքսանդր Մակեդոնացուն և նրա հայացքներն ինչպես են զուգադիպում Նիզամիի կարծիքներին։

Իր գրած կարծիքների մեջ Սաջատուր Կեչառեցին հայտնում է այն համոզմունքը, թե Աղեքսանդր Մակեդոնացին «տիպ և զա-

դաժար եղև ճշմարիտ երկնաւոր թագաւորին՝ և կուսածին աստուծոյն մերոյ Յիսուսի Քրիստոսի»¹⁾։ Այսպիսով քրիստոնյա վարդապետ Խաչատուր Կեչառեցին Ալեքսանդր Մակեդոնացուն, որպէս իդեալական թագաւորի սիպ և գաղափար հաւասար է դասում հաւատացյալներին ամենամեծ սրբությանը՝ Քրիստոսին։

Խաչատուր Կեչառեցու կարծիքը տվյալ դեպքում ամբողջապէս համընկնում է Նիզամիի այն գաղափարին, թե ժողովրդի իդեալական կառավարողի տիպը՝ արգարության և իմաստության կրող Ալեքսանդր Մակեդոնացին է։

Նիզամիի պատկերացմամբ Ալեքսանդր Մակեդոնացին քաջ զորավար է, գիտություններ ու իմաստություններ սիրող ու հովանավորող, ժողովուրդների իրավունքը պաշտպանող արգարադատ աշխարհակալ։

Խաչատուր Կեչառեցին ևս նույն գնահատականն է տալիս Ալեքսանդր Մակեդոնացուն, որի կյանքը պատմում է «...յօզուտ և յօրինակ ամենայն թագաւորաց և իշխանաց...» և քաջամուտ արանց պատերազմողաց զ. (= չորս) են արտադատմունք՝ զիտութիւն, արիւթիւն, համբաւ և դատաստան։ Այսպէս և ըստ այսմ օրինակի վայել է արքայից և զօրապետաց իմաստուն և հանձարեղս լինիլ...»։

13-րդ դարի պայմաններում, երբ իշխում էր քրիստոնեական-կրոնական իդեոլոգիան, մեծ հանգեցութուն էր Խաչատուր Կեչառեցու կողմից գրվաւել հեթանոս թագաւորին և նրան համեմատել Քրիստոսի հետ։ Դրա դեմ, ինչպէս ցույց է տալիս Մանուկ Աբեղյանը, մինչև իսկ դուրս են եկել 19-րդ դարի հայ կաթողիկէ կրօնավորները։

Խաչատուր Կեչառեցու ազատախոհության մասին Մանուկ Աբեղյանը գրում է. «Նա, որ ծանոթ է Պլատոնի, գուցե և ուրիշ փիլիսոփաների երկերին, առանց քաշվելու ազատ մեկնություններ է տալիս «հավատով աշխատելով», այսինքն հավատալով

¹⁾ Կեչառեցու առաջաբանի այս և մյուս հատվածները առված են Մանուկ Աբեղյանի աշխատութեանից՝ «Հայոց հին գրակ. պատմութիւն», գիրք երկրորդ, Նրևան, 1946 թ.։

իր ասածները ճշմարտությանը, չմտածելով անգամ, թե դրանով պրոֆանացիայի՝ սրբապղծության է ենթարկում իր կրոնի խորհուրդները» (Մ. Աբեղյան «Հայ հին գրակ. պատմ.», գիրք երկրորդ, Երևան, 1946 թ., էջ 234):

Խաչատուր Կեչառեցու կրոնական կաշկանդումներից և նախապաշարմունքներից այսպիսի ազատ հայացքը Ալեքսանդր Մակեդոնացու մասին դարձյալ հիշեցնում է ազատամիտ Նիզամիին, որը հակադրվելով պարսկական արխատոկրատիային և պաշտոնական խրոնիկաներին, Ալեքսանդր Մակեդոնացուն պատկերել է հակառակ իշխող կարծիքների, ցույց տալով նրան որպես ազատախոհ, գիտությամբ առաջնորդվող անձնավորություն:

Նիզամիի և մյուս գրողների ազատասիրական ձգտումների մասին Զամինյանը գրում է. «Նոքա ոչ միայն ինքնուրույն մտածող էին, այլ և անդրադարձնող այն իմաստասիրական հոսանքներու, որոնք մահմեդական կրոնի կաշկանդումների տակ խլրած՝ կձգտեին հեղաշրջել, կյանքի կարգերու դեմ ըմբոստանալ ու բարեփոխության ձգտիլ», (Զամինյան «Պատմություն հայ գրականության» Ա. մաս, Նոր-Նախիջևան, 1915 թ., էջ 208):

Վերջապես Նիզամիի նման Խաչատուր Կեչառեցին Սուտ-Կալիսթենեսի վեպը նույնությամբ չի օգտագործել, այլ վերամշակելով դուրս է նետել անստիպաշտական տարրերը, (արդեն իտենք, որ Նիզամին «դատարկ խոսք» է համարում արևմտյան և արևելյան վերսիաները Մակեդոնացու ծննդյան մասին) թողնելով Ալեքսանդր Մակեդոնացու մասին եղած դրական էջերը. «Նա (Խաչատուր Կեչառեցին—Գ. Ա.),—գրում է Աբեղյանը,—չի ընդունել ամեն ինչ, որ պատմված է Սուտ-Կալիսթենեսի գրքի մեջ: «Ալեքսանդրի պատմության» կարճ ու գեղեցիկ քննադատությունն ըստ ձևի և ըստ բովանդակության՝ մի անհրաժեշտ հիմք է Կեչառեցու և իր պես մտածողների զարգացման աստիճանը որոշելու համար: Նրանք այնքան էլ խիստ պարզամիտ և դյուրահավատ չեն եղել, որ այն գրքի շաղփաղփանքներն ընդունեին: Հարկավոր էր նրանցից գտնել Ալեքսանդրի լավագույն բարեմասնությունները» (Աբեղյան Մ. «Հայ հին գրակ. պատմ.», գիրք 2-րդ, Երևան, 1946 թ., էջ 235):

Նիզամիի և Կեչառեցու հայացքների վերոհիշյալ զուգադի-
պուլթյունները դժվար թե պատահական նմանողություն լինեն:
Հարազատությունն այնքան ակներախ և օրգանական է, որ այս
դեպքում վստահ կարելի է նշել Նիզամիի գաղափարական և
ստեղծագործական ազդեցությունը Սաչատուր Կեչառեցու վրա:

Այժմ բերենք մի քանի նմուշ Սաչատուր Կեչառեցու կաֆա-
ներից: Սուտ-Կալիսթենեսի «Աղեքսանդրի պատմության» մեջ
նկարագրված է Ալեքսանդրի ու Դարեհի ճակատամարտը և վեր-
ջինիս պարտությունը: Այս հատվածի նմանողությամբ Կեչառե-
ցին հորինել է հետևյալ կաֆան.

Ձայն արար, ձայն արար,
Փող քընարին ձայն արար...
Հաներ զթուրըդ քո ճօհար,
Ի երիվարըդ քո հեծար.
Ձամբոխդ ի հանդէս տարար,
Ձօրօք զօրավիդ հղար.
Ի Դարեհի հանդէպ հասար,
Ճակատն բոլոր անցար.
Փոթորակի պէս խառնեցար,
Արծըւաբար դու բարձրացար....

Ճակատ առ ճակատ եղեն,
Սառնեցան յանդուզն ու ահագին,
Դիակօք զվայրըն լըցին.
Սաւարաւ արևն ի յերկին:
Սառնամբոխ մեծ հանդիսին
Աղեքսանդրու և Դարեհիս,
Սուսերամերկ կարաւանիս
Աճապարեալք ռատի գընդիս.
Դիաթաւալ արեան ծովիս,
Ճախր և ճակատ ի մեջ դաշտիս.
Կէսք վաճ ասեն յասպարիսիս,
Կէսք վաճ ասեն յաջողակիս:

Դարեհ, դարձաւ ակամդ ի նար.
Բաղդըդ նենգեց քեզ նարաչար.
Դարձիր ի հետ'ւ, արա քեզ ճար.
Հան արտասուս անձրեաշար.
Բանդ ի վերուստ է անհընար,
Խափանեցաւ խորհուրդդ անկար:

Մի ուրիշ կաֆայի մեջ հեղինակը սրտառուչ զգացմունքով պատկերում է, թե ինչպէս Ալեքսանդրի մայրը ողբում է իր երիտասարդ որդու մահը.

Մայրք մանկագունից, լացեք,
Վայ տուք ինձ թշուառականիս.
Որ փառաց թափուր եղէ,
Խաւարի աչեր ծնողիս.
Արեւն իմ շուտով մըտաւ,
Քաղեցաւ շունչս իմ ու հողիս.
Ծառըս ծաղկաթափ եղէ,
Անսլըտուղ կամ ի յաշխարհիս.
Այ իմ միամօր որդի,
Ալեքսանդր հզօր մեծ արքայ.
Չեղէ արժանի տեսող,
Վայ մօրըս քո Ոլտմդիայ.
Ոչ բան մի բերնէդ լուայ,
Թէ սրտիս մէջըն կայ ետրայ,
Քո ցաւուդ ես դեղ առնէի,
Կամ հեքիմ բերէի բեշարայ:

Իմաստալից են բարոյախոսական կաֆաները, որոնց մեջ Խաչատուր Կեչառեցին Նիզամիի նման խորհում է անցողիկ կյանքի և մահվան մասին, փառքի ունայնության և անցաւոր իշխանության մասին, և թե ինչպէս խաբուսիկ է մարդու բախտը.

Այս կեանքըս է յերազ նըման,
Զինչ վարթնն լինի փոշիման.

Ի քուն զինքն իշխան զիաէ,
Երբ զարթնու՝ ազքատ է՝ և անքան,
Թէ քաղցել է՝ հաց տեսնու,
Լըջանայ կարօտ՝ և անպիտան:
Այսպէս Ալեքսանդր եղև,
Որ մըտաւ ի նեղ գերեզման:

Անցողիկ կյանքի և ունայնության մասին է երգում նաև
Գրիգոր Աղթամարցին իր մի գողտրիկ կափայի մեջ.

Ա՛յ իմ խօսուէն փոքրիկ հաւիկ, մին աստ
զքեղ աղաչեմ.
Իմ կեանքն է քանի՞ տարի, յերկարի թե
շուտով մեռանիմ:
Ասաց: Շտապե շուտով, քեղ տեսայ, ահա
քեղ ասեմ.
Ի ծանօթ երկիր գնա՛, զի քո մահն ես
ծածկելու չեմ:

Ուշատուր կեչառեցին Նիղամիի նման անհաստատ կյանքը
նմանեցնում է ծովին, որտեղ մարդիկ լողալով, ձգտում են
հասնել ափին, բայց երբ փշրվում է նավակը, կործանվում են
կյանքին ձգտող լուրորդները:

Այս կեանքս է ի ծով նըման,
Որ մարդիկ ի ներս կու լողան.
Մարմինս է ի նաւ նըման,
Հոգիս է գանձ անմահական.
Միտքս է նաւաւվար ճարտար,
Որ հանէ զցամաքն յերևան.
Աւանդ թէ կտորի այս նաւս,
Մեք ի վար մընամք փոշիման:

Կեչառեցու կափաների շարքը վերջանում է չորս ողբի եր-
գերով: Ալեքսանդրի մայրը, մատաղահաս կինը և նախարարնե-

ըը աղեկտուր լացում են մեծ աշխարհակալի վաղաժամ մահը, փառքի և կյանքի ունայնությունը: Նկարագրված է Ալեքսանդր Մակեդոնացու ցավալի հոգևարքը, թե ինչպես մեռնող Ալեքսանդրը վերհիշում է իր անցած օրերը, պատանեկան լուսինները, երբ ուսանում էր Արիստոտելի մոտ, թե ինչպես թափանցում էր իմաստության և գիտությունների գաղտնիքների մեջ, հետո ինչպես նվաճեց աշխարհը, հասավ փառքի գագաթնակետին, իսկ այդ ամենի վերջը, ահա, անհաղթելի մահն է: Եվ այսպես, Ալեքսանդր Մակեդոնացին ձգտում էր անմահության, բայց մահկանացու լինելով, անկարող եղավ հաղթել մահին: Հողից ծնվելով, նա նորից ձուլվեց բնության հետ, նվաճելով աշխարհը, նա վերջում տեղ գտավ մի կտոր հողում:

Այդ նույն միտքը 16-րդ դարի սկզբի բանաստեղծ Գրիգոր Աղթամարցու մի կաֆայի մեջ հետևյալ պատկերացումն է ստացել.

Արքայս ի տապանի եկն, որ ուներ շատ
մի հայրենիք.

Նա պառկեր է ի թիղ մի տեղ, որ ուներ
աշխարհս ի ձեռին

Յուրմեն ես հարցուկ եղայ, թե այդ տեղդ
որպես է քեզի,

Դարձաւ ու ջլապ տուեց, թե հերիք է
և շատ ավելի:

Հայ բանաստեղծներից առաջ, Նիզամին ավելի հզոր թափով և պատկերավորությամբ երգել է փառքի և կյանքի անցողիկ լինելը, Ալեքսանդրի գլխադրույտ հաջողությունները և նրա վախճանը: Նվաճելով աշխարհը, Ալեքսանդր Մակեդոնացին, կյանքի վերջում ժառանգեց մի կտոր հող,—Նիզամիի այս մոտիվը, ինչպես և մյուս մոտիվները անդրադարձել են նաև խաչատուր Կեչառեցու և Գրիգոր Աղթամարցու կաֆաներում: Ուշագրավ է այն հանգամանքը, որ մեր բանաստեղծները, գործածելով Ալեքսանդրի անունը, ինչպես այդ ընդունված էր Արևմուտքում և հայերի մոտ, գործ են ածում նաև Իսկենդար անունը:

Մի կաֆայի մեջ Կեչառեցին «Ալեքսանդրի» փոխարեն ասում է «Իսկենդեր»՝ «Իսկենդեր արքայից արքայ, որ Պամենի քաջաց հաղթեցեր» և այլն, իսկ Գրիգոր Աղթամարցին «Իսկենդեր» անունը գործածում է երկու անգամ (տես՝ Կ. Կոստանյանց «Գրիգորիս Աղթամարցին և յուր տաղերը», Թիֆլիս, 1898 թ., էջ 122): Այս ևս մասամբ վկայում է Կեչառեցու և Աղթամարցու կապը Նիզամիի հետ: Ավելորդ չի լինի հիշատակել նաև, որ խաչատուր Կեչառեցին և Գրիգոր Աղթամարցին իրենց որոշ ստեղծագործությունների մեջ գործ են ածում առանձին բառեր, ոճեր, հորինում են բանաստեղծական տողեր և ամբողջ տներ «Թուրքերեն լեզվով» (տես՝ Մանուկ Աբեղյան «Հայոց հին գրակ. պատմություն» գիրք 2-րդ, Երևան, 1946 թ., էջ 240 և «Գրիգոր Աղթամարցի և յուր տաղերը» Կ. Կոստանյանցի):

Ահա այն փաստերը, որոնք հավանական են դարձնում այն տեսակետը, թե խաչատուր Կեչառեցին և Գրիգոր Աղթամարցին Ալեքսանդր Մակեդոնացու մասին կաֆաներ հորինելիս, ծանոթ են եղել Նիզամիի «Իսկենդար-Նամե»-ին և կրել են նրանից զգալի ազդեցություն: Վերոհիշյալ փաստերը հաստատում են Կ. Կոստանյանցի այն միտքը, թե «...Ալեքսանդրի պատմության մեջ կաֆաներ հյուսող երգիչներն, անշուշտ ծանոթ են եղել... Նիզամիի Իսկենդար-Նամային...» (նույն տեղ, էջ 106):

Միջնադարյան մի շարք հայ բանաստեղծների կապը Նիզամիի հետ, բացի կաֆաներից, երևում է նաև սիրային լիրիկայի բնագավառում:

«Բացի արևմտյան քրիստոնյա ազգերից, հայերը շրջվում էին նաև արևելյանների հետ» ասում է ակադեմիկոս Աբեղյանը և «...մեծ է եղել արևելյան ժողովուրդների կուլտուրական ազդեցությունը հայկական քաղաքական և ընդհանրապես հասարակական կյանքի վրա, հետևաբար անպայման նաև զրականությունների վրա»: (Մ. Աբեղյան, «Հայոց հին զրականությունների պատմություն» գիրք երկրորդ, Երևան, 1946 թ., էջ 347): Աբեղյանից դեռ առաջ հայտնի գիտնական Մառը ցույց տվեց իսլամիզմի ազդեցությունը աշխարհիկ պոեզիայի զարգացման և քրիստոնեական ժողովուրդների զրականության աշխարհականացման վրա: Կ. Կոստանյանցը նշելով Հովհաննես Թլկուրանցու և միջնադարյան մի քանի հայ բանաստեղծների կապը արևելյան

պոեզիայի՝ աղբրեջանական, պարսկական և արաբական դրականության հետ, գրում է. «Թլիուրանցին երիտասարդ հասակում, աշխարհական ժամանակ, եղել է աշուղ, եթե ոչ արհեստով, դեթ յուր կոչմամբ: Թե արդարև նա երգել է ինչպես մի արևելյան աշուղ, այդ երևում է նորա երգերի արտաքին ձևից և խոսքերից, որոնք նման են արևելյան աշուղների ընդունած ձևերին: Նա գործ է դրել բազմաթիվ թուրքերեն և պարսկերեն բառեր և դարձվածքներ: Կան տաղեր, որոնք ամբողջապես թուրքերեն են հորինված...»:

«Այս ամենից երևում է,—շարունակում է Կոստանյանցը,— որ Թլիուրանցին քաջ գիտեր թուրքերեն, վարժ էր թուրք և պարսիկ և առհասարակ արևելյան երգիչների հատուկ ձևերի մեջ և հմուտ էր նաև արևելյան եղանակներին: Թուրքերենի և պարսկերենի գործածությունը նկատմամբ Թլիուրանցին հետևել է իրեն ժամանակի սովորությունը, երբ հայոց երգիչների մեծ մասը շատ կամ սակավ չափով փայլեցնում են իրենց հանձարը հիշյալ լեզուներով, թերևս քաղաքական և ընկերական կյանքի ներքին պայմաններից թելադրված: Այսպես են Առաքել Բաղիշեցի, Գրիգոր Ալթամարցի, Հակոբ, Ղազար, Մկրտիչ Նաղաշ, Կոստանդին Նրզնկացի և այլ շատերը» (Կ. Կոստանյանց «Հովհաննես Թլիուրանցին և յուր տաղերը», Թիֆլիս, 1892 թ., էջ 9—10):

Միջնադարյան հայ աշխարհիկ գրականությունը իհարկե առաջին հերթին հայ ժողովրդի ներքին կյանքի՝ քաղաքների դարդացման, քաղաքային կուլտուրայի, սոցիալական տեղաշարժերի և աշխատավորության ուժեղացման արդյունք է:

Միջնադարյան հայ պոեզիան միանգամայն ինքնուրույն, բազմադարյան կուլտուրա ունեցող ժողովրդի գրականություն է, համաշխարհային գրականության ամենաուշադրավ երևույթներից մեկը¹⁾: Բայց մյուս կողմից հարկավ չի կարելի ժխտել

1). Միջնադարյան հայ պոեզիայի միջադպրոցին նշանակությունը փայլուն կերպով ցույց են տվել Վալերի Բրյուսովը «Հայաստանի պոեզիան և նրա միասնությունը դարերի ընթացքում» աշխատության մեջ (տես՝ «Հայաստանի պոեզիան», խմբագրությունամբ Բրյուսովի, 1916 թ.) և ակադեմիկոս Ա. Տերտերյանը, «Բրյուսովը և հայ կուլտուրան», Երևան, 1945 թ., աշխատությունների մեջ:

հարեւան ժողովուրդներին կուտուրայի բարերար ազդեցությունը միջնադարյան հայ գրականության վրա և հայ գրողներին կապը արեւելյան ժողովուրդներին կուտուրայի հետ (10—14-րդ դարերի պարսկական կլասիկ պոեզիան, արաբական քնարերգությունը, 12-րդ դարի վրացական գրականությունը՝ Շոթա Ռուսթավելի և 12-րդ դարի ադրբեջանական գրականությունը՝ Խաղանի, Նիզամի և ուրիշները):

Միջնադարյան հայ լիբրիկայի զարգացմանը օժանդակ միջոց հանդիսացավ մանավանդ արեւելյան ժողովուրդներին սիրային պոեզիան:

Գրիգոր Նարեկացուց հետո, որի սիրային լիբրիկան ամփոփվում է սուրբ կույսի գովքով, միստիքական, ոչ մարմնական վայելքի պատկերների մեջ, սիրո երգերը մեր գրականության մեջ սկսում են զարգանալ միայն 13-րդ դարից սկսած, այսինքն երբ արդեն բարձր զարգացման էր հասել սիրային լիբրիկան մահմեդական ժողովուրդների գրականության մեջ:

Մեզ մոտ սիրային պոեզիայի արագ զարգացումը 13-րդ դարից սկսած անկասկած նախ պայմանավորված էր ներքին հանգամանքներով՝ քրիստոնեական կրոնի թուլացումով և աշխարհիկ մտածողության արագ զարգացումով հայրենիքի ներսում, իսկ մյուս կողմից դրան անշուշտ նպաստել է Արեւելքի արդեն դոյություն ունեցող սիրային քնարերգությունը:

Մեր գրողները՝ Կոստանդին Երզնկացին, Հովհաննես Թլկուրանցին և Գրիգոր Աղթամարցին, որ այնքան հրաշալի գիտեին ադրբեջանական և պարսկական լեզուները, գիրն ու գրականությունը, չէին կարող անուշադրության մատենել սիրո անմահ երգիչ Նիզամին:

Անցյալի հայ բանասերներից շատերը միանգամայն սխալ ձևով գերազնահատել են պարսկական գրականության ազդեցությունը հայ գրականության վրա, և համարյա խաղաղ մոռացության են մատնել ադրբեջանական ժողովրդի մեծ բանաստեղծ Նիզամիի ստեղծագործության անփխտելի հետքը մեր գրականության մեջ:

Դժբախտաբար նույն տրագիկիայի զոհն է Ե. Թորոսյանը, որը «10—14-րդ դարերի աշխարհիկ գրականությունը Հայաստան»

նում» աշխատության մեջ, մեծ տեղ է հատկացնում Ֆիրզուսու, Մաադիրի, Ռումիի, Հաֆիզի, Օմար-Նայամի ազդեցությանը հայ գրականության վրա, բայց ոչ մի խոսք չի ասում Նիզամիի մասին (տես՝ «Փրիկ» ժողովածու, պետհրատ, Երևան, 1937 թ., էջ 52—56):

Մինչդեռ փաստ է, որ մեր միջնադարյան տաղերգուներից շատերը եղել են սիրո երգիչներ և բնականաբար նրանց քիչ բան կարող էին տալ գերազանցորեն հերոսական դյուցազներգության երգիչ Ֆիրզուսին, (հարկավ չենք մոռանում սիրո դրվագները «Շահ-Նամե»-ի մեջ և «Յուսուֆ ու Զուլեյխան»), մորալիստ Մաադին, փիլիսոփայող և երգիծող Օմար Նայամը, և ընդհակառակը իրենց ստեղծագործության ոգով մեր բանաստեղծներին ավելի հարազատ և մոտ են սիրավեպերի և գաղելների անմահ հեղինակ Նիզամին, ինչպես նաև սիրո նուրբ երգիչ՝ «Շիրազի բլբուլ» Հաֆիզը:

Զփտելով պարսկական պոեզիայի նշանակությունը միջնադարյան հայ գրականության համար, ուզում ենք միաժամանակ ասել, որ գրական կապերի որոշման ժամանակ չի կարելի մոռանալ Նիզամիի անհամեմատ ավելի օրգանական և անմիջական ներգործությունը մեր միջնադարյան քնարերգուների վրա:

Այդ տեսակետից, ինչ խոսք, ամբողջապես իրավացի է գրականության պատմաբան Զամինյանը, երբ նշում է Կոստանդին Երզնկացու սերտ կապը Նիզամիի հետ: Զամինյանը ասում է, թե Կոստանդին Երզնկացու մոտ սիրո պաշտումը հիշեցնում է «Նիզամիի մեկ ոտանավորը. առանց սիրո անցած կյանքը դու առ ոչինչ համարիր...» (տես՝ Զամինյան «Պատմություն հայ գրականության» Ա. մաս, Նոր-Նախիջևան, 1915 թ., էջ 215): Եվ իսկապես սիրո այդպիսի կուլտը՝ «Ով գքեզ սիրե, հնց մեռանի» (Թլկուրանցի), նման և հարազատ է Նիզամիի պոեզիային:

Կոստանդին Երզնկացու, Հովհաննես Թլկուրանցու և Գրիգոր Աղթամարցու բանաստեղծությունների պատկերավորությունը, գեղարվեստական համեմատությունները, էպիտետները, վարդ և բլբուլի սիրո այլաբանությունը, սիրած կնոջ չինար հասակը, կամար կամ աղեղ ունեքերը, ծով-ծով աչերը, մի խոսքով սիրա-

ծի արտաքինի գովքը շատ են հիշեցնում արևելյան ժողովուրդներին պոեզիան, առաջին հերթին Նիզամիի լիրիկան:

Կոստանդին Նրզնկացու և Գրիգոր Աղթամարցու վարդ ու սոխակի այլաբանական սիրավեպերը շատ կողմերով առնչվում են Նիզամիի «Լեյլի և Մեջնուն» և մասամբ «Պոսրով և Շիրին» սիրավեպերի հետ:

Ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը խոսելով միջնադարյան հայ գրականության մեջ այլաբանությամբ հորինված «վարդ ու սոխակի» սիրավեպերի մասին, գրում է.

«Հայոց գրականության մեջ վարդը երևան է գալիս 10-րդ դարում արդեն, բայց վարդ ու սոխակի այլաբանությունն ընդհանուր գրականության մեջ, որքան հայտնի է, նախ երգել են պարսիկ բանաստեղծները: Մեր բանաստեղծների համար հեշտ ընդունելի է եղել այս այլաբանությունը, քանի որ վարդը մեզնում հնուց արդեն կապված է եղել սիրո հետ. հեթանոսական ժամանակներում արդեն այս ծաղիկը նվիրական է եղել սիրո աստվածուհի Աստղիկին: Ուստի մեզանում ևս այս սիրավեպի այլաբանության տակից պարզ ցուանում է զգայաբանական հեշտավետ սերը» (Մ. Աբեղյան «Հայոց հին գրակ. պատմ.» գիրք 2-րդ, 1946 թ., էջ 321):

Եվ իսկապես, վարդ ու սոխակի սիրո հայ երգիչների մոտ վարդն այն հրաշագեղ, անաղարտ աղջիկն է, որին անհուն կարոտով տենչում է սոխակ—տղան: Վարդ՝ աղջկա բացակայությունը լցնում է սոխակ—տղայի սիրտը նուրբ թախիծով և նրան դարձնում սիրո կարոտակեղ երգիչ:

Այլաբանության տակ անմիջապես երևում է զգայական, իրական սերը, որ մարդուն երջանկացնում է, դարձնում բախտավոր, մղում սիրագործության, աղնվացնում է հոգին, դարձնում սոխակ-երգիչ:

Կոստանդին Նրզնկացու և Գրիգոր Աղթամարցու վարդ ու սոխակի վերաբերյալ այլաբանական ստեղծագործությունները հարուստ են լիրիկական զեղումներով, բայց իրենց բնույթով և առանձնահատկություններով մոտ են էպիկական ստեղծագործություններին տեսակին:

Դրանք այնպիսի քերթվածներ են, որտեղ հանդես են գալիս խարակտերներ՝ վարդ-աղջիկը ու սոխակ-սղան. նրանց սերը զրսևորվում է որոշ գործողությունների, խոսակցությունների և ջերմաշունչ նամակների միջոցով: Հետևապես Ներդնակացու և Սղթամարցու երգերը իրենց բնույթով և ձևով սիրավեպեր են, ինչպես Նիզամիի «Լեյլի և Մեջնուն» ու «Խոսրով և Շիրինը»:

Որքան մեզ հայտնի է, արաբական և պարսկական զրավոր գրականության մեջ սիրո զգացմունքը գերազանցորեն արտահայտվել է լիրիկայի մեջ, ինչպես օրինակ Հաֆիզի սիրո երգերը: Արևելյան ժողովուրդների գրականության պատմության մեջ սիրավեպերի առաջին հեղինակներից և հիմնադիրներից մեկը հանդիսանում է Նիզամին: Այդ նշանակում է, որ սիրավեպեր հորինող միջնադարյան հայ հեղինակները նախ և առաջ պետք է առնչվեին Նիզամիի հետ, նրա միջոցով յուրացնելով գրական այդ ժանրը¹):

Կարելի է նշել բազմաթիվ սյուժետային և ձևական նմանություններ, եթե համեմատենք միջնադարյան հայ գրողների սիրավեպերը Նիզամիի «Լեյլի և Մեջնուն» և «Խոսրով և Շիրինը» երկերի հետ:

Կոստանդին Ներդնակացու ՓԱ. ծովալուսն բանաստեղծության մեջ սիրո վեհ զգացմունքը զրսևորվում է դարնանը՝ վերածնվող բնության հոյակապ պատկերների մեջ: Ծաղիկները՝ աղջիկներն են, որոնք նախանձում են ամենահմայիչ աղջկանը՝ վարդին, որովհետև թռչուններից՝ աղաններից ամենագեղեցիկը և սիրառատը՝ սոխակը անգամաճան սիրում է միայն վարդին:

Վարդի և սոխակի անկաշառ սերը, մարդկային ամենաաղանիվ զգացմունքների արտահայտությունն է: Դա այն սերն է, որ շունչ և կենդանություն է տալիս բոլոր արարածներին, անգամ թռչուններին, ծաղիկներին և ողջ բնությանը: Սերը մոռացնել է տալիս և՛ վիշտ, և՛ տառապանք: Բայց միայն վար-

1). Կյանքի վերջում Ֆիրդուսին կերպել է «Յուսուֆ ու Զուլեյխա» սիրավեպը, որը սակայն չունի Նիզամիի սիրավեպերի հոչակը և հմայքը: Արևելքի ամբողջ միջնադարյան գրականության մեջ սիրավեպերի ամենամեծ ներկայացուցիչը՝ Նիզամին է:

դէն է թախճոտ, որովհետեւ գիտե, որ իր կյանքը կարճատե է: Նա հրավիրում է սոխակին, որ դա և համբուրի իրեն, ուշանալու գեպքում իրեն—վարդին կքաղեն և սոխակը կզրկվի իր սիրածից:

Նախանձոտ մանիշակը համոզում է ֆնացած աղջիկներին՝ հորոտ-մորոտին, նարգիզին, ձնծաղիկին և մյուսներին, որ կարեն վարդենին, որպեսզի տղաները նրա պայծառ տեսքից չհիշանան և չմոռանան իրենց:

Սակայն սոխակի երգից բացվում է վարդը, հաջնում է կարմիր շորեր և զարդարում սիրահարների պարտեզը: Հիացած սոխակը ջերմ սիրո այրող խոսքերով, գովերգում է իր սիրածին: Նախանձոտները թառամում են, փախչում լեռները, կամ ամոթից կապտում (մանիշակը):

Սյուժետային դժի զարգացման և արտահայտած տրամադրությունների տեսակետից Նիզամիի «Լեյլի և Մեջնուն» քերթվածին ավելի մոտ և հարազատ է Գրիգոր Աղթամարցու սիրավեպը՝ «Վասն վարդի և սյուլսյուլի» և «Տաղ գարնան» բանաստեղծությունը, որն օրգանապես կապված է առաջինի հետ և կարծես հանդիսանում է նրա շարունակությունը (տես՝ Կ. Կոստանյանց «Գրիգոր Աղթամարցին և յուր տաղերը», Թիֆլիս, 1898 թ., էջ 38—47):

Գրիգոր Աղթամարցու սիրավեպը այսպես է բնութագրում Կ. Կոստանյանցը. «Ուրբան դեղեցիկ է մարդուս սրտի սիրելին, որքան չնաշխարհիկ և թանկ է նա մարդուս համար, այնքան մեծ ուրախություն է զգում մարդ նորա ներկայությունից և այնքան ավելի մեծ վիշտ, երբ նորան ձեռքից թողնում է: Աղթամարցուն ոգևորել է առավելապես այդ կրկնակի զգացմունքը, որ նա շատ դեղեցիկ այլաբանությամբ պատկերացնում է մեր աչքի առաջ սոխակի և վարդի օրինակով: Արևելքին հառուկ այս այլաբանությունը միշտ ջերմ սիրո և անխարդախ հավատարմության գաղափարն է արծարծել ընկերական կյանքի մեջ: Արևելքը սոխակի և վարդի մեջ տեսնում է այդ գաղափարի կատարելատիպը. բոլորովին սիրո գուսանն է սոխակ և գեղեցիկության քնքույշ և հազվագյուտ օրինակն է վարդ, ոչ ոք

չի կարող այնպես ջերմ սիրել, ինչպես սոխակը, և այնպես ան-
վերջ սիրվել, ինչպես վարդը: Այս ոգևորության առարկան է
Գրիգորի Աղթամարցուն հանդես բերել իբրև կատարյալ աշուղ՝
յուր ժամանակակիցների զգացմունքները դարթեցնելու» (նույն
տեղ, էջ 25):

Գրիգոր Աղթամարցու «Վասն վարդի և պոռպոռի» սիրա-
վեպի մեջ պատկերված է, թե ինչպես աշուն է և վարդը բացա-
կայում է այդուց: Սոխակը հուսահատության մեջ, ջերմ կարո-
տով փնտռում է իր սիրածին: Վարդի մասին ոչ ծաղիկները և
ոչ թռչունները չեն կարողանում գոհացուցիչ տեղեկություններ
հաղորդել սոխակին: Սոխակ-տղան դառը վշտի մեջ, սրտի ցա-
վից կործանված անիծում է պարտեզը, այն տեղը, ուր մի ժա-
մանակ իր սիրած վարդ-աղջիկն էր լինում:

«Բակմուլի քո ամուր պատն, դառնամ աւերակ.
Չորնամ ճիւղդ և տերեղ ծառոց շիտակ.
Ամեն ոտքն խաղանջ ի քեզ համարձակ,
Վերնայ բուսն ու բանջար և ամեն կանաչ տակ.
Ակունք յորդախաղաց, մի՛ գնայք հառաջ,
Ծառեր, թոթափեցեք գտերև ձեր կանաչ...»:

Ապարդյուն որոնումներից հետո սոխակը անհուն տառապան-
քի մեջ, աշխարհով մեկ լալահառաչ ողբում է իր կորսված սե-
րը: Առանց սիրածի կյանքը դառնում է սոխակի համար աննպա-
տակ, իսկ արեգակը թվում է նրան խավար:

«Ո՞ւր տարան, վաճի՛ր, զքեզ, կամ ո՞ւր թաղուցին,
Չիմրդ մոռանամ ես զսէրն քոյին,
Խոցեցաւ սիրտս ու լերդս կսկծադին,
Ծաղկունքն թող հաւսար այսօր թառամին:
Իմ կեանքս է գէմ երազ, լես երեմանի,
Եվ լոյսն արեգականն ինձ խաւար թուի»:

Սոխակը չի կարող ապրել առանց վարդի: Սոխակը կարծում է,
որ վարդից զրկվելով, ինքը կմեռնի և կիջնի գերեզման:

«Վախեմ թ'առանց վարդին յանկարծ մեռանիմ,
Կարօտով բաժանեալ ի հողն իջանիմ.
Թէ զարարածս ամէն վարդին փոխան տան,
Նա անարդ ինձ թուի, և՛ ոչինչ, անպիտան,
Կամ դասք երգեցողաց երաժշտական,
Քաղցրիկ եղանակեն, ինձ գուժ է և գան»:

Դժվար չէ տեսնել Գրիգոր Աղթամարցու սիրավեպի նմանութ-
յունը Նիզամիի «Լեյլի և Մեջնուն» պոեմի հետ: Աղթամարցու
մոտ վարդի ու սոխակի ջերմ սիրո պատմության մեջ դրվա-
վում է հավատարմության գաղափարը, ինչպես Նիզամիի «Լեյ-
լի և Մեջնուն» պոեմի մեջ:

Նիզամիի Լեյլին հանուն Մեջնունի մերժում է հարուստ
Իբն-Սալամի ձեռքը: Աղթամարցու մոտ ևս վարդը պատրաստ է
թառամել, բացի սոխակից չսիրելով ոչ ոքի:

Նիզամիի մոտ բորբոքված և չբավարարված սերը Մեջնունին
դարձնում է բանաստեղծ-երգիչ: Մեջնունի նման Աղթամարցու
սոխակ-տղան պատրաստ է մեռնել, որովհետև առանց սիրածի,
կյանքը դատարկություն է և անհուն երազ:

Լեյլիի պես վարդ-աղջիկը քնքույշ գեղեցկության, հավա-
տարմության կատարելատիպն է:

Սոխակի նամակը վարդին սիրող մարդու զգացմունքները և
սպասումների բուռն և սրտառուչ արտահայտությունն է.

«Քեզ վողջույն գրեմ ես, սրտե սիրելի,
Նվ հարցանեմ զանձնեդ, ո՞վ երանելի...
Խնդրեմ ի աստուծոյ, զի կեանքդ աւելի,
Ներքին և արտաքին չարն ի քէն փախչի.
Ծաղկանցն ամենայնի գլուխն դու ես...
Գունովդ վայելուչ, հոտովդ անուշ ես...
Յամէն առաւօտու քան զարև փայլես,
Նրանի այն պահուն, որ տեսանեմ զքեզ,
Զի դու ես բնութեամբ անարատ և հեզ.
Խոնարհաբար հեռուստ երկրպագեմ քեզ,
Նվ զդարձն քո խնդրեմ, քաղրացի՛ր առ մեզ...»

Զի առանց քո տեսուդ ես եմ երերուն,
Գիշերն քունն չի գայր, այլ կենամ արթուն.
Նեղեալ ի փղձկիմ թ' երբ լինի գարուն,
Հալել եմ և մաշեր ի քո կարօտուն»:

Սոխակի այս հոգեիճակը, նրա գիմումը վարդին և սիրածի գովքը շատ են հիշեցնում Լեյլի մասին հորինված Մեջնունի խաղերին, իսկ վարդի պատասխանը և սոխակին հուսադրելը դարձյալ հիշեցնում է Լեյլի գիմումը Մեջնունին:

Գրիգոր Աղթամարցու տաղի մեջ չբավարարված անհույս սերը, ուրախությանը հաջորդող սուգը, վիշտը, կյանքի և երջանկության կարճատևությունը հետևյալ պատկերացումն է ստացել.

«Յիմար Աղթամարցի զխելքդ ժողովէ՝
Զի սէր այս աշխարհիս հաւասար փուշ է...
Սակաւ խնդալ կուտայ, յետ դառն և գուժ է,
Ի՞նչ շահ է քո խնդալդ, երբ վերջն սուգ է»:

Այստեղ արդեն ակնբախ հնչում են Նիզամիի հանրածանոթ մոտիվները, որ նա արտահայտել է «Իսկինդար-Նամե», «Լեյլի և Մեջնուն» ու «Խոսրով և Շիրին» պոեմներում:

Միջնադարյան հայ երգիչներից Նիզամիի ստեղծագործության հետ Աղթամարցուց ավելի սերտ և անմիջանակորեն կապված է եղել «Մեր հոյակապ, մեր արքայական» «երգի արքա», Սայաթ-Նովան:

Սայաթ-Նովայի գրական հարուստ ժառանգությունը պատկանում է Անդրկովկասի երեք եղբայրական ժողովուրդներին: Միանգամայն իրավացի է նշանավոր աշուղապետ Գարեգին Լև վոնյանը, երբ գրում է. «Սայաթ-Նովան իր սքանչելի երգերը գրում և երգում էր վրացերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով և միատեսակ հասկանալի ու սիրելի էր Անդրկովկասի այդ երեք եղբայրական ժողովուրդներին»:

Անդրկովկասի իրականության մեջ Սայաթ-Նովան այն բացառիկ դեմքերիցն է, որը ստեղծագործելով երեք լեզուներով՝ վաղուց դուրս է եկել մի ժողովրդի գրականության շրջանակներից և դարձել է «միջազգային անմահ աշուղ» (Լևոնյան):

Հայ գուսանական գրականության գաղաթ Սայաթ-Նովան այնքան հարազատ է վրաց ժողովրդին, որ վրացիները նրան համարում են նաև իրենց բանաստեղծը: Ադրբեջանական ժողովուրդը նույն-չափ և ավելի մեծ իրավունք ունի Սայաթ-Նովային դասելու իր փայլուն քնարերգուների շարքը, որովհետև Սայաթ-Նովան հորինել է շուրջ 120 երգ ադրբեջանական լեզվով:

Եթե մինչև իսկ մի կողմ թողնենք մեր բանաստեղծի ադրբեջաներեն երգերը, ապա դարձյալ կտեսնենք, որ Սայաթ-Նովան իր հայերեն բանաստեղծություններով սերտ կապված է արևելյան ժողովուրդների և առաջին հերթին ադրբեջանական պոեզիայի հետ:

Հովանական է այն կարծիքը, որ Սայաթ-Նովան ճանապարհորդել է Իրան և Հնդկաստան, տիրապետել է արևելյան մի քանի լեզուների, քանի որ իր գրվածքների մեջ հիշատակում է բազմաթիվ արևելյան երկրներ և անուններ, նա քաջ ծանոթ է Նիզամիի և Ֆիրդուսու օբրազներին:

Սայաթ-Նովայի և նրա հետնորդների ժամանակ մեր գրականության մեջ դեռ իշխում էր ժողովրդին անհասկանալի գրաբար լեզուն: Աշխարհաբար գրական լեզուն նոր էր ձևավորվում, քաղաքացիական իրավունք դեռ չէր ստացել, իսկ Թիֆլիսի կամ մի այլ բարբառով դժվար էր արտահայտել բազմերանգ ձևով ժողովրդական երգչի հարուստ ներքնաշխարհը: Սայաթ-Նովան, ինչպես և նրա ուղղության ներկայացուցիչները այս դժվարութունը լուծեցին իրենց երգերի մեջ մեծ տեղ հատկացնելով ադրբեջանական բառերին, կամ ուղղակի հորինեցին ադրբեջաներեն, մի լեզու, որ հարազատ և հասկանալի է հայ ժողովրդին:

Հայ աշուղների, որոնց թվում և Սայաթ-Նովայի անմիջական առնչությունն ադրբեջանական պոեզիայի հետ առավել ակներախ երևում է նրանց բանաստեղծությունների տաղաչափական արվեստի և երգերի եղանակների մեջ:

Սայաթ-Նովայի կապը ադրբեջանական պոեզիայի հետ երեւում է նաև բանաստեղծի գործածած պատկերներին և գեղարվեստական համեմատություններին:

Գեղեցիկի, վեհի, ազնվության, անկաշառ սիրո, արիության գաղափարները արտահայտելու համար բանաստեղծը համեմատության կարգով հաճախ օգտագործում է ադրբեջանական պոեզիայում տարածված պատկերները, մանավանդ Նիզամիի կերպարները՝ Լեյլին և Մեջնունը, Փարհազը և Շիրինը:

Սայաթ-Նովայի ստեղծագործության վերոհիշյալ առանձնահատկությունները՝ սերտ առնչությունը ադրբեջանական լեզվի, պոեզիայի պատկերավորության և տաղաչափության հետ¹⁾, ոչ մի կասկած չեն թողնում, որ նա հրաշալի գիտեր ադրբեջանական գրականությունը, առանձնապես Նիզամիի ստեղծագործությունները:

«Սայաթ-Նովան մեզ թողած հայերեն և վրացերեն երգերում և գրվածքներում երբեք չի հիշատակում և չի օգտագործում հանրամատչելի ժողովրդական էպիկ ստեղծագործությունների հերոսների անունը, սյուսենները, այս կամ այն հաջող և ցատուուն պատկերները: Այնպիսի ժողովրդական հերոսի, ինչպիսին է Քյոռ օղլին՝ Սայաթ-Նովայի երկերում մենք չենք պատահում: Սխալ կլիներ կարծել, թե Սայաթ-Նովան չգիտեր, ծանոթ չէր այդ նյութերին: Այդպիսի կարծիք եթե երբևիցե ունէ՝ մեկն արտահայտել է, կնշանակե նա Սայաթ-Նովայի ստեղծագործություններից անտեղյակ մարդ է եղել», ասում է գրականագետ

1). Այդ տեսակետից ուշագրավ է Սայաթ-Նովայի 10-րդ երգը, գրված վրացերեն.

«Այս մութամասը երգչի մեզ հասած վրացերեն բոլոր խաղերից տարբերվում է իր ուրույն տաղաչափությամբ (5—4—5), որի չափով Սայաթ-Նովան գրել է և հայերեն միայն մի մուսաղղաս խաղ—«Փահրաղըն միռած, Շիրինն ասաց՝ դարեն էրված իմ»: Այս չափով գրված ոտանավորներ ունի նաև 18-րդ դարի երկրորդ կեսի ադրբեջանական նշանավոր պոետ Վազիֆը» գրում է Մ. Հասրաթյանը (տես՝ «Սայաթ-Նովա» ժողովածու, Երևան, 1945 թ., էջ 168): Սայաթ-Նովայի պոեզիայի տաղաչափությունը կապված է արևելյան՝ արաբական և ադրբեջանական աշուղական բանաստեղծական չափերի հետ:

Ա. Արշարունին: (Ա. Արշարունի «Նիդամին և Սայաթ-Նովան» տես՝ «Սովետական գրող» ամսագիրը, Բաքու, 1941 թ., № 1, էջ 63):

Երկրորդ անգամ կրկնելով նույն միտքը, Արշարունին գրում է. «Նախ և առաջ նշանակալից է այն պարագան, որ Սայաթ-Նովան իր հայերեն և վրացերեն մինչև հիմա հայտնի երկերում բացի Նիդամու և Ֆիրդուսու հերոսներից, ոչ մի այլ մեծ և հայտնի բանաստեղծի կամ բանահյուսության անվանի հերոսի անուն չի հիշատակում: Արդյոք, սա պատահականություն է, թե որևէ ավելի խոր և սկզբունքային տեսակետի հետևանք: Մենք կանգնած ենք այն տեսակետի վրա, որ սա հետևանք է երկրորդի»: (Նույն տեղ, էջ 64):

Մի աննշան բացառությամբ¹⁾, հոգվածագիրը ճիշտ կերպով նկատել է, որ Սայաթ-Նովան թեպետ հրաշալի գիտեր ժողովրդական բանահյուսությունը, այնուամենայնիվ իր ստեղծագործությունների մեջ չի օգտագործում ֆոլկլորային հերոսներին և միայն դիմում է Նիդամիի և Ֆիրդուսու օբրազներին:

Այնուհետև Արշարունին նշում է, որ դա պատահականություն չի. այլ բխում է Սայաթ-Նովայի գրական կոնցեպցիայից.

«Ժողովրդական բանավոր ստեղծագործությունը, որպես նախորդ և աշակերտական շրջան իր գրական գործունեության,

¹⁾ Ընկ. Արշարունին թույլ է տվել մի փոքրիկ վրիպակ. Սայաթ-Նովան իր հայերեն «Ն» խաղի և աղբբեջաններեն 33 խաղի մեջ հիշատակում է «Աշուղ Ղարիբ» հայտնի սիրավեպի հերոսներին՝ Ղարիբին և Շահսանամին (տես «Սայաթ-Նովա» ժողովածու, կազմեց Մ. Հասրաթյան, Երևան, 1945 թ., էջ 38, 123):

Այս վրիպակը առաջացել է Արշարունու կամքից անկախ, որովհետև նա իր հոգվածում զգուշացնում է, թե աղբբեջաններեն երգերը հրատարակված չեն և հետևապես առայժմ հնարավոր չի դրանց մասին խոսել: Այժմ, երբ հրապարակի վրա են բանաստեղծի հիմնական և բնորոշ երգերը, միանգամայն հաստատվում է Արշարունու այն տեսակետը, որ Սայաթ-Նովան բացի Նիդամիի և Ֆիրդուսու հերոսներից, գրական կամ ֆոլկլորային այլ կերպարներ իր երգերում համարյա չի հիշատակում: Բացառություն կազմում են միայն Ղարիբի հիշատակությունը մեկ անգամ և Շահսանամի հիշատակումը երկու անգամ:

Սայաթ-Նովան գնահատել է և օգտագործել, աշխատել է միշտ ժողովրդի հետ իր սերտ կապը հաստատ պահել: Սակայն նա, որպես մեծ վարպետ, կանգնած է եղել այն տեսակետի վրա, որ ժողովրդական մասսաներն իրավունք ունեն ավելի լայն, ավելի խոր և ավելի զեղարվեստական որակավոր գրվածքների պահանջ դնել աշուղի, բանաստեղծի և գրողի առաջ: Իր ստեղծագործությամբ Սայաթ-Նովան ապացուցեց և շնորհալի կերպով արդարացրեց իր առաջ դրած տեսական լուրջ խնդիրը»: (Նույն աեղ, էջ 64):

Համամիտ լինելով Արշարունու այն տեսակետին, թե Սայաթ-Նովայի համար Լեյլիի, Մեջնունի, Ֆարհադի, Շիրինի և Իսկենդարի կերպարները օգտագործման ավելյուրը հանդիսացել է Նիզամին և ոչ թե ֆոլկլորը, միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել նաև, որ մինչև իսկ հակառակ դեպքում ևս գրությունը դարձյալ չի փոխվում:

Ինչպես մենք արդեն տեսանք, անփխտելի է, որ Նիզամին մեծ չափով օգտվել է ֆոլկլորից, բայց ստույգ է նաև մեծ գրողի հսկայական ազդեցությունը արևելյան ժողովուրդների բանահյուսության վրա:

Հետևապես, եթե Սայաթ-Նովան օգտվել է ֆոլկլորից, ապա դարձյալ կապվում է Նիզամիի հետ, որովհետև նա՝ Նիզամին է, որ վերոհիշյալ հերոսներին անմահացրել է գրականության և ժողովրդական բանահյուսության մեջ: Երկու դեպքում ևս սկզբնաղբյուրը Նիզամին է, միայն ճանապարհներն են տարբեր. մի դեպքում Սայաթ-Նովան անմիջապես է կապվում Նիզամիի հետ, մյուս դեպքում ֆոլկլորն այն կամուրջն է, որով Սայաթ-Նովան հասնում է Նիզամիի կերպարների ընկալմանը:

Նիզամիի հերոսներից Սայաթ-Նովան ամենից շատ սիրել է Լեյլիին և Մեջնունին և իր երգերի մեջ ամենից շատ նրանց անուններն է հիշատակում: Սիրո մեծ երգիչ Սայաթ-Նովան Լեյլիին և Մեջնունին հիշատակում է՝ ԻԴ, ԺԲ, Խ, Զ, ԼԶ, ԽԲ, ԽԸ, հայերեն խաղերի մեջ, Ի վրացերեն խաղի մեջ և 9, 17, 20, 47, 7, 10 աղբյուրներն խաղերի մեջ, ընդամենը 14 անգամ (տես՝ «Սայաթ-Նովա» ժողովածու, կազմեց Մ. Հասարթյան, Երևան, 1945 թ.):

Լեյլիից և Մեջնունից հետո երկրորդ տեղը բռնում են Փարհազը և Շիրինը: Նրանց հիշատակում է՝ Ի, ԽԷ, ԾԱ, Ծ, հայերեն խաղերում, 24 վրացերեն խաղում և 12, 7 ադրբեջաներեն խաղերի մեջ, ընդամենը՝ 7 անգամ (նույն տեղ):

Նիզամիի Իսկենդարի կերպարը Սայաթ-Նովայի երգերում գործածվում է երեք տեղ՝ ԻԱ, ԽԸ հայերեն խաղերի մեջ և 31 ադրբեջաներեն խաղում (նույն տեղ):

Մյսայիսով Սայաթ-Նովան Նիզամիի հերոսներին հիշատակում է 24 տեղ, Ֆիրգուսու Ռուստամ-Ջալը 8 անգամ (Ը, ԼԱ, ԽԸ, Ծ հայերեն խաղում, 5, 6, 19, 22 վրացերեն խաղերի մեջ), Ֆուկ-լորային հերոսներից՝ 1 անգամ Ղարիբին, երկու անգամ Շահ-Սանամին, 2 անգամ առասպելական հեքիմ Լոդմանին և մի քանի բիրլիական հերոսների, սրանով վերջանում է Սայաթ-Նովայի կերպարների պատկերասրահը: Սայաթ-Նովան ինչպես տեսնում ենք, ամենից շատ սիրել և հիշատակել է իր երգերում Նիզամիի օբրազները:

Բացի այդ կա ենթադրություն, որ Սայաթ-Նովան ծանոթ է Նիզամիի Բահրամ-Գուրի կերպարին:

«Թ» հայերեն խաղի մեջ Սայաթ-Նովան դիմելով սիրածին ասում է.

«Յար, յիս քիզ բարով իմ տալիս,—շուռ իս
զալի, դալ իս անում,
Զունքի խոսքդ անց է կենում բեկու շահան-
դազի նրման».

«ԽԷ» խաղի մեջ գրում է.

«Սայաթ-Նովա, խոսկըս ասա —բեկու քա-
մանդարի բարաթ»:

Մ. Հասրաթյանն «Բեկու շահանդազ» բառերը բացատրում է այսպես. «Թ» խաղի 4-րդ տան վերջին տողի շահանդազ բառը թարգմանվել էր «արքայական երթ» իմաստով, որը «բառացի» և բռնադրոսիկ է: Էնդազը պարսկ. էնդախթեն (նետել, ձգել) բայի հրամ. եղանակն է, որից բարդվում է թիրէնդազ, նետաձիգ բառը: Գուցե Բահրամ Գուրի նետն է այսպես կոչվել բանավոր վեպում, որովհետև ասում է բեկու շահանդազ (հռչակա-

վոր...), կամ լավագույն, ազնիվ տեսակի արքայական նետի մի տեսակն է, դժվարանում ենք ասել, բայց այլ իմաստ հազիվ թե ունենա» (նույն տեղ, էջ 157):

Մի ուրիշ ծանոթության մեջ Մ. Հասրաթյանը գրում է, թե «Խէ» խաղի վերջին տողի «բելլի քամանդարով» (հռչակավոր նետաձիգ-աղեղնավոր) ենթադրում ենք, թե... Բահրամ Գուրին նկատի ունի հեղինակը» (նույն տեղ, 166):

Սայաթ-Նովան, որպես մեծագույն և ինքնուրույն գրական գործիչ, լրջորեն աշխատել է մեր հայ գրականության մեջ արմատացնել ադրբեջանական տաղանդավոր բանաստեղծի—Նիզամիու ահունը: Ինքը սիրել է Նիզամուն և նրա երկերը, որպես գրող, բանաստեղծ և մտավորական: Նա ցանկացել է իր կարողության չափ տարածել Նիզամիու անունը հայ ժողովրդի մեջ՝ գրում է Արշարունին «Նիզամին և Սայաթ-Նովան» հոդվածի մեջ (տես՝ «Սովետական գրող» ամսագիրը, Բաքու, 1941 թ., № 1, էջ 64):

Նիզամիի նման, սիրո երգիչ Սայաթ-Նովայի պատկերացմամբ, սերը մարդուն խրախուսում է, տալիս է ուժ և կորով: Կինը նրա համար հավատարիմ ընկեր է, անմահական ջուր:

«Աշխարհումըս ախ չիմ քաշի, քանի վուր

ջանիս ինձ ամա՛

Անմահական ջրով լիքըն օսկե փընջան

իս ինձ ամա՛

Նըստիմ, վըրես շըվաք անիս՝ զարբաբ

վըրանիս ինձ ամա՛

Սուչս իմացի, էնենց պղանե՛ սուլթան

ու խանիս ինձ ամա՛

(խաղ ժԸ):

Լեյլի և Մեջնուն գժբախտ սիրահար զույգը շատ մոտ են մեր բանաստեղծի սրտին, որովհետև նա ևս անհույս, չբավականարարված սիրո երգիչ է: Մեջնունի պեզ Սայաթ-Նովային ևս սերը զարձրել է բանաստեղծ-երգիչ: Իրեն նմանեցնելով Մեջնունին, Սայաթ-Նովան գովերգում է իր սիրուհուն, համեմատելով նրան Լեյլիի հետ: Սայաթ-Նովայի համար Լեյլին գեղեց-

կուլթյան, անճնազոհ և անբիծ սիրո մարմնացումն է, իդեալական կնոջ կատարելատիպը: Բերենք մի քանի օրինակներ Սաթ-Նովայի երգերից.

«Յիս քու ղիմաթն չիմ գիդի՝ ջալահիր
քարի նըման իս.

Տեսնողին Մեջլում կու շինիս՝ Լեյլու դի-
դաբի նըման իս»:
(խաղ ԻԴ):

Իր ծանր վիճակը բանաստեղծը արտահայտում է այսպես.

«Լեյլի-Մեջլումն էլ չի էլի էս հալով» (ԺԲ)

«Մեջլումի պես սարն իմ նընգի, Լեյլու-
մեն խաբար չունիմ» (Խ)

«Մեջլումի պես կորավ յարբս,

Լեյլի ջան, ման իմ գալի յանա-յանա.

Էրվեցավ խունի ջիգարբս,

Արնի պես աչիս է լալի յանա-յանա,
յանա-յանա» (2):

«Էշխեմեն էնպես վառվիլ իմ՝

Վունց Մեջլում՝ յար իմ ասում» (ԼԶ):

«Լեյլումի թայ յար կորցըրի՝ Մեջլումի
պես հա ժուռ էկա» (1—վրա-
ցերեն):

«Մեջլումի պես Լեյլու համա խիվացած,
Յիս բլբուլ իմ, զոռով վարթես հիռա-
ցած», (17—ադրբեջաներեն)

«Մեջլումի պես Լեյլու համա գժվեցի»,
(20 խաղ, ադրբեջաներեն)

«Մեջլումի պես ան իմ քաշում չոլբում»,
(7 խաղ, ադրբեջաներեն):

Կարելի է բերել բազմաթիվ այլ օրինակներ ևս: Բայց այս-
քանն էլ բավական է համոզվելու համար, որ Սաթ-Նովայի
ստեղծագործությունը սերտ կապված է եղել ադրբեջանական
ժողովրդի մեծ բանաստեղծ Նիզամիի ժառանգուլթյան հետ:

Հայ նոր գրականության հիմնադիր խաչատուր Աբովյանից սկսած բազմաթիվ գրողներ և բանասերներ զբաղվել են հարեւրական ժողովուրդների ֆոլկլորային ստեղծագործությունների հայկական վարիանտների հավաքումով և ուսումնասիրությամբ ու այդ ստեղծագործությունների թեմաները, մոտիվները մշակելով, գրել են պատմվածքներ, պոեմներ և բանաստեղծություններ: Հայտնի է, որ մեր իրականության մեջ խաչատուր Աբովյանը հանդիսացել է աղբրեջանական և քրդական երգերի առաջին հավաքողը:

Աղբրեջանական ժողովրդական էպոս «Քյոռ-օղլին» հայ ժողովրդի ամենասիրված վեպերից մեկն է: Արևելյան ժողովուրդների մեջ ամենամասսայականացած հերոսներից մեկին՝ Քյոռ-օղլու մասին բազմաթիվ զրույցներ և ավանդություններ կան հայ ժողովրդի մեջ¹⁾:

Ռաֆայել Պատկանյանը 19-րդ դարի կեսերին գրել է «Քյոռ-օղլին» պոեմը, իսկ Ղազարոս Աղայանը հորինել է երեք հմայիչ պատմվածք՝ «Քյոռ-օղլու թուրը», «Քյոռ-օղլին ջաղացական» և «Քյոռ-օղլին կալանավոր»²⁾:

Նշանավոր բանահավաք Գ. Հովսեփյանը 20-րդ դարի սկզբին գրել է առել «Ռուստամ-Ջալ» հայ-իրանական վեպը և գրել է զրա մասին մի ուսումնասիրություն: Բ. Սալաթյանը նույնպես գրել է ուսումնասիրություն «Ռուստամ-Ջալ» հայ-իրանական վեպի մասին (տես՝ «Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ», Պարիզ, 1901 թ.):

«Լեյլի և Մեջնուն» ու «Փարհադ և Շիրին» արևելյան ժողովուրդների հուշակավոր սիրավեպերը նույնպես լայն տարածում են ստացել մեր իրականության մեջ:

1). Հայ աշուղները աղբրեջաներենից և թուրքերենից փոխադրել են հայերեն «Քյոռ-օղլու» վեպ-զրույցը: Սովետական իշխանության օրոք, մի քանի տարի սրանից առաջ, լույս է տեսել «Քյոռ-օղլի» ժողովածուն՝ հայկական բազմաթիվ հեքիաթների և զրույցների վարիանտները:

2). Մանրամասնությունները տես մեր հոդվածում՝ «Քյոռ-օղլու կերպարը հայ գրականության մեջ», լույս է տեսել «Նոր-հրդային գրող» ամսագրում և Ա.ս. Ասատրյան «Ղազարոս Աղայան» աշխատությունը:

Ս. Մ. Ա. մեզ անհայտ թարգմանիչը, 1913 թվին ֆարսերենի և թուրքերենի համեմատությամբ փոխադրել է և թիֆլիսում առանձին գրքույկով հրատարակել «Փարհադ և Շիրին» դաստան-հեքիաթը։ Ուսանավորների ազատ փոխադրության հետ այստեղ զուգընթաց տրված են թուրքերեն բնագրի երգերը։

«Փարհադ և Շիրին» թուրքական ֆոկլորային վերոհիշյալ հեքիաթը շատ կողմերով նման է Նիզամիի «Խոսրով և Շիրին» պոեմին։

Անհայտ է «Փարհադ և Շիրին» պարսկա-թուրքական դաստան-հեքիաթի և երգերի հորինման ժամանակը, բայց ստույգ է, որ Փարհադի և Շիրինի մասին եղած ժողովրդական սիրավեպերից շատերն, ինչպես նրանք պատմվում են այժմ, հայտնի են Նիզամիից հետո, այսինքն 12-րդ դարից հետո։ Հետևապես չենք պնդում, բայց հավանական է, որ Նիզամին է աղբյուր վերոհիշյալ հեքիաթի վրա և բանահյուսության մեջ Փարհադի և Շիրինի սիրո պատմությունը, այնպես, ինչպես այժմ մեզ հայտնի է, հավանաբար գալիս է Նիզամիի պոեմից։

Անհետաքրքիր չի լինի ծանոթանալ «Փարհադ և Շիրին» թուրքական դաստան-հեքիաթի հայկական փոխադրության հետ։ Գրքի սկզբում փոխադրող Ս. Մ. Ա. հետևյալ դիտողությունն է անում. «Թե ինչ ավանդություններ են պահպանված հեքիաթների մեջ, ժամանակը կգա, կհասնի պարզելու։

Միայն այսքան պիտի ի նկատի առնել, որ օսմանցիները երգիչ չունեցան հինգ դարի ընթացքում և հայ աշուղները նրանց ծառայեցին, թե իբր բանաստեղծ և թե նվագածու։ Ահա այս պատճառով էլ հայ աշուղների հորինած երգերը մեծ մասամբ հին-հին լեգենդաների փոխադրություն է, որն օսմանցիների կյանքի հետ ոչ մի առնչություն չունի»։

Եվ իսկապես վերոհիշյալ հեքիաթը ոչ մի կապ չունի օսմանյան իրականության հետ։ Դեպքերը տեղի են ունենում պատմական Հայաստանում՝ Վանա լճի շուրջը, Վասպուրական (Տոսպի) երկրում և Պարսկաստանում, իսկ գլխավոր հերոսներից՝ Մեհրի թագունին, Շիրինը և Փարհադը հայեր են։ Այդ ամենը ակնբախցույց է տալիս հեքիաթի հայկական ծագումը, այն, որ հորինողները եղել են թուրքերեն երգող հայ աշուղները։

Հեքիաթի համառոտ սյուժեն հետևյալն է.

Վասպուրական (Տոսպի) աշխարհի թագունի Մենրի իշխանուն հին իմաստուն վեպիրներին հետ միասին խաղաղությամբ և խեղացի կառավարում էր երկիրը և նստատեղում «երկրի մտավոր և արվեստական զարգացման» («Փարհադ ու Շիրին» դաստան-հեքիաթ, փոխադրեց Ս. Մ. Ա., Թիֆլիս, 1913 թ., էջ 4):

Մենրին հզոր թագունի էր և ոչ ոք չէր համարձակվում հարձակվել նրա երկրի վրա: Նա ուներ քրոջ և եղբոր աղջիկ՝ Շիրին անունով, «որը ոչ միայն անունով Շիրին (անուշ) էր, այլ բաղքով, վարքով, խելքով, մանավանդ գեղեցկությամբ» էջ 4):

Ազամից մինչև Մենրի թագունին
Երբեք չի տեսել անցավոր աշխարհն
Բեզ պես աննման մի չքնաղ տիպար,
Անունը Շիրին, պատկերը շիրին,
Սոսքերը շիրին, գործերը շիրին:

Թուրքերեն

Դեվրի Ադեմդեն բերի գյալմամիշ գուն-
յայա սեն կիպի գյուզել:⁶
Իսմի շիրին, քենդի շիրին, սեռդի շի-
րին պիր գյուզել: (էջ 5):

Մենրի թագունին Շիրինի համար կառուցել է տալիս մի հոյակապ պալատ: Նկարիչ Պայազատը իր որդի Փարհադի հետ միասին նկարազարդում է պալատի ներսը: Փարհադը «հորից գեղազանց հանճարեղ մտքի ու վրձինի տեր էր: Դեռ տասն ու հինգ տարվան այս պատանին հանճարի և բախտի պսակ էր կրում իր ձախատին: Փառքի ու պարծանքի ծիրանով զարդարված պատանի Փարհադը երբ դուրս էր գալիս փողոց, ամբողջ քաղաքի հայելին էր դառնում, և յուր կեռ ունքերով, աչքերի սլաքածիգ թերթիչներով, երկար ու ձյունանման սպիտակ վզով, գնդիկ խալերով, վարդադույն այտերով, անուշաբույր և գեղա-կազմ իրանով նմանում էր լուսնին» (էջ 6):

Շիրինի և Ֆարհադի հանգիստումը ունենում է ճակատագրական նշանակություն: Նրկու անմեղ սրտերի մեջ բորբոքվում է սիրո անշեջ հուրը, բայց նրանք չեն կարող իրար հետ տեսակցել և միանալ, որովհետև Մեհրի թագուհին երբեք չէր համաձայնվի Շիրինին ամուսնացնել արվեստագետ Ֆարհադի հետ: Սերը Ֆարհադին դարձնում է բանաստեղծ: Զերմ կարոտի այրող խոսքերով նա գովերգում, փառաբանում է Շիրինին.

Աչքերդ խոր, խոր ծով են,
Ընկղմվեցա խոր, խոր ծովերն,
Են կանչեցի նորան ծովեն,
Այն ինչ հոգւով ծով է եղել:

Թուրքերեն

Գեողլերին շիրին իմիշ,
Բագդադա շիրին իմիշ,
Բեն օնա շիրին դեղիմ,
Մեգյար ջանդան շիրին իմիշ: (էջ 11):

Մի ապառաժ ժայռի տակով հոսում էր անմահական աղբյուրը: Շիրինը ցանկանում է աղբյուրի շուրջ բերել իր պալատի պարտեզը, բայց ճարտարապետները հայտնում են, որ դա մարդկային ուժերից վեր է, որովհետև հարկավոր է ժայռը ճեղքել և ոչ ոք հանձն չի առնում ձեռնարկել այդ գործը, բացի Ֆարհադից:

Հանուն Շիրինի սիրո Ֆարհադը մենակ, գերմարդկային աշխատանքով, հզոր քլունգով և լծակով ճեղքում է ժայռը և իրագործում Շիրինի ցանկությունը: Ողջ ժողովուրդը մնացել էր ապշած և հիացած Ֆարհադի դյուցազնական գործով:

Մի աղախնու մատնությամբ Մեհրի թագուհին իմանում է, որ Շիրինը և Ֆարհադը իրար սիրում և գաղտնի հանգիստեմներ են ունենում: Նրանց իրարից անջատելու համար Մեհրի թագուհին ձերբակալում է Ֆարհադին և նետում զնդան:

Մենակության և տառապանքի մեջ Ֆարհադը հորինում է երգեր, ողբալով իր թշվառությունը:

Հայրենիքս է Հայաստան,
Վերավոր սիրտս է մղկտան,
Անունս է աշղ Փարհադ,
Բնիկ հայ եմ, տոհմս Արամյան: (էջ 29):

Խղճալով Փարհադին, Մեհրին նրան աղատում է բանտից: Փարհադը ապրում է մի ժայռի քարանձավում, մարդկանցից հեռու, շրջապատված գաղաններով: Դժբախտ Փարհադը հորինում է ջերմ սիրո երգեր, իսկ գաղանները լուռ ունկնդրում են: Ծերունի հայրը երկար որոնումներից հետո, գտնում է Փարհադին գաղանների հետ միասին, և արցունք թափելով, հորդորում է որդուն մոռանալ անհույս սերը և վերադառնալ ու աղբել ծնողական հարկի տակ: Փարհադը մերժում է հոր աղաչանքը և շարունակում է ապրել գաղանների հետ:

Մի անգամ որսի ժամանակ Որմիզդ շահը, հանդիպելով Փարհադին և իմանալով նրա տառապանքի պատճառը, որոշում է օգնել նրան:

Որմիզդ շահը Փարհադին տանում է իր վրանը, իսկ հետո նամակ գրելով Մեհրի թագունուն, պահանջում է Շիրինին տալ Փարհադին: Ստանալով մերժում, Որմիզդը որոշում է զենքի ուժով վերցնել Շիրինին և ամուսնացնել Փարհադի հետ:

Սկսվում է երկար և դժգոհ պատերազմ Որմիզդի և Մեհրի թագունու հերոսների միջև: Մեհրին պարտվում է, իսկ Շիրինը գերի է ընկնում Փարհադի ձեռքը:

Միահարսները հանդիպելով իրար, մոռանում են կրած տառապանքները և անհուն երջանկության մեջ, քաղցր հույսերով սպասում են այն օրին, երբ բարեբար Որմիզդը իրենց կամուսնացնի:

Բայց սիրահար զույգի գլխին կուտակվում են նոր ամպեր: Շիրինի վրա սիրահարվում է, հյուծվում, հալումաշ է լինում Որմիզդի որդին՝ թագաժառանգ Խոսրովը:

Նենգավոր վեզիրի խորհրդով Որմիզդը Փարհադին հայտնում է, թե նրան կամուսնացնի Շիրինի հետ, եթե ձեռքի ժայռը և աղբյուրի ջուրը բերի քաղաք: Նրանք հավատացած էին, որ Փարհադը չի կարող այդ գերմարդկային աշխատանքը իրագործել և տանջվելով պիտի մեռնի:

Սակայն Փարհադը չի հուսահատվում: Շիրինի սերը մղում է նրան դեպի դյուցազնական սխրագործության: Գիշեր-ցերեկ աշխատելով, գերմարդկային ուժով Փարհադը հսկայական քլունգի հարվածների տակ ջարդում է անմատչելի ժայռը:

Հոգնատանջ աշխատանքից հետո, Փարհադը մի քիչ հանգստանում էր, քնում գազանների հետ, իսկ հետո նորից շարունակում իր գործը: Փարհադը վերջապես ճեղքում է ժայռը¹⁾, և երբ մոտ էր կառուցման վերջը Որմիզդի չար խորհրդատուները խաբում են ազնիվ Փարհադին: Փարհադի և Շիրինի ողբերգական վախճանով ավարտվում է հեքիաթը:

«Փարհադ և Շիրին» վերոհիշյալ հեքիաթի նմանությունը Նիզամիի ստեղծագործության հետ միանգամայն ակնբախ է: Հեքիաթի մեջ միահյուսված են Նիզամիի «Լեյլի և Մեջնուն» ու «Սոսրով և Շիրին» պոեմների մոտիվները և մի շարք պատկերները: Այնպես որ, թուրքերեն լեզվով երգող հայ աշուղների այս դաստան ~ հեքիաթը կապված է Նիզամիի ոչ միայն «Սոսրով և Շիրին», այլև «Լեյլի և Մեջնուն» սիրավեպերի հետ:

Հեքիաթի մեջ Փարհադի ցավատանջ կյանքը, ամբողջապես հիշեցնում է Նիզամիի Մեջնունին, հանդիսանալով մեծ բանաստեղծի «Լեյլի և Մեջնուն» պոեմի մի վարիացիան:

Հոր հորգորանքը որդուն՝ մոռանալ Շիրինին և վերադառնալ ու ապրել ծնողական հարկի տակ, և այնուհետև հեքիաթի այն տեսարանները, երբ Որմիզդ շահը Շիրինին ստանալու և Փարհադին երջանկացնելու նպատակով պատերազմում է Մեհրի թագուհու հետ՝ այդ ամենը դարձյալ գալիս է Նիզամիի «Լեյլի և Մեջնուն» պոեմից: Նիզամիի սիրավեպի հերոսը՝ ասպետ Նոֆալը հեքիաթի մեջ փոխարինված է Որմիզդով:

1). Արևելյան ժողովուրդների սիրավեպերի մեջ քանդակագործ Փարհադը անձնագործ սիրո մարմնացումը լինելով, հանուն իր պաշտած Շիրինի՝ մենակ ճեղքում է Բիսթունի ժայռը: Սոսրով թագավորի և նրա խորհրդատուները դավադրությամբ խաբված Փարհադը քլունգով վերջ է տալիս իր կյանքին:

Դա արտահայտվել է ինչպես Նիզամիի մոտ, այնպես էլ Փարհադի և Շիրինի մասին հյուսված բազմաթիվ ժողովրդական ավանդությունների մեջ: Դա թափառող սյուժե է, այսպես կոչված մշտական մոտիվ:

Հեքիաթի մնացած պատկերները, տեղի և անունների որոշ փոփոխությամբ, հանդիսանում են Նիզամիի «Խոսրով և Շիրին» պոեմի փոփոխականները:

Նիզամիի մոտ Ադրբեջանի (Բարդա) տիրուհի Մեհին Բանուն հեքիաթի մեջ դարձել է Վասպուրականի (Տոսպի) թագուհի Մեհրի իշխանուհի, իսկ գործողությունների վայրը Ադրբեջանից փոխադրված է Հայաստան: Փարհազը ևս հայացվել է:

Ժողովրդական բանահյուսության և աշուղական գրականության մեջ այսպիսի փոփոխություններ հաճախակի են լինում:

Բադրատ Խալաթյանը 1890 թվին Ապարանի շրջանում լսել է «Ռուստամ-Ջալ» հայ-իրանական վեպի մի վարիանտը և «Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ» աշխատությունում ցույց է տվել, թե ինչպես հայ ժողովուրդը համակրելով Իրանի լեյուցադուհներին, դարձրել է նրանց «Մասմա ծուեր» հայ ժողովրդական վեպի հերոսներին ցեղակից: Ազգայնական թույնից ազատ ժողովրդի պատկերացմամբ Ջալը Սասունի թագավորն է, Դավիթը՝ Ջալի եղբայրը, Բուրդեն՝ Դավթի որդին, Բուրդեի հորեղբայրն է Հովհան և այլն:

Ադրբեջանական ժողովրդական հերոս Քյուռ-օղլին հայ աշխատավորության ամենասիրելի հերոսներից մեկը լինելով, չափազանց մասսայականացել է մեր ժողովրդի մեջ: Հայկական ֆոլկլորում Քյուռ-օղլու քաջագործությունները և արարքները պատմվում են բազմաթիվ պատումներով և հայ ժողովուրդը Քյուռ-օղլուն չի տարբերում իր սեփական հերոսներից: Այդ առթիվ Ղազարոս Աղայանը գրում է. «Քյուռ-օղլու հոչակը մեր երկրում, ամեն տեղ և ամեն ազգի մեջ տարածված է: Թուրքերը նրան թուրք են համարում, քյուրդերը՝ քյուրդ, հայերը՝ թուրքացած հայ»:

Այս փաստերը նշելով, ուզում ենք ասել, որ հարևան ժողովուրդների վիպական լավագույն հերոսները այնքան սիրելի և հարազատ են հայ ժողովուրդին, որ նրանք դարձել են նաև մեր ժողովրդի ձգտումների արտահայտիչները և մեր ժողովուրդը նրանց չի տարբերել իր սեփական հերոսներից:

Այդպէս են և Նիզամիի կերպարները: Մասնայականանալով արևելյան ժողովուրդների ֆոլկլորի և գրականության մեջ, Նիզամիի օբրազները՝ Լեյլին, Մեջնունը, Փարհադը և Շիրինը դարձել են բազմաթիվ ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի սեփականութիւնը, ամենահամակերելի և հարազատ հերոսները: Դա մի պերճախոս վկայութիւն է, որը ցույց է տալիս Նիզամիի ստեղծագործութան հսկայական ազդեցութիւնը հարևան ժողովուրդների ֆոլկլորի վրա:

19-րդ դարի կեսերից սկսած պարսկերենից և թուրքերենից հայերեն թարգմանվել, կամ փոխադրվել են, կամ թե նմանողութեամբ հորինվել են ազրբեջանական ծագում ունեցող արևելյան հռչակավոր ժողովրդական հեքիաթները՝ «Աշուղ-Ղաւրի», «Ասլի և Քյարամ», «Շահ-Խամայիլ», «Փարհադ և Շիրին», «Լեյլի և Մեջնուն», «Քյուս-օղլի» և այլն: Այս ստեղծագործութիւնները կազմում էին հայ աշուղների ղեկերտուարի առյուծի բաժինը և ժողովրդի ընթերցանության սիրված գրքերն էին:

Ժողովրդական հրգիչները (աշուղ-Ջիվանին և ուրիշները) մի առանձին սիրով փոխադրում և տարածում էին մեր իրականութեան մեջ հարևան ժողովուրդների բանահյուսութեան գեղեցիկ նմուշները, մանավանդ՝ «Փարհադ և Շիրին» ու «Լեյլի և Մեջնուն» սիրավեպերը¹):

Այսպիսի պայմաններում, եթե Բաֆֆիի, Փափազյանի, Իսահակյանի և Տերյանի հայացքները Փարհադի, Շիրինի, Լեյլիի և Մեջնունի մասին համընկնում են Նիզամիի պատկերացմանը, դեռ իրավունք չի տալիս ասելու, թե մեր գրողները ազդվել են, կամ այդ կերպարները վերցրել են Նիզամիից: Հավանական են թաղրութիւններ կարող են լինել բայց հաստատ պնդել առայժմ դժվար է, որովհետև ոչ պակաս հնարավոր և հավանական է, որ մեր գրողները այդ կերպարները կարող էին վերցնել ֆոլկլորի նյութերից, Նիզամիից միանգամայն անկախ: Լուծել այդ խնդիրը առայժմ դժվարանում ենք: Տվյալ դեպքում բավականանանք միայն նրանով, թե նոր ժամանակների հայ գրողներից ովքեր և ինչպէս են պատկերել Նիզամիի երգած կերպարները:

¹). Մեր նպատակից դուրս է դրադվել Նիզամիի պոեմների և այդ ստեղծագործութիւնների փոխադրեցութեան հարցերով:

Փարհադի կերպարը գրավել է 19-րդ դարի խոշորագույն վիպասան Բաֆֆիի ուշադրությունը: Բաֆֆին հրաշալի գիտեր Արևելքը: Ծնված լինելով Պարսկաստանի Սալմաստ գավառում, որոշ ժամանակ աշխատելով Ադրբեջանում՝ Թավրիզի, Նախիջևանի շրջաններում, շրջելով և ուսումնասիրելով Ադրբեջանի մի շարք շրջանները, վիպասանը իր ստեղծագործությունների մեջ մեծ վարպետությամբ կարողացել է պատկերել Արևելքի ժողովուրդների կյանքը:

«Սամվել» հրաշալի պատմավեպի մեջ կա մի գեղեցիկ գլուխ, որ կոչվում է «Անուշ բերդ»: Այդ գլխի առաջին հատվածում Բաֆֆին եկբատանից դեպի Տիզբոն տանող ճանապարհին գտնվող սեպածև քարաժայռի վրա կառուցված խրոխտ բերդի գրավիչ պատմությունն է անում:

Մի օր այդ ամայի լեռան մոտով անցնում էր Արևելքի մեծ քանդակագործ Փարհադը, և ճանապարհին նա պատահեց մի գեղեցիկուհու: Փարհադը կորցրեց իր հանգիստը և ամեն օր լեռան մոտ, ճանապարհի եզրին կանգնած երազում էր աննման գեղեցիկուհուն:

Փարհադը սիրածին հասնելու համար իրագործում է նրա ցանկությունը: Հսկայական մուրճով ջարդում է լերի ապառաժը, կառուցում է հրաշակերտ ապարանքներ, մթերանոցներ և օթեաններ: Փարհադը ապարանքի պատերը նկարազարդում է բազմաթիվ հրաշալիքներով: Աղջիկն այդ ամենը տեսնում և հիանում է: Սակայն նա չի բավականանում դրանով և պահանջում է Փարհադից, որ պատրաստի շատրվաններ, հեռու լեռներից ջուր բերի և ապառաժը զարդարի բուրավետ պարտեզներով, միայն այդ դեպքում նա կլինի Փարհադինը: Փարհադն այդ էլ է իրագործում. պատռում է ժայռերի կուրծքը և բերում է ջուր, պատրաստում է կախարդական պարտեզներ և արևակեղ անապատը դարձնում մի բուրաստան: Նա իր հզոր մուրճով, սերը սրտում, իրագործեց այդ ամենը, որ «արդյունք էին ջերմ սիրո և գեղեցիկ արվեստի»:

Փարհադը վերջացնելու վրա էր իր գործը և կարոտով սպասում էր սիրածին, սակայն նրան հայտնում են, որ իր սիրած

աղջիկը՝ Անուշը ամուսնացել է Թադավորի հետ¹⁾։ Հոգեկան ծանր հարվածից խորոակվում է Ֆարհադը, կյանքը այնուհետև նրա համար դառնում է անիմաստ՝ նետում է մուրճը օդի մեջ և ընկնելով գետնին մեռնում է մեծ քանդակագործ և սիրահար Ֆարհադը։

Եվ այդպես, Ֆարհադի օտելծագործած «Այդ վիմալոր, կոփածո ապարանքը, որ պատրաստված էր սիրո և հավիտենական երջանկության տաճար լինելու համար, հետո դարձավ արտասուկների և մշտական հեծության մի դժոխք» (Բաֆֆի «Սամվել», 1940 թ., էջ 190)։

Ֆարհադի կառուցած ապարանքը սիրած աղջկա անունով կոչվեց Անուշ։ Անունը Անուշ, ինքը լի դառնություններով... (նույն տեղ, էջ 187), «Ֆարհադը չհասավ իր նպատակին, բայց նրա սիրելի Անուշի անունը մնաց այդ քարեղեն ամրոցի վրա և կոչվեցավ Անուշի բերդ»), (նույն տեղ, էջ 190)։

1). Շիրին հայերեն նշանակում է անուշ։ Բաֆֆիի մոտ Անուշը արևելյան ժողովուրդների ֆոկլորում հռչակվող գեղեցկուհի Շիրինն է, Ֆարհադի սիրած աղջիկը, որ հետո ամուսնացել է Սասանյան Թադավոր Խոսրով Բ Աղլուեղի (Փարվիզ, Պարվիզ) հետ։ Գրականության մեջ Շիրինին անմահացրել է Նիզամին, (տես՝ «Սէբեոսի եպիսկոպոսի պատմութիւն» — ի ձեռն Ստ. Մալխասյանց, Երևան, 1930 թ., էջ 47 և 181 ու Նիզամի «Խոսրով և Շիրին» պոեմը)։

Մ. Հասրաթյանը Շիրինին համարում է Խոսրով Անուշիրվանի կինը (տես՝ «Սայաթ-Նովա», ժողովածու, Երևան, 1915 թ., հատուկ անունների բառարան, էջ 211)։

Մեզ անհայտ է մի այնպիսի աղբյուր, որտեղից երևա, թե Շիրինը Խոսրով Անուշիրվանի կինն է։ Հավանաբար Մ. Հասրաթյանը սխալվելով Շիրինի ամուսնուն Խոսրով Բ Պարվիզին շփոթել է Խոսրով Ա. Անուշիրվանի (Անուշըովան) հետ։

2). Անուշ բերդի մասին մի քանի անգամ հիշատակում է իր «Պատմություն հայոց» աշխատության մեջ 4-րդ դարի դեպքերը պատմող Ծ-րդ դարի հայ մատենագիր Փավստոս Բյուզանդը, որից և օգտվել է Բաֆֆին «Սամվել» պատմավեպը գրելիս։ Պարսից թագավոր Շապուհը Արշակ 2-ին արքայորում է «ի յԱնդամըշն՝ զոր Անուշ բերդն կոչեն» (Փավստոս Բյուզանդ «Պատմություն հայոց» Թիֆլիս, 1912 թ., էջ 255), «յԼսեմըշն՝ որ Անյուշն կոչեն» (նույն տեղ, էջ 257)։

Բաֆֆին Ֆարհադին ցույց է տալիս որպես ժողովրդական հերոս, մի քանդակագործ, որը հանուն իր սիրո մարդկային ուժերից վեր գործեր է կատարում: Ֆարհադն անձնագործության, անկեղծ սիրո, մարդկային ստեղծագործ աշխատանքի և հերոսության մարմնացումն է:

Եվ ինչպես Նիզամիի, այնպես էլ Բաֆֆիի մոտ ազնիվ Ֆարհադը զոհ է դառնում իշխող լավերի նենգություններին:

Երկրորդ հայ հեղինակը, որին զրավել է Ֆարհադի և Շիրինի լեգենդան, Վրթանես Փափագյանն է:

Վր. Փափագյանի «Ֆարհադ և Շիրին» արձակ պոեմը գրվել է 1904 թվին:

Բաֆֆու նման Փափագյանը հրաշալի գիտեր Արևելքը և արևելեյան ժողովուրդների բանահյուսությունը:

Պարսկաստանի կյանքից գրել է «Ասի», «Ալեմգիր», «Աղերֆեզա» վեպերը, մշակել է քրդական ֆոլկլորը («Լուր-դա-լուր»):

Փափագյանի ծննդավայրը՝ Վան քաղաքը (պատմական Վասպուրականը, Տոսաթի երկիրը) ժողովրդական ավանդությունների, լեգենդաների հայրենիք է: Պատմական Հայաստանի այդ մասում է հորինվել մեր անամահական վեպը՝ «Սասունցի Դավիթը», այդ երկրամասի հետ է կապված հայկական զրույցները Ֆարհադի և Շիրինի մասին:

Բերդը այդպես կոչվեց Անուշի անունով, թե անհիշատակ ժամանակներից կառուցված լինելու համար, դժվարանում ենք ասելու Դրա մասին Փավստոսը ոչինչ չի ասում, գործ է ածում և՛ Անուշ, և՛ Անյուշ, ոչ մի ակնարկ չկա նաև Ֆարհադի և Շիրինի լեգենդայի մասին: Սակայն մի շարք հանդամանքներ բերում են այն կարծիքին, որ Փավստոսի հիշատակած բերդը կապ ունի Ֆարհադի ու Շիրինի լեգենդայի հետ, Շիրինի սիրո համար Ֆարհադի կողմից Բիսունթունի ժայռը քանդելու զրույցի հետ, և որ հետևապես Բաֆֆիի պատմությունը Ֆարհադի և Անուշի (Շիրինի) մասին ազատ երևակայության արդյունք չի, այլ գալիս է Փավստոսից:

Այդ ենթադրությունը հավանական է դառնում ինկատի ունենալով հետևյալ փաստերը. —

ա) Անուշ բերդը գտնվում է Պարսկաստանի Խուսթիստան նահանգում, այն կողմանս Խուսթաստանի յԱնդամըն բերդին. այ-

Փափաղյանի բազմաթիվ ստեղծագործությունների պես «Փարհադ և Շիրին» լեգենդան ևս գերազանցորեն ֆոլկլորային ծագում ունի: Հեղինակը հենց ինքը ակնարկում է, որ Փարհադի ու Շիրինի պատմությունը հին գրույց է «հանած հնության անհատակ ծովից՝ որպես մարգարիտ» (Փափաղյան «ընտիր երկեր» 1-ին գիրք, Երևան, 1939 թ., էջ 36):

Շիրինի պատկերով Փարհադը ճեղքում է լեռը՝ Զուի-Շիրի անմահական ջուրը մարդկանց նվիրելու համար: Զուի-Շիրը է՝ «առասպելական մի գետ հուրի-փերիներին կյանք տվող, անմահացնող, զվարթություն ու կենսունակություն ներշնչող նեկտարի գետ՝ ըստ պարսկական առասպելների», գրում է ծանոթություն մեջ Վ. Փափաղյանը: (Նույն տեղ, էջ 38):

Վ. Փափաղյանի «Փարհադ և Շիրին» լեգենդայի նյութը, արևելյան ժողովուրդների՝ պարսիկների, ադրբեջանցիների, հայերի մեջ բազմաթիվ վարիանտներով պատմվող գրույցն է Փարհադի և Շիրինի դժբախտ սիրո մասին:

Փափաղյանի «Փարհադ և Շիրին» լեգենդան հուղականությամբ հագեցված մի գեղեցիկ լիրիկական ստեղծագործություն է, վորի մեջ մեծ ջերմությամբ պատկերված է Փարհադի և Շիրինի սերը: Սերը Փարհադին նոր ուժ է տալիս: Նա աշխատանքի, անձնագոհություն և սիրո ասպետ է: Ճեղքելով լեռի ժայռը,

սինքն, որ անուն Անյուշն բերդն կոչեն» (Փավստոս, էջ 307): Շիրինը խուժիստան երկրից է. «...Սորա (Սուրով Պարվիզ—Գ. Ա.) կին քրիստոնեայ յոյժ գեղեցիկ ի խուժաստան աշխարհէ, անունն Շիրին» (Մեքենոս, գլուխ ԺԱ, էջ 47):

Ըստ Մեքենոսի Շիրինը ապրել է 7-րդ դարի սկզբին, բայց եթե ընդունելու լինենք, որ Արևելքի գեղեցկուհին լեգենդար հերոսուհի լինելով, կարող էր ավելի հնում եղած լինել՝ Մեքենոսից և Փավստոսից ավելի առաջ, և հետո միայն Մեքենոսը դարձրել է նրան 7-րդ դարի պատմական անձնավորություն, ինչպես հաճախ այդպիսի անախրոնիզմների պատահում ենք մեր հին մատենագիրների մոտ (օրինակ՝ Սորենացին), ապա այդ դեպքում հավանական է դառնում, որ Անուշ բերդը իր անունը ստացել է, ինչպես Բաֆֆին է ասում, Փարհադի սիրած աղջկա Անուշի (=Շիրինի) անունից, մանավանդ, որ Շիրինը խուժիստանից է, որտեղ որ գտնվում է վերոհիշյալ բերդը: Մեր դրա-

գտնում է անմահական ջուրը և այդ ամենն իրագործում է սիրո շնորհիվ. «Սերն է—հասցնող մարդուս բարձր աստղերի. սերը—թե տվող, ժայռերը փշրող, սերը—վանդ բուսցնող, բարիք սերմանող...» (նույն տեղ, էջ 41):

Փափաղյանի մոտ Ֆարհադն ունենում է նույն ողբերգական վախճանը, ինչ որ Նիզամիի և Բաֆֆիի մոտ: Շիրինը միշտ սպասելով և կարոտելով իր սիրածին մեռնում է, իսկ Ֆարհադը չտանելով այդ հարվածը, մեռնում է տապալի ծանր հարվածից: Լեզենդան ավարտվում է մի սիմվոլիկ պատկերով. Ֆարհադի արյունով ներկված հողի վրա բուսնում է մի ծառ, արյունոտ ծաղկով, արյունոտ պտուղով... Դա նշանին է, որի պտղի մեջ «Ֆարհադ-Շիրին սրտերն են խամրած...» (նույն տեղ, էջ 42):

Չափազանցությունն չի լինի, եթե ասենք, որ հայ ժողովրդի մեջ Ֆարհադի և Շիրինի սիրավեպից ավելի մեծ մասսայականացում ստացել է «Լեյլի և Մեջլում» սիրավեպը: Թարգմանությունների, փոխադրությունների միջոցով, ինչպես նաև հայ աշուղների երգերի շնորհիվ Լեյլիի և Մեջլումի զրույցը չափազանց լայն տարածում է ստացել մեր ժողովրդի մեջ: Արևելյան մյուս ժողովուրդների նման, հայ ժողովուրդի մեջ ևս տարբեր վարիանտներով պատմվում է այդ զրույցը և ֆոկլոր-

կանադիտության մեջ արդեն արտահայտվել է այն տեսակետը, թե բերդը սկզբում կոչվում էր Անուշ և հետո միայն կոչվեց Անհուշ:

բ) Փավստոսը հայանում է, որ պարսից թագավորների օրենքով, ոչ ոք իրավունք չունի հիշելու այն մարդուն, որ աքսորվել է «Անուշը» և տալու այդ բերդի անունը: Անուշ բերդում ձերբակալված Արշակ 2-ին տեսնելու Դրաստամատի խնդրքին Շապուհը պատասխանում է

«Միտ էն խնդրուածքդ, զոր խնդրեցերդ, դի յաւուրց ժամանակաց՝ յորմէ թագաւորթիւնս պարսից կանկնեալ է, և բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, չիք ոք մարդ եղալ ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց զոր յայնմ բերդի, եղեալ զոք է թագաւորաց, յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք եղեալ է, թող թէ զնա զայր թագաւոր և զիմ ընկեր կապեալ եղեալ յայնմ բերդի զհակառակորդն, քան մինչ աշխատ

րի միջոցով մուտք է գործել նաև գրավոր հրահանության մեջ։ Անվանի վիպասան Պերճ Պոռոյանի «Սոս և վարդիթեր» վեպը, ինչպես վաղուց նկատված է, սերտ առնչվում է արևելյան ժողովուրդների սիրավեպերի, մանավանդ «Լեյլի և Մեջնունի» հետ։

«Լեյլի և Մեջնուն» սիրավեպին շատ նման է Սոսի և Վարդիթերի սիրո դժբախտ պատմությունը, նրանց անջատումը, Սոսի խենթանալը, մարդկանցից փախչելը, ձմեռը ոտաբորիկ պատռոտված շորերով հանդերը և չուրը ընկնելը, Վարդիթերի մահը և Սոսի մահը սիրած աղջկա գերեզմանի վրա, մի խոսքով սյուժեն համարյա նույնն է։

Պատահական չէ, վոր Պերճ Պոռոյանը իր վեպի մեջ հիշատակում է Լեյլին և Մեջնունին։

Սոսը աեսնում է այսպիսի մի երազ.

«Մին էլ էն տեսնիս, էկան Լեյլին ու Մաջլունը՝ կուռ-կուռ բռնած, ուրախ-ուրախ ծիծաղելով, նստեցին սուփրի վրա, հաց կերան, ուրախություն արին, Լեյլին գինին ածում էր տալի Մաջլունին, նա էլ՝ Լեյլուն, հետո մի թաս գինի լցրեց Լեյլին ու տվեց Մաջլունին՝ ասելով.

— Սիրելիդ իմ, մենք ըսենց ուրախությունի միջի ենք, ըսկի էլ չենք ասում, թե էս օր մի մարդ կա, որ քանի իմ ու

արարեր զմեզ, և դու աւագիկ զանձն՝ ի մահ եղիր և յիշեցուցեր զԱնյուշն, որ ոչ էին լեալ երբէք օրէնք թագաւորութեանս Արեացի սկզբանէ» (Փալատոս, էջ 310)։

Այդ սարսափելի աքսորավայրը, որի անվան հիշատակումը անգամ առաջացնում է սարսուռ, կապ չունի արդյոք Փարհադի ողբերգության, նրա եղեռնական մահու հետ։ Փարհադի աճյունի վրա բարձրացած բերդի հեռավոր սիմվոլիկ արձագանքը չի արդյոք Փալատոսի հիշատակությունը։ Ահա հարցեր որոնք կարոտ են պարզաբանման.

դ) Փալատոսի «Պատմությունը» մի գեղեցիկ գրույց է, ժողովրդական ավանդությունների, լեգենդաների հավաքածու։ Սոս. Մալխասյանը ասում է, թե Փալատոսի մոտ պատմականը և առասպելականը անբաժանելի են այնպես, ինչպես մի բուժակ թեյի մեջ ջուրը և շաքարը (տես՝ Մ. Խորենացի «Պատմություն հայոց», առաջաբանը)։

քու քեֆը տեսնում ա, սրտի յարեքը նորանում են ու մեր առաջին դուլ դառած կաննել ա. ուզում ա, որ իմանա իր գլխի գալացուկը...

— Սիրելի Լեյլի, ասեց տրտմելով Մաշուհը, գինու թասը ձեռին բռնած. էրենկ մարդի սիրտ իմանայիր, նոր ասելիք, օրհնվիս դու, բանի տակը չիմացած խոսում ես. լեզվի կըխմեմ ու ես էս գինին էլ չեմ խմիլ, ասեց ու թասը տվուց գետնովը, ձեռը քցեց Լեյլու ճրտովը ու աներևույթ կլավ՝ (Պերճ Պոռչյանց «Սոս և Վարդիթեր», երկրորդ տպագրություն, Երևան, 1887 թ., էջ 110—111):

Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմի կապը արևելյան ժողովրդական սիրավեպերի հետ նույնպես նշվում է հայ գրականագիտության մեջ:

Նահապետական աղաթի հետևանքով Անուշի և Սարոյի սիրո դժբախտ վախճանը, սիրած աղջկանից զրկված Սարոյի թափառական կյանքը լեռներում, խաղեր ասելը, Անուշի կործանումը հիշ ցնում են «Լեյլի և Մեջնուն» սիրավեպի համապատասխան պատկերները, իսկ հերոսուհու անունը ընտրելով Անուշ (Շիրին) հայ մեծ բանաստեղծը թերևս դրանով ցանկացել է հիշեցնել կամ ստեղծել աստղիացիա, որ իր Անուշն անբիծ և մաքուր է, ինչպես Շիրինը:

Հովհաննես Թումանյանը Պոռչյանից առավել կազմված է եղել ժողովրդական բանահյուսության հետ: Մեծ բանաստեղծը

Հավանական է դառնում, որ Փավստոսի հիշատակած Անուշ բերդի պատմությունը ունի ֆոլկլորային ծագում և այդ ժամանակներում երեի գոյություն է ունեցել Ֆարհադի ու Շիրինի լեգենդան: Բաֆֆիի նկարագրությունը, այսպիսով, ըստ երևույթի, Ֆարհադի ու Շիրինի (= Անուշի) զրույցի հեռավոր արձագանքն է, որ գալիս է դեռ Փավստոսից:

Մեր ենթադրությունը եթե ապագայում հաստատվի, ապա կպարզվի մի շատ հետաքրքիր նորություն, այն, որ արևելյան ժողովրդական ամենահմայիչ լեգենդաներից մեկի՝ «Ֆարհադի ու Շիրինի» պատմության ամենահնագույն գրավոր աղբյուրը Փավստոսի «Պատմություն հայոց» աշխատությունն է:

խոստովանել է, որ իր համարյա բոլոր ստեղծագործություններին, որոնց թվում և «Անուշի» նյութը վերցրել է ֆոլկլորից («Հայոց դրամբյանիդ և ես» հոդվածը, տես՝ «Թումանյանը—քննադատ» ժողովածուն):

Միանգամայն հավանական է նաև Թումանյանի ծանոթությունը Նիզամիի սիրավեպերին: Թումանյանը գիտեր Նիզամուն և արևելքի մեծ բանաստեղծների շարքումն էր դասում, ինչպես ինքն է ասում «հսկա» Նիզամուն («Թումանյանը—քննադատ», 1930 թ. էջ 311):

Հայ իրականության մեջ Լեյլի և Մեջնունի կերպարների մասսայականացման ասպարեզում իրենց լուծման ունեն Ավետիք Իսահակյանը և Վահան Տերյանը:

Իսահակյանին և Տերյանին սիրելի են եղել վերոհիշյալ կերպարները, որովհետև դա բխում է ստեղծագործական հարադատությունից: Անհույս, չբավարարված սիրո հայ երգիչ-բանաստեղծները չէին կարող անտարբեր լինել Լեյլի և Մեջնունի առաջադիմաբաներով լի սիրո հանդեպ:

1910 թվին ժողովրդական կենդանի ոճով գրված Ավետիք Իսահակյանի «Լեյլի և Մեջնում» լեզենդան էպիկական-լիրիկական և դիալոգներով կազմված դրամատիկ ստեղծագործություն է (Ավ. Իսահակյան «Ընտիր երկեր», 2-րդ հատոր, Երևան, 1940 թ., էջ 44—46):

Մեջնումը և Լեյլին երազի մեջ տեսնում և սիրում են իրար: Մտանալով նանեմոր օրհնանքը Մեջնումը ճանապարհվում է երազ Լեյլիին գտնելու: Բինգյոլի սարում իջել էր Լեյլանց քոչը: Մեջնումը և Լեյլին իրար հանդիպելով, հիացմունքից քարացած կանգնում են:

Մեջնում նայեց Լեյլիին

Ու կանգնավ մնաց.

Լեյլին նայեց Մեջնումին

Ու կանգնավ մնաց.

Լեյլիի աչքերը գիշերվա երկինք են՝

Արևներով վառ.

Լեյլի մազերը աբրուշումն առունքը են՝
Ծուխ-ծուխ կթափվին
Մարմարե կրճքին...
Յոթն օր, յոթ գիշեր
Ոտքի վրա կանգնած էնոնք,
Ելի կիմանային, թե նոր են եկած:

Լեյլին հոր քոչի հետ միասին գնում և ընդմիջոտ անջա
վում է սիրած Մեջլումից: Թուշունը հայտնում է Լեյլին, թե
Մեջլումը երկար սպասելուց հետո մեռել է Բինգյուլի աղբյուրի
մոտ: Փետելով իր մազերը, խելակորույս Լեյլին գալիս է Բին-
գյուլ, երկար լացում և մեռնում է Մեջլումի գերեզմանի վրա:
«Անմուրազ Մեջլում ու երազ Լեյլին» ասող դառնալով, սավառ-
նում են երկինք: Տարին մի անգամ Լեյլի ու Մեջլումի աստ-
ղերը փառվում են իրար կարոտ սրտով և հետո նորից հեռա-
նում:

Նիզամիի այդ կերպարները երգել է նաև Վահան Տերյանը:
Մի հուզիչ լիրիկական բանաստեղծության մեջ Վահան Տերյանը
երգելով դժբախտ սերը, համեմատում է իրեն Մեջլումի, իսկ
աղջկանը՝ Լեյլայի հետ:

Բերում ենք այդ բանաստեղծությունն ամբողջությամբ:

Դու Լեյլան ես, դու երանգ—դու Լեյլան ես լուսավոր,
Ես Մեջլումն եմ, ես մեռած, քնած մահու քնով խոր...
Դու վաղուց ես հեռացել—մոռացել ես, միտդ բեր.
Շատ են եկել ու անցել ձմեռներ ու զարուհներ...
Որպես Մեջլումն ու Լեյլան չէ ձր մենք էլ, դու և ես,
Հանդիպել ենք մի անգամ և առհավետ նրանց պես:
Եվ սրտերով հրահրուն երազել մեկ-մեկու,
Եվ ծաղիկ են նույն հեռվում ցնորքները մեր հոգու...
Եվ առավոտն անստվեր և երեկոն սևազիր
Պսակել են սերը մեր երկինք, երկինք ու երկիր...
Դու զնայիր չ՛դարձար, քո կարոտով մեռա ես,
Բայց մեռած էլ անդադար կանչում եմ միշտ, կանչում քեզ:
Ես Մեջլումն եմ, ես մեռած, քնած մահու քնով խոր,
Լեյլա, դարձիր, իմ սիրած, դարձիր, լուսավոր...

Սիրո կանչով կանչէր ինձ և կարթնանամ ես,
Լեյլան, դարձիր, դարձիր ինձ—կանչում եմ միշտ քեզ...
(Վահան Տերյան «Բանաստեղծություններ»՝ «Անտիպ էջեր»-ից,
Երևան, 1940 թ., էջ 390):

Այն, ինչ ասել է Արշարունին Սայաթ-Նովայի մասին, առա-
վել վերաբերում է Վահան Տերյանին:

Վահան Տերյանը մեր այն գրողներէիցն է, որն իր ողջ ստեղ-
ծագործութեամբ ավելի շատ կապւած է եղել գրավոր գրականու-
թյան, քան ֆոլկլորի հետ: Ժողովրդական բանահյուսութեան
պատկերները, ոճը, հարադատ և բնորոշ չեն հասուն տարիներին
Տերյանի գրած բանաստեղծություններին: Բավական է թեկուզ
հիշել Տերյանի և Թումանյանի վեճը լեզվի մասին, համոզվելու
համար, որ Տերյանը չի ձգտել ժողովրդական ոճի և պատկեր-
ների օգտագործման:

Վերոհիշյալ բանաստեղծությունը Տերյանի գրական ժառան-
գության մեջ եղակի է նրանով, որ այստեղ տեղ են գտել ֆոլ-
կլորի կերպարները՝ Մեջլումը և Լեյլան, որոնք սակայն Տերյա-
նը վերցրել է ոչ թե բանահյուսությունից, այլ գրավոր գրակա-
նությունից:

Այդ համոզմանը մեզ բերում է Տերյանի ստեղծագործու-
թյան վերոհիշյալ առանձնահատկությունը:

Ուրիշ խնդիր է Ավ. Իսահակյանի լեզենդան: Իսահակյանը
հազարավոր թելերով կապւած է ժողովրդական բանահյուսու-
թյան հետ, օգտագործում և մշակում է բազմաթիվ ֆոլկլորային
թեմաներ, մոտիվներ և կերպարներ:

Իսահակյանի և Տերյանի ստեղծագործութեան առանձնահատ-
կությունները նկատի ունենալով, կարծում ենք, որ Լեյլի և
Մեջլումի կերպարները Իսահակյանն ավելի շուտ վերցրել է
ֆոլկլորից, իսկ Վահան Տերյանը Նիզամիից:

Ուեակցիայի տարիներին, ցարիզմի կապանքների մեջ խեղդ-
վող, դեմոկրատական շերտերի դժգոհության, վշտի և թախծի
երգիչը երազել է լուսավոր ապագա, երջանիկ կյանք: Խավարի,

վշտի աշխարհում վահան Տերյանի համար Նիզամիի «Լուսավոր
Լեյլան» սիրո և կյանքի սիմվոլն էր, Մեջլում դարձած բանաս-
տեղծին կյանք և շունչ սփռվեց:

Նիզամիի հարուստ գրական ժառանգությունը նկատելի հետք
է թողել հայ գրականության մեջ: 13-րդ դարից սկսած մեր
գրողներից շատերը՝ Խաչատուր Կեչառեցին, Աղթամարցին,
Կոստանդին Նրզնկացին, Սայաթ-Նովան, Պոռոյանը, Բաֆֆին,
Թումանյանը, Փափագյանը, Իսահակյանը, Տերյանը և ուրիշները
շատ թե քիչ կապված են եղել Նիզամիի ստեղծագործության
հետ, օգտվել են նրա թեմաներից և կերպարներից, կամ ծանոթ
են եղել ազդեցիկ նախնական ժողովրդի մեծ գրողի անմահ պոեմներին
հետ:

Բայց չնայած դրան, հայ ժողովուրդը նախասովետական շրջ-
անում հնարավորություն չի ունեցել մայրենի՝ հայոց լեզվով
կարդալու Նիզամիի երկերը:

Նիզամիի ստեղծագործությունները հայերեն սկսեցին թարգ-
մանել միմիայն սովետական կարգերի հաստատումից հետո:

Նիզամիի ստեղծագործությունների հայերեն թարգմանու-
թյան և մասսայականացման գործում խոշոր և շնորհակալ
գործ են կատարել և շարունակում են կատարել սովետահայ
գրողները:

Հայաստանի անվանի գրողները արդեն թարգմանել և այս
տարի պիտի հրատարակվի «Լեյլի և Մեջնուն» պոեմը:

Ազդեցիկ սովետահայ գրողներ Թաթուլ Հուրյանը, Աշոտ
Գրաշին և Սամվել Գրիգորյանը ամբողջովին թարգմանել են
«Յոթ գեղեցկուհի» պոեմը, որի բաղամթիվ հատվածները, ինչ-
պես օրինակ՝ «Սլավա աղջկա՝ Բահրամին պատմած զրույցը»,
«Բահրամը հաղթում է չինական խաղանի զորքին» և մյուս
կտորները հրատարակվել են «Սովետական գրող» (Բաքու) ամ-
սագրի 1939—1941 թ.թ. համարներում:

1940 թ. Գարեգին Սևունցը արձակ փոխադրեց և Բաքվում
առանձին գրքով հրատարակեց «Խոսրով և Շիրին» պոեմը, իսկ
Աշոտ Գրաշին նույն թվին մի փոքրիկ ժողովածուով հրատա-
րակեց Նիզամիի շուրջ երկու տասնյակ դադելները:

Սամվել Գրիգորյանը թարգմանել է հատվածներ «Լեյլի և Մեջ-
նուն» պոեմից, Սահյանը «Խսկենդար-Նամե»-ից, Արսու Հովեն-
ցը թարգմանել է «Խրատ իմ որդի Մահամմեդ Նիզամուն», իսկ
Թաթուլ Հուրյանը թարգմանել է «Դիմումն գալիք սերնդին»,
Բուրն էլ լույս են տեսել «Սովետական գրող» ամսագրի 1939—
1941 թ.թ. համարներում: «Յոթ գեղեցիկներ» պոեմից հատված-
ներ արձակ թարգմանել և հրատարակել է Մարգար Դավ-
թյանը:

Հայերեն հրատարակվել են «Խսկենդարի համբերությունը»,
«Խսկենդարի արդարադատությունը» և աղբյուրներում ալ ժո-
ղովրդական հեքիաթներ Նիզամիի «Խսկենդար-Նամե» պոեմի
հերոսների և թեմաների շուրջը հոբինված:

«Սովետական գրող» ամսագրի 1940 թ. №—7-ը ամբողջապես
նվիրված է Նիզամիին: Այդ նույն ամսագրում լույս են տե-
սել Ն. Բերտելսի, Արասլիի և մի շարք այլ գրականագետների
հոդվածները Նիզամիի և նրա ստեղծագործությունների մասին:

Ամփոփելով, պիտի շեշտել, որ «Սովետական գրող» ամսագիրը
(լույս էր տեսնում Բաքվում, մինչև Հայրենական Պատերազմը)
խոշոր և պատվավոր գործ է կատարել Նիզամիի և նրա ստեղ-
ծագործությունների մաստայականացման առաքարեղում: Նիզա-
միի մասին հոդվածներ են լույս տեսել նաև Երևանում հրա-
տարակվող «Գրական թերթ» և «Սովետական գրականություն»
պարբերականներում:

Հայերեն ընթերցող հասարակությունը սովետահայ գրողների
շանքերի շնորհիվ այժմ կարող է բավականին պատկերացում
ունենալ աղբյուրներում մեծ գրողի և նրա ստեղծագործության
մասին:

Սովետահայ գրողներից Գեղամ Սարյանը գրել է. «Շահն ու
Մեջնունը» բալլադան: Գեղամ Սարյանը Հարավային Աղբյուր-
ներից է, լավ գիտե աղբյուրներում և տարակազմական ժողովրդական
լեգենդաները և ավանդությունները: Նա գրել է «Կըզ-Կալասի»,
«Դյուլնարա», «Խրանի» և այլ լեգենդաներ ու բալլադաներ Արե-
վելքի մասին, որոնք գերազանցորեն ունեն ֆոլկլորային ծա-
ղում: Գեղամ Սարյանի «Շահն ու Մեջնունը» (1930 թ.) նույն-

պէս գալիս է ժողովրդական ավանդությունից, բայց մյուս կողմից իհարկէ Գեղամ Սարգսնին ծանոթ է եղել և Նիզամիի «Լեյլի և Մեջնուն» անմահ պոեմը:

Աղբրեջանի սովետահայ պոզներէից՝ Սըշավ Դարբնին, Աշոտ Գրաշին և Վարսենիկ Սղասյանը գրել են ստեղծագործություններ Նիզամիի մասին:

Սըշավ Դարբնու «Թմաստուն այգիպանը» սիրուն լեզունգայի մեջ սլասկերված է Նիզամիի թովչանքը և հայրենասիրությունը, թե ինչպէս մեծ քնարերգուն «Սպրել ու մեծացել է վարդերի ու սոխակներէ երկրում և լավ գիտեր նրանց լեզուն»:

Վարսենիկ Սղասյանը գրել է մի շարք տաղեր ծաղիկների և սոխակների անմահ երգիչ Նիզամիի մասին:

Աշոտ Գրաշին Նիզամիի անմահությունը և մեծ հայրենասիրի անքակտելի կապը իր ժողովրդի հետ արտահայտել է «Նիզամու տապանազիրը» հուզիչ բանաստեղծության մեջ:


Վերոհիշյալ բանաստեղծությամբ ավարտենք մեր տակիքը աղբրեջանական ժողովրդի մեծ բանաստեղծ Նիզամիի մասին.


Մի դար հետո, թե մի օր դու գաս այցի իմ շիրմին,
Թե հարցնես՝ այս ով է հանդչում մարմար քարի տակ,—
Հանկարծ ամեն մի բեյթից դու կլսես ձայնը իմ.


— Ես եմ հանդչում, բարեկամ, այս արդեն մառ քարի տակ:

Թե հարգում ես Նիզամու հիշատակը աշխարհում,
Թե ծանոթ է քեզ երգի պոհար ակը աշխարհում,—
Սրտասանիր մի գազել, լսեմ նվազը աշխարհում,
Սիրտս նորից թող հուզվի այս գորշատառ քարի տակ:

Եթե լիներ մի հնար, դուրս կելնէի ես հողից,
Ժողովուրդիս դարունքին լույս կելնէի ես հողից,
Ինչպէս շուշան, ինչպէս մի բույս կելնէի ես հողից,
Կծաղկէի, հայրենիք, քո ամեն մի ծառի տակ:







ԳԱՆ Հիմնարար Գիտ. գրադ.



220032054

0 PVE. (10)

A $\frac{11}{32054}$